ՆՈՅԵՄԲԵՐ 1864 ԹՈՒԱԿԱՆԻ·

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ԺԱՄԱՆԱԿԸ ԱՐԾԱԹ Է.

(Շարունակութիւն և վերջ·)

ՎԵՑԵՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ·

ՆԱԽԱԳԱՀ ԱԹՈՌԱԿԱԼԸ· (Պրեզիդենտը)

Ուրեմն՝ Լոպպին՝ կշռադատումէր, թէ ինչ պիտի առնէր։ Այնքան շատ ուսած էր նա, որ կարող էր համալսարան մտանել, և այս բանս ամենայն յօժարութեամբ արած կը լինէր — բայց ո՛ր տեղից պիտի առնուր դորա նիւթական հնարները։ Ինչո՞վ պիտի հատուցանէր պարոն պրօֆեսօրներին, ինչ արծաթով պիտի գիրքեր գնէր, ինչո՞վ պիտի ապրէր երեք, այո՛ մինչև չորս տարի։ Սոքա էին այն դժուարացուցիչ խնդիրքը որ Լոպպիու կացութեան մէջ հաղիւ թէ կարող էին լուծանուիլ։ Նորա հոգաբարձու ծնողքը կարող չէին օգնել նորան, ըստ որում ինքեանք ոչինչ չունէին — դորա հակառակ, Լոպպին վերահասու էր ստուգութեամբ, որ ինքը բեռն, ծանըր, ճնշող բեռն էր նոցա վերայ, եթէ չկամէր այնուհետև ինքն վաստակել իւր ապրուստը, և նոյնպէս խելամուտ էր, թէ այնուհետև կարող չէր նոցա մօտ մնալ, եթէ չվճարէր իւր ապրուստի գինը։ Այլև, ոչինչ յոյս նա չէր դնում նոցա վերայ։ Նոքա ունէին իւրեանց բաւական հոգսերը, և Լոպպին չէր այլ ևս երեխայ, այլ լիահասակ պատանի, առողջ և բաւա-

կան զօրեղ, որ ինքը կարողանար հոգալ իւր համար։ Լոպպին կամէր և այդ իսկ — բայց ի՞նչ կերպով — Այս էր ահա՛ խնդիրը։

Լոպպին մտածում էր այս և այն բանի վերայ։ Արդեօք պիտո՞յ էր նորան վերադառնալ դէպ ի ախոռը։ Ո՛չ. նա այսուհետև յարմար չէր ախոռի գործերին, լինելով մի երիտասարդ, գլուխը գեղեցիկ տեղեկութեամբք լի։ Նա երբէք կարող չէր համբերել ախոռի կոպիտ մանուկների մէջ և ձիերը քերել քերոցով, փոխանակ սնուցանելու իւր հոգին գիտութեան կաթնով։

Արդեօք պիտո՞յ էր գրել թագաւորազնին և նորանից օգնականութիւն խնդրել։ Այդ բանը կարող էր այժ՛ յանձն առնուլ Լոպպին. բայց նախ, որ չգիտէր, թէ ու՛ր էր թագաւորազը, և եթէ որպէս և իցէ տեղեկութիւն առած լինէր այդ մասին, սակայն զարթեցան Լոպպիու մէջ երկմտութիւն և տարակուսանք, արդեօք թագաւորազը մի՞տ էր բերելու նորան։ Ո՛չ, և այս բանս զուր էր։

Մի րոպէ մտածեց Լոպպին թագաւորի վերայ. բայց թագաւորը ամենևին չէր ճանաչելու նորան դարձեալ, և այն անցքը որ եղած էր որսորդական շան մասին, որոյ փոխարէն և Լոպպին ստացել էր վճար, անտարակոյս շատուց արդէն ընկած էր մոռացութեան մէջ։ Ուրեմն և թագաւորից ոչինչ յուսալի բան չունէր անբաղդ Լոպպին։

Լոպպին տրորեց ճակատը, հարիւր անգամ սրբեց ճակատից մտատանջութեան քրտինքը, որ պայծառ կաթիլներով թորթորում էր ամենայն ծակերից, և — կամաց կամաց թևերը ցած թողեց, նորա հոգու արիութիւնը թուլացաւ, նորա յոյսերը զօսացան (ցամաքեցան) և տրտմութեամբ հառաչեց նա. «Այնու ամենայնիւ, թագաւորազը իրաւ չէ ասել, և ժամանակը արծաթ չէ։ Ո՞չ ապաքէն արդարութեամբ գործ եմ դրել դորան, ո՞չ ապաքէն ուսել ու արել եմ ամենայն բան, ինչ որ կարող էի, ո՞չ ապաքէն գլուխս լցուցել եմ ամենայն տեսակ հմտութեամբք. չէ՞ն ասում իմ բոլոր ուսուցիչքը, թէ ես նոցա առաւել ընտիր աշակերտն էի։ Այնու ամենայնիւ, ի՞նչ օգուտ ինձ այդ բոլորից։ Ի՞նչ օգուտ ինձ իմ աշխատասիրութենից, իմ ստացած հմտութիւններից։ Եւ ոչ մի պատառ հաց կարող եմ ինձ ճարել դոցանով։ Աւելի լաւ էր տակաւին, որ ես դարձեալ գնայի ձիավարժի և արքունական որսորդի մօտ և վարժէի ձիանք և շուներ, մի քանի կռօշով օրը։ Այնուհետև քաղցած մեռանելու չէի։

Եւ արդարև, ուրիշ բան ոչինչ մնում չէր անբաղդ Լոպպիուն։ Նորա հոգաբարձու հայրը եկաւ և ասաց նորան ամենևին ցամաք կերպով, թէ Լոպպին արդէն բաւական հասակաւոր էր, որ ինքը իւր աշխատանքով ճարէ իւր հացը. միւսերը կարող չէին հոգալ նորա համար, նա ինքը պիտի հոգայ իւր համար։ Լոպպին, ձայնը կտրած, յանձն առաւ այդ խօսքերը, և խնդրեց միայն ութ օր ժամանակ — մինչև այդ կ'անցանէր, անպատճառ գտանուելու էր նորա համար որ և իցէ ճանապարհ։ Ութօրեայ ժամանակ շնորհեցին նորան, բայց ամենաճիշդ հաւաստութեամբ, որ դորանից յետոյ Լոպպին անպատճառ դուրս գնար տանից և աշխատէր, ինքն ըստ ինքեան կառավարել իւր գլուխը աշխարհիս մէջ։

Նորա վերայ կարող չէր Լոպպին տհաճիլ, բայց վշտացուցիչ էր նորան, որ իւր հոգաբարձու մայրը, տիկին Քինդերլէյնը առաւօտ ու երեկոյ ծաղր էր անում նորան և թագաւորազնին, և այն գեղեցիկ խօսքին, որ Լոպպին այնպէս յաճախ կրել էր իւր բերանում։

«Ժամանակը արծա՜թ է», ասում էր այդ կինը ծաղրածութեամբ։ Ո՞ւր է արծաթը։ Ես ոչինչ տեսանում չեմ։ Քո շատ ու շատ ուսմամբդ նոյնքան և տխմար ես դու այժմ, որպէս յառաջ, Լոպպի։ Աւելի լաւ արած կը լինէիր դու, եթէ մնացած լինէիր ախոռում։ Այն տեղ գոնեայ ունեցած կը լինէիր քո հացը, և քո սեղանը միշտ պատրաստ էր, և դէպ ի մահ աշխատելու տեղեք չկար քեզ։ Բայց ո՛չ. թագաւորազը պիտի գար և այդ յիմար տղայի գլուխը լցնէր մեծ մեծ բաներով, և այդ յիմար մանուկը իսկոյն պիտի հալած իւղի տեղ առնուր ամենայն խօսք և այդպիսի թեթևահաւատութեամբ ձեռնից թողէր իւր բաղդը, և իւր արծաթը պատուհանից դուրս ձգէր։ Գնա՛, Լոպպի։ Քո բոլոր ուսումնականութեամբ ոչ մի կտոր դուրս քարշելու չէիր իւր տաք տեղից։ Ժամանակը արծա՜թ է. յիմա՜ր խօսք ու զրոյց։ Ո՛ւր են ապա այն մեծ արծաթագլուխքը։ Ահա՛ տեսանում եմ, որ դու քո բոլոր ուսումնականութեամբ և քո պլաղգի լեզուախօսութեամբ պիտի միայն քարեր ջարդես ճանապարհի վերայ։ Ուսո՜ւմն. յիմա՜ր գործ։

Այսպէս էր խօսում Քինդերլէյն կինը առաւօտ ու երեկոյ, և Լոպպին չունէր անգամ համարձակութիւն պաշտպանելու իւր անձը, այլ պիտի լուռ մնար, ինչ որ և անէին. որովհետև իրա՛ւ շատ խախուտ էին երևում նորա գանձերը և հարստութիւնքը։ Սակայն, կամաց կամաց դարձեալ վե՛ր ուղղեց իւր անձը և արիութեան հոգի առաւ, Ո՞չ ապաքէն այնքան շատ մարդիկ ապրում էին աշխարհի վերայ, առանց քաղցած մեռանելու, ուրեմն և նորա համար գտանուելու էր մի ճանապարհ հացի։ Եթէ գործը շատ վատ գնաց, նա կարող էր միշտ ախոռի սպասաւոր դառնալ կամ թէ պաշտօն գտանել ձիավարժի մօտ — ուրեմն ի՞նչ հարկաւոր էր ամենևին և բոլորովին հուսահատուիլ։ Դեռ և այնպէս վատ ընթացած չէին գործերը։

«Մի՛ մարդ, որ ուսել է ինչ որ կարող էր ուսանիլ, մի մարդ, որ խօսում է երեք լեզուով, գտանելու է իւր համար մի պատսպարան», ասաց Լոպպին ինքն իւրեան։ Միայն հարկաւոր էր խնդրել դորան։ Մի՞թէ կարող չէր ուսուցիչ լինել. մի՞թէ կարող չէր մի վաճառականի մօտ գրագիր կամ թէ մինմանապիսի գործակատար դառնալ։ Վե՛ր կաց, Լոպպի, աչքդ բացի՛ր և նայի՛ր չորս կողմդ։ Ով որ խնդրում է, նա գտանում է վերջումը»։

Ասա՛ց ու արե՛ց։ Լոպպին սկսաւ վազել փողոցները վեր ու ցած, դրեթէ տնէ տուն, Պիղատոսից դէպ ի Կայիափա դիմելով, առաջարկում էր ամենեցուն իւր սպասաւորութիւնքը, բայց ամենքեան մերժեցին նորան։ Մինի աչքում երևում էր նա շատ մանուկ, միւսը կարօտ չէր նորան, այլ միւսը և ուշադիր իսկ չեղաւ նորան — կարճ ասեմ, բոլոր դուռները փակ մնացին Լոպպիու համար, և արդէն ութօրեայ պայմանից անցած էին եօթն օր, բայց Լոպպին դեռ և ոչինչ յաջողութիւն գտել չէր։ Արդա՛րև, այս կարող էր վհատեցնել ամենաքաջ մարդը։ Մի օր, մի հատ օր և, վերջինը—

այնուհետև պիտի նա լսէր. «Տանից դո՛ւրս» և անբաղդ Լոպպին անխնայ և անողորմաբար դուրս էր ձգած դէպ ի փողոց։ Եւ նա չունէր տակաւին համարձակութիւն զանգատել դորա վերայ. պատճառ, նորա հոգաբարձու ծնողքը նոյն- ևս չէին այլապէս վարուիլ, եթէ չկամէին ինքեանք զրկել իւրեանց անձը և սոված մնալ։ Լոպպին, այո՛, խելամուտ եղաւ, որ այլևս ոչինչ մնում չէր նորան, եթէ ոչ, վերադառնալ դէպ ի ձիանքը. պատճառ, այլ հնարքի ելք գտանելու յոյս երևում չէր։ Եւ յետո՞յ։ Այնուհետև նա պիտի յաւիտեան հրաժարուէր իւր գրքերից. որովհետև, միանգամ ձիադարման պաշտօնեայ դարձած, այլ ևս ժամանակ ունենալու չէր նա ուսումնասիրել։ Եւ ինչ խորհուրդ ունէր ուսումնասիրութիւնը, Ո՞չ տպաքէն տեսանումէր նա, որ իւր բոլոր ուսումնասիրութիւնը և գրագիտութիւնը և ոչ կիսով չափ այնքան օգտակար էր, որչափ մարմնաւոր աջողակութիւնը ձիընթացութեան մէջ։

Այս մտածութիւնը ամենևին արդէն վհատեցրեց անբաղդ Լոպպիու սիրտը և անպատմելի տրտմութիւն պատրաստեց նորան, այնպիսի տրտմութիւն, որ նա խկոյն կամեցած կը լինէր նստել այն տեղ և լալ։ Իւր տրտմութիւնը թաքուցանելու համար, նա վեր կալաւ գդակը և դուրս վազեց դէպ ի արձակը, անտառի ու սարերի մէջ։ Այս տեղ ոչ ոք տեսանում չէր նորան, այս տեղ ոչ ոք ծաղր առնող և արհամարհող չկար, և նա կարող էր գոնեայ ազատ ընթացք տալ իւր զգացողութիւններին, առանց զայթակղութեան կամ թէ կծու խօսք ու զրուցի տեղիք տալու միւսերին։

Այժմ, ասենք ճշմարիտը, Լոպպին գործ դրեց պատեհ միջոցը, ցած ընկաւ մի հին կաղնու տակ, սեղմեց երեսը պարարտ մամուռի վերայ և սրտի կամեցածի պէս դուրս արտասուեց իւր ցաւ ու վիշտը։ Այս բանս թեթևացրեց նորա սիրտը և տուեց նորան զօրութիւն խաղաղութեամբ մտածելու ապագան։ Իւր հացը վաստակել իբրև ձիադարման պաշտօնեայ, այլ ևս չէր նորան ահաւոր երևում։

«Մի՞թէ այդ մի վատ բան է», ասումէր նա ինքն իւրեան, վեր ուղղելով իւր անձը և սրբելով արտասուքը իւր երկար արտևանունքից։ Ի՞նչ հարկաւոր էր ինձ քրթմնջել, լալ և գանգատել։ Մի՞թէ ձիադարման պաշտօնեան չէ նոյնպէս մարդ և չէ վաստակում իւր հացը պատուաւոր կերպով։ Մի՞թէ իրաւունք ունէի մեղադրելու արքայազնին, որ նա ասել է ինձ. «Ժամանակը արծաթ է։ Մի՞թէ բռնաւորումեն ինձ իմ հմտութիւնքը, որ ես ստացել եմ ինձ։ Մի՞թէ ժամանակը ամենևին և բոլորովին կորած է, որ ես անցուցել եմ ուսանելով։ Մի՞թէ վաղ կամ յետոյ գալու չէր դեռ ևս մի օր, երբ կարող եմ ես գործ դնել իմ գիտութիւնը և օգուտ քաղել նորանից։ Ծիծաղելի՛ է, Լոպպի, ծիծաղելի՛ է, որ դու կարող էիր այդքան խոր վհատուիլ և թուլանալ, որովհետև հողմը մի փոքր խոշորաշունչ փչումէր քո վերայ։ Քաջալերութիւն, Լոպպի, քաջալերութիւն և համբերութիւն։ Կը գայ ժամանակը և կը բերէ ճար ու դեղ. Հռոմը չէ մի օրում շինուած։ Էգուց կ՚երթամ ձիավարժի մօտ և կը խնդրեմ նորանից ձիադարման սպասաւորի պաշտօն — միւս բաները ապա կը յարմարուին։

Եթէ թագաւորազնի խօսքը իրաւ է, երբ և իցէ իմ արծաթագլուխը պիտի տոկոսիք (շահ) բերէ։ Գլխաւոր բանը կայ, նոյն իսկ արծաթագլուխը, որ ես ժողովել եմ, իմ ժամանակս գործ դնելով ըստ իմ կարողութեան։ Եւ արծաթագլուխը գոնեայ կարող չէ կորչել երբէք, թէպէտ և առ ժամանակ ոչինչ տոկոսիք չէր բերում»։

Այսպէս էր մտածում Լոպպին, այսպէս էր ինքն իւրեան յոյս տալիս և քաջալերում. այսպէս աշխատում էր նա հաշտուիլ կեանքի անփախչելի ցաւերի հետ։ Մի վերջին ելք հնարքի յանկարծ միտն եկաւ նոյնպէս։ Նա ունէր տակաւին այն լուիդօրը, որ թագաւորազն Ադելբերտը ընծայել էր նորան։ Եթէ նա գնար մի հոգաբարձական դիւանատուն և գործակատարին վճարէր իւր փոքրիկ գանձը, որ և իցէ պաշտօն ճարելու նորա համար — գուցէ սա ճարէր նորա համար այն մի պաշտօն, ուր գոնեայ չէր տանելու նա կարօտութեան և կարող էր պարապ միջոցներում ուսանիլ և յառաջադէմ լինել։

Բայց նա մերժեց և այս խորհրդածութիւնը դարձեալ. պատճառ, նա կարող չէր բաժանուիլ այն արծաթի դահեկանից, որ արդէն այնքան ժամանակ հաւատարմութեամբ պահպանել էր իբրև ապացոյց իւր տնտեսութեան։

«Ո՛չ», խօսեց նա քթի տակում, փոքր ինչ մտածելուց յետոյ — «ո՛չ, երբ որ թագաւորազը կը վերադառնայ մի օր, կամիմ նորան ապացուցանել, որ ես նոյնպէս կարող էի տնտեսութեամբ վարուիլ արծաթի, որպէս ժամանակի հետ։ Բանը պրծած է — ես դարձեալ կ'երթամ դէպ ի ախոռը»։

Այս մտքիս վերայ անխախտելի հաստատ մնաց Լոպպին։ Նա սրբեց երեսից վերջին արտասուքի հետքը, վեր կացաւ և դարձեալ դիմեց դէպ ի քաղաք, որ իսկոյն յանձն առնու իւր պաշտօնը իբրև ձիանքի սպասաւոր արքունական ախոռում։ Բայց նորա ոտերի մէջ ասես թէ արճիճ կար, գնացքը շատ ու շատ ծանրացաւ նորա համար և նա հազիւ կարող էր շարժուիլ տեղից։ Ակամայ վեր կալաւ նա պտոյտ պտոյտ ճանապարհներ, փոխանակ ուղիղ շաւղով յառաջ գնալու, և այդպէս հասաւ անտառի մի հեռաւոր տեղի, ուր մի սակաւակոխ, զառ ի վայր անտառային ճանապարհ մի բարձր սարից տանում էր դէպ ի ցած։ Ներքևում, այդ ճանապարհը սրանկիւն թեքվում էր, որ հեռանայ մի անդունդից, որ ուղթուն մինչև հարիւր ոտնաչափ ցած էր իջանում դէպ ի մի անտառային վտակի ապառաժեայ ձոր։ Զառ ի վայրը գահավէժ և վայրասոյզ էր, և սայլապանքը, որ անցանում էին այդ ճանապարհը, խոր, սարերի մէջ դրած փայտահանքերից փայտ կրելու դէպ ի քաղաքը, պարտ էին ամենամեծ զգուշութեամբ վարուիլ, որ առանց վնասի անց կենային անդունդի մօտից։ Թէպէտ շինած էր մի տեսակ վանդակ բաւական ամուր գերաններից, ամենավտանգաւոր տեղում, բայց վերևից սրընթաց դէպ ի ցած գլորուող մի սայլի կարող չէր այդ արգելքը շատ դիմանալ։ Դա, երբ որ ծանրութիւնը սաստկութեամբ զարկուել էր դորան, կամ պիտի ջախջախուէր, և այնուհետև սայլը դորա

վերայից անց կենար, կամ թէ արգելքը դիմանար ծանրութեանը, և այնուհետև անպատճառ ամեն մի կառք պիտի ջարդ ու փշուր լինէր հազար հազար կտոր։

Լոպպին այս վատ և անպիտան տեղում մի քանի րոպէ հանգստանալով, կշռադատութիւնք էր առնում դորա վերայ իսկապէս, և ահա մի հեռաւոր, աղօտահնչիւն ձայն անիւների գլորման, որ անսովոր արագութեամբ մօտենումէր և իսկոյն դորանից մարդկային ձայների դէպ ի օգնութիւն կանչող հնչիւն յանկարծ սասանութիւն բերեց նորա վերայ։ Լոպպին թէպէտ կարող չէր թանձր թուփերի պատճառով տեսանել մի բան, բայց այս տեղ պիտոյ չէր շատ սրամտութիւն, որ գուշակէր նա, թէ մի սայլ զառ ի վայր սարից ցած էր գլորվում և զարհուրելի արագութեամբ շտապումէր դէպ ի վտանգ սպառնացող տեղը։ Օգնութիւն աղաղակող ձայնը հետ զհետէ աւելի պայծառ հնչումէր Լոպպիու ականջին. անիւների գլորման հետ խառնուեցաւ վայրենի վազող ձիանքի սմբակաշարկութիւնը, և այժմ, մի ոլոր ճանապարհի մօտից թեքուելով երևեցաւ նոյն իսկ սայլը, կայծակի արագութեամբ, երկու սանձակտոր եղած ձիերի քամակում յառաջ գլորուելով, իսկ ձիանքը սաստիկ արշաւանքով, կուրօրէն և կատաղի վազելով դէպ ի անդունդը։ Եւս մի քանի րոպէ, ահա ձիանքը, սայլը ձիավարը և պարոնը պիտի սարսափելի կերպով ջարդուփշուր եղած կործանուէին անփրկելի, եթէ մի վճռական գործողութիւն այդ ձախորդութիւնը չդարձուցանէր նորանից։

Արագ վճռականութեամբ մտածեց Լոպպին, թէ ինչ պիտոյ էր առնել։ Ձիանքը նոցա կատաղի վազողութեան մէջ դադարեցնել, անկարելի էր։ Բայց գուցէ յաջողուելու էր նորան, ի հարկէ իւր կեանքը վտանգի տակ դնելով, ձիանքը իւրեանց վտանգաւոր ուղղութենից դէպ ի այլ կողմ թեքել, և դէպ ի աջ ու ձախ անտառի մէջ վարել, ուր ծառերը շատ շուտով վերջ կը դնէին նոցա կատաղի արշաւանքին։

Դարձեալ միանգամ աչք ձգեց Լոպպին փոշեղէն ամպերի պտոյտի մէջ դէպ ի յառաջ արշաւող սայլի վերայ։ Ձիանքը փրփրած թռչումէին, որպէս թէ կամէին սրընթաց փոթորկի հետ ելևելք առնել. սանձերը, ահաբեկուած ձիավարի ձեռքից ցած ընկած, քարշէին գալիս գետնի վերայ. ձիավարը մեռածի պէս գունաթափուած, իւր տեղում նստած, կցել էր ձեռները և աղաղակումէր յուսահատ ձայնով. բայց սայլի ներսում նստած էին մի պարոն և մի կնամարդ. պարոնը ձիավարի հետ միասին հառայ էր տալիս, որ օգնութիւն հասուցանեն, մինչ անբաղդ աղջիկը կիսով չափ ուշաբարձուած, յետ էր թեքուած բարձերի մէջ և գունատուած, որպէս մարմարիոն, անթարթափ աչքով, ահափետուած, նայումէր հետ զհետէ աւելի մօտաւորուող և սպառնալից վտանգին։

Այժմ հարկաւոր էր օգնութիւն։ Լոպպին, այդ վեհանձն պատանին չմտածեց այլ ևս իւր գլխի վերայ, այլ միայն վատաբաղդների վերայ, որոց մօտահաս էր մի սարսափելի կորուստ։ Մի մեծ գաւազան բաց ճեղքեց նա մօտակայ փայտակուտից, վեր վազեց դէպ ի սարը, ուղիղ կատաղի ձիանքի

հանդէպ, որոց թևաւորուած սմբակների տակ կրակի կայծեր էին թափվում գայլախազ քարերից, բարձրաձայն հառայ տալով ոտք կոխեց նոցա ճանապարհի մէջ. կատաղած անասունքը տեսանում ու լսում չէին, կոյր և վայրենացած արշաւումին յառաջ. գալոց րոպէին պիտի անբաղդ Լոպպին ոտնակոխ լինէր ձիանքից և սայլի անիւների տակ ջարդ ու փշուր լինէր, եթէ չթռչէր դէպ ի մի կողմ։

Արդա՛րև Լոպպին տեսանումէր վտանգը — բայց նա կանգնած, ամո՛ւր կանգնած էր իբրև մի կաղնու ծառ և դարձեալ որոտաձայն հառայ տուեց դէպ ի կատաղած ձիանքը։ Զո՛ւր ջանք. Նոքա փոթորկի պէս յառաջ էին վազում — մի րոպէ ևս, ահա և՛ Լոպպին և՛ ամենեքեան կորած պիտի լինէին։

Այս տեղ, վճռողութեան վերջին րոպէում, երբ որ փրփրած ձիաների տաք շունչը շօշափեց արդէն Լոպպիու երեսը, երբ որ ահա Լոպպին նոցա սմբակների տակ, ասես թէ, պիտի անյայտանար, նա բարձրացրեց իւր գաւազանը և ճայթեցրեց անասունների ճակատի վերայ։ Ձիանքը դէպ ի յետ խրտնեցան, որպէս թէ կայծակից զարկուած, մի րոպէ դադարեցաւ սայլը, ապա վախեցած ձիանքը դէպ ի մի կողմ խրտնեցան, շեղ ուղղութեամբ ճանապարհից թեքուելով վազ տուեցին անտառի ներսը, մի քանի րոպէ քարշեցին քամակից սայլը խորտաբորտ ճանապարհով, բայց հանդիպելով կաղնու և բոխենու ծառաստանի թանձրութեանը, դողալով ու հևալով դադար առան, որ ճակատները ջարդուփշուր չաւնեն ծառերի հինօրեայ հաստ բուների վերայ։ Գունաթափ դէմքով բաց թռաւ տեղից ձիավարը և բռնեց սանձերը, որով դարձեալ հնազանդեցրեց ձիանքը իւր իշխանութեան տակ։ Լոպպին մօտ վազեց, սայլի դռնակը բացեց և օգնեց ծեր պարոնին և նորա կիսով չափ ուշաբարձուած ուղեկից կնամարդին դուրս գալու սայլի միջից։

«Այս էր օգնութիւն, հարկաւորութեան րոպէում», խոր հոգոց հանելով ասաց ծեր պարոնը, երբ որ իւր ահից ու դողից և համբերած տագնապից փոքր ինչ հանգստացած էր։ Ի՛նչպէս ես դու, իմ աղջիկ. սիրտդ փոքր ինչ թեթևացած է»։

«Փա՛ռք Աստուծոյ, հայր իմ — միայն թէ դեռ ևս փոքր ինչ թոյլ եմ այն զարհուրելի վտանգից, որ այնքան մօտահաս էր մեզ», պատասխանեց պատանի կնամարդը։ «ամենամեծ Աստուած, ի՛նչ պիտի եղած լինէր մեր վերջը, եթէ քաջասիրտ պատանին եղած չլինէր։ Արիւնս սառչումէ երակներիս մէջ, երբ որ մտածումեմ մեր ահարկու վիճակի վերայ»։

«Այո՛, ո՛վ պատանի», դէմքը դարձուց ծեր պարոնը դէպ ի Լոպպին — յիրաւի՛ մեք պարտական ենք մեր կեանքը Ձեզ, և ես մոռանալու չեմ այդ շնորհը։ Ո՞վ էք Դուք։ Ես եմ բօթ անուն Պրեզլիդենտը, և եթէ որ և իցէ բանով կարող եմ օգտակար լինել, ապա գտանելու չէիք ինձ ապերախտ։ Բայց ասացէք շուտով, թէ ո՛վ էիք Դուք։

Լոպպին չծածկեց իւր որպիսութիւնքը։ Արդարութեամբ և յայտնութեամբ պատմեց նա իւր յառաջգայութիւնը, իւր գլխի անցքը և որ-

պիտութիւնքը, այլև չթաքցրեց թէ ի՞նչ վատ կացութեան մէջ գտանվումէր սոյն այս րոպէիս։ Նորա համեստ, քաղցր և բաց ու պարզ ընթացքը, երևումէր, թէ հաճելի էր Պրեզիդենտին։

«Բարի՛ է, բարի՛ է», ասաց նա։ Տեսանումեմ արդէն, որ կարող էի մի բանով պիտանի լինել Ձեզ։ Ուրեմն Դուք ներկայումս զուրկ էք ամենայն ապրուստից և յոյս ևս չունիք իսկոյն գտանել դորան. բայց ցանկանումէիք յառաջադէմ լինել։ Այսպէս չէ՞։

«Ամենևին այդպէս, պարոն Պրեզիդենտ», պատասխանեց Լոպպին։

«Եւ Դուք կարող էք կարդալ, գրել, համարել. այսպէս չէ՞։ Գուցէ գրումէիք մի վայելուչ գրչով։»

«Գոնեայ պարզ և ուղիղ, պարո՛ն Պրեզիդենտ։

«Այդ բաւական է։ Բաց ի դորանից ի՞նչ բաների հմուտ էք Դուք։ Կարո՞ղ էք գրաւոր կերպով բացայայտել Ձեր միտքը»։

«Կարծեմ այո՛», պատասխանեց Լոպպին ժպտելով, «թէպէտ կարող չեմ քարոզել իմ անձը մի առանձին ընտիր ոճով շարադրող։ Բայց, երբ որ ես ուսանումէի անգլիարէն և ֆրանսիարէն, ստացել եմ գոնեայ փոքր ինչ վարժութիւն։

«Ի՞նչ էք ասում. Դուք գիտէ՞ք և անգլիարէն ու ֆրանսիարէն։ Դուք և խօսո՞ւմէք այդ լեզուքը։

«Իմ ուսուցիչքը գոհ էին ինձանից», պատասխանեց Լոպպին։

«Այ զարմանալի՜ բան. մի սպասաւոր ախոռի, բայց խօսումէ զանազան լեզուներ», ձայն արձակեց Պրեզիդենտը մեծապէս հիացած։ «Կեկելիա՛, խօսի՛ր դու մի փոքր դորա հետ։

Պրեզիդենտի դուստրը փոփոխակի հարցրեց նորանից անգլիարէն և ֆրանսիարէն զանազան նիւթերի մասին, և Լոպպին դոյն իսկ լեզուներով այնպէս քաջ և ուղիղ պատասխան տուեց, որ ազնիւ աղջիկ Կեկելիան կարող չէր թաքցնել իւր հիացքը։

«Դա խօսումէ աւելի լաւ, քան թէ ես, հայր իմ», ասաց աղջիկը։ Այդ արժանի է ուշադրութեան։ Ես սկսեալ իմ մանկութենից ուսած եմ, իսկ նա հազիւ թէ մի տարուց, ինչպէս ասել է ինձ։ Ի՛նչպէս ժրաջան պիտի նա եղած լինի։

«Յիրաւի՛», պատասխանեց Լոպպին, «յիրաւի։ Ժրաջան էի ես և պարտ էի լինել։ Ժամանակը արծաթ է, գիտէ՞ք Դուք, և ինչ որ ես ուսանումէի, իմ համար էի ուսանում»։

Պրեզիդենտը շուարուեցաւ և սուր աչքով չափեց Լոպպին։ «Արդա՛րև», ասաց նա, «եթէ Դուք այդպէս լաւ հասկացել էք ժամանակի արժանաւորութիւնը, ուրեմն և ապագայում բարւոք գործ դնէք նորան։ Իմ դիւանատնումս արձակ է մի գրագրի տեղ, ես այդ առաջարկումեմ Ձեզ։ Թէպէտ թոշակը երևելի չէ — միայն երեք հարիւր թալեր տարին — բայց միանգամ ներս մտած պաշտօնի մէջ, դժուար լինելու չէր Ձեզ յառաջ գնալ, եթէ աշխատասէր ու ժրաջան էիք։ Դուք կարող էք յառաջադէմ լինել մինչև գաղտնի գործերի ատենադպրի պաշտօն։ Ես կը հովանաւորեմ

Ձեզ և կը լինիմ Ձեր ջատագով, երբ հարկաւոր էր։ Բաց ի սորանից, բաց է Ձեր առաջև իմ դիւանատան մատենադարանը։ Եթէ սորանից աշխատասիրութեամբ կամիք օգուտ քաղել, ապա գրքերից, գործադրութեան հետ միասին, կարող էք նոյնքան կամ աւելի ևս ուսանիլ քան թէ համալսարանում։ Մտածեցէք գործը։ Եթէ ձեռնտու է Ձեզ պաշտօնը, Դուք կարող էք վաղուն արդէն ներս մտանել»։

Լոպպին չգիտէր, արդեօք արտասուէ՞ր թէ ծիծաղէր ուրախութենից։ Մի այսպիսի բաղդաւորութիւն, որպիսի այժմ, յանկարծ, ասես թէ, երկնքից ցած էր ընկել նորա գոգը, երբեք համարձակուած չէր յուսալ և ոչ իսկ երազում տեսանել։ Երկք հարիւր թալեր — յոյս յառաջադէմ լինելու — մի ամբողջ մեծ մատենադարան գրքերով լիք, ուստի կարող էր նա արձակ համարձակ օգուտ քաղել — փոքր էր մնացել, որ նա ընկնէր Պրիզլիցնիտի ոտքը և համբուրէր նորա առատապարգև ձեռները։

«Աստուա՜ծ իմ. պարոն Պրիզլիցենտ, այդ ո՞րպիսի բաղդաւորութիւն է», թոթովեց Լոպպին, երբեմն կարմրելով, երբեմն գունաթափուելով սրտի երանական խնդութենից — այդ տեղ ոչինչ այլ ևս մտածելի բան չկայ։ Հազար ու հազար ուրախութեամբ ընդունում եմ այդ պաշտօնը և չգիտեմ ուր գտանել խօսքեր բացայայտելու Ձեզ իմ շնորհակալութիւնս։ Ո՜վ իմ Աստուած. Դուք դորանով շինումէք ինձ ամենաբաղդաւոր մարդը աշխարհիս վերայ»։

«Հանդարտեցէք, հանդարտեցէք» — ասաց Պրիզլիցենտը ժպտելով. հարկաւոր չէ չափազանցութիւն, պատանի։ Ես ուրախ եմ, որ ինչ և իցէ չափով կարող եմ փոխարինել Ձեզ այս րոպէիս մեզ ցոյց տուած սպասաւորութիւնը։ Խնդիրը աւարտած է, և Դուք չունիք պատճառ շատախօսութիւն անելու։ Իմ Ձեզ առաջարկած պաշտօնը մի մեծ բան չէ. բայց, որպէս ասացի, եթէ դուք այնպէս ջանասէր և ժրագլուխ էք, որպէս կարծումեմ ես, այնուհետև աւելի յառաջ կ'երթայ ձեր գործը։ Այժմ, Յովհաննէս, ինչպէս է սայլը և ձիանքը»։

«Ամենայն բան դարձեալ կարգի է, ողորմած տէր», ասաց ձիավարը, որ մինչ այս, մինչ այն, նոյնպէս հանգստացած էր իւր ահաբեկութենից, բայց արդարև կարծումէր, թէ խիստ յանդիմանութիւնք պիտի ստանայ իւր տիրոջից. «Ներեցէք ինձ, որ այս ձախորդութիւնս պատահեցաւ ինձ — բայց այդ բանը իմ կարողութեան տակ չէր»։

«Ինձ շատ լաւ յայտնի է այդ, Յովհաննէս», պատասխանեց Պրիզլիցենտը քաղցրութեամբ — «բարձրումը, մեզանից շատ մօտ հրացան արձակուեցաւ, ձիանքը խրտնեցան, սանձերը դուրս խլեցին քո ձեռքից, փախան, և այնուհետև ի հարկէ կարելի չէր դադարեցնել նորանց։ Բայց Դու համբերել ես ոչ սակաւ ահի ու դողի քան թէ մեք, և եթէ դու մի սխալանք ևս արած լինէիր, դորա փոխարէն դու արդէն բաւական պատժուած ես։ Ոչինչ խօսելի բան չկայ այդ մասին։ Ձիանքը հանդարտ են»։

«Հանդարտ են որպէս գառներ, տէր։ Անբաղդ ձիանքը։ Նայեցէք միայն, թէ ինչպէս նոքա լուռ ու մունջ էին և գլուխները ցած թողած։

Եթէ հրացանի թնդիւնը այնպէս մօտ եղած չլինէր նոցա ականջներին, երբեք վայրենացած չէին լինելու, և փախչելու չէին։ Եւ նոքա անմեղ են, պարոն Պրէզիդենտ, ուղիղն ասեմ։ Միամիտ եղէք և անկասկած ներս մըտէք սայլի մէջ ողորմած տիկնոջ հետ. այլ ևս ոչինչ աւելի պատահելու չէ մեզ»։

Ձիանքը արդարև դարձեալ ամենևին հանդարտած ու հեզացած էին. և Լոպպին հաւատացրեց, որ այլ ևս ոչինչ վտանգ խիթալի չէր, և այսպէս Պրէզիդենտը իւր աղջկայ հետ միասին դարձեալ ներս մտաւ կառքը։ Ցօժարութեամբ վեր կալած կը լինէր իւր հետ և Լոպպին, բայց կառքը փոքր էր և չունէր աւելի տեղ. այլև Լոպպին ասաց ամենևին պարզաբար, թէ ինքը ուրախ էր ոտով գնալ, որ իւր բաղդաւորութիւնը, որ տակաւին անհաւատալի էր երևում իւրեան, որոճայ և վայելէ իւր սրտում։ այսպէս, քաղցր հրաժարական ողջոյն տալուց յետոյ, Պրեզիդենտը հեռացաւ արշաւակի։

«Ուրեմն եգուց վաղը կը լինիս դիւանատնում, իմ պատանի բարեկամ», դէպ ի Լոպպին ձայն տուեց նա, երբ որ արդէն կառքում նստած հեռանումէր։ «Չմոռանաք. գործը վճռած է, մինչև կրկին տեսութիւն»։

Գլորուեցաւ, հեռացաւ սայլը, և Լոպպին նայումէր նորա քամակից, որպէս մի երազ տեսանող։ Երկար միջոց մնաց նա կանգնած և ականջ էր դնում սրընթաց անիւների վերջին, օդի մէջ ցնդուող շառաչիւնին, և բաղդաւորութեան զգացողութիւնը իւր սրտի մէջ ճառագայթուեցաւ նորա հայեացքից և երանական ժպտուն երեսի գծագրութիւններից։ Ապա ժողովեց զօրութիւնքը, ցնծացաւ ձայնարկելով կանաչ ծառաստանի մէջ և վերջապէս գոհաբանական խաղաղ աղօթքով վերուղղեց հայեացքը դէպ ի երկինք, որ այդպէս անակնկալ և անկարծելի հասուցել էր նորան մի այդպիսի անպատմելի բաղդաւորութիւն։

«Որպիսի փոքրոգի տխմար էի ես, որ կարող էի անյոյս լինել իմ ապագայից և յաջողութենից», ձայն տուեց նա։ Ո՜հ, ինչպէս գեղեցիկ դարձեալ արդարացաւ իմ վերայ թագաւորաշնի խօսքը։ Ժամանակը արծաթ է։ Եթէ իմ ժամանակս գործ դրած չլինէի, եթէ ուսած չլինէի, եթէ ամեն մի ժամ ամենայն զօրութիւն գործ դրած չլինէի հմտութիւնք ժողովելու, ապա Աստուած պարգևելու չէր ինձ այս բաղդաւորութիւնը։ Ժամանակը արծաթ է. ժամանակը արծաթ է։ Այսուհետև հոգաբարձու մայրս ծաղր անելու չէ ինձ և իմ խօսքիս, թէ ժամանակը արծաթ էր։ Նա հասուցել է ինձ մի շահաւէտ պաշտօն, երեք հարիւր թալեր տարեկան թոշակ և բաց ի դորանից մի ամբողջ պատուական գանձ ուսումնատու գրքերի։ Ինչ պիտի ասէին տանը, եթէ իմանային, որ ես այսուհետև կարօտ չէի գնալու ախոռը և ախոռի սպասաւոր դառնալու, եթէ լսէին, որ ես պաշտօն եմ ստացել, պաշտօն պարոն Պրէզիդենտի դիւանատնում հաստատ թոշակով, այլև յուսադրութեամբ, որ աւելի յառաջ կ'երթայի։ Այդ տեղ աչքերը չորս չորս կ'անեն։ Այո, այո, հոգաբարձու մայր, պարոն թագաւորաշը այնու ամենայնիւ սուտ չէ ասել։ Որչափ հիացք պիտի գայ դոցա վերայ»։

«Այսպէս էր խօսում և մռմռում Լոպպին քթի տակ, շտապ քայլերով, ճառագայթուած աչքերով, վառուն թշերով և ուրախութեան պայծառ կրակը սրտում, անտառի միջով վազ տալով դէպ ի քաղաքը։

«Այ, ինչ է պատահել քեզ, Լոպպի», ասաց Քինդերլէյն կինը, երբ որ տղան ներս էր մտած սենեկի մէջ։ Քո երեսից երևում է, որպէս թէ մի աստղ է ցած իջել գլխիդ վերայ»։

«Այո, հոգաբարձու մայր, մի աստղ», պատասխանեց Լոպպին — մի բաղդի աստղ ծագել է իմ համար։ Ականջ դիր, թէ ինչ է պատահել ինձ անտառում»։

Եւ պատմեց Լոպպին, և Քինդերլէյն կինը ջերմեռանդութեամբ լսում էր, միայն երբեմն ձայն արձակելով հիացքից, ահից կամ ուրախութենից. վերջապէս, երբ որ նա ամենը իմացել էր, այնուհետև չգիտէր դարձեալ, թէ ինչ ասէ զարմանքից ու հիացքից։ Նա բոլոր երեկոն ձայնը բաւական մեղմել էր, և ոչ միանգամ, այո միանգամ իսկ ծաղը չարեց Լոպպիու խօսքի վերայ և ամենևին ոչինչ չյիշեց այդ մասին։ Միայն յառաջ քան թէ գնացել էր քնելու, տակաւին մի խօսք մռմռաց քթի տակին։

«Այդ կայծակնայի՜ն տղան», ասաց կինը։ Վերջապէս իրաւ է դա, իւր թագաւորազնի հետ միասին։ Ժամանակը արծաթ է. ժամանակը արծաթ է։ Ո՜վ յիմարիս, որ այդ չեմ գիտացել, երբ տակաւին մանուկ էի և ուսումնարան էի երթում։ Ի՛նչպէս յիմար, յիմա՜ր եմ եղած ես»։

Սորանով գնաց նա հանգստանալու, և Լոպպին շատուց տեսած չէր մի այդպիսի քաղցր երես Քինդերլէյն կնոջ վերայ, որպէս միւս առաւօտուն, երբ դա իւր պարոն որդեգիր պաշտօնակալին մի յատկապէս նորա համար եփած պատուական բաժակ ղահուէ դրեց նորա առաջև իբրև նախաճաշիկ։ Եւ այս պատուին դեռ ևս արժանացած չէր Լոպպին։ Բայց արդարև ժամանակը արծաթ է, և արծաթը — կարողութիւն է։

ԽՕԹՆԵՐՈՐԴ ՑՈՂՈՒԱԾ.

ԳՐԱԳԻՐԸ.

Մինչև այս աստիճանը յառաջադէմ էր եղած Լոպպին։ Նա մի տղամարդ էր տէրութեան մէջ, արդարև ոչ մեծ տղամարդ, այլ միայն ամենևին փոքրիկ գրագիր, բայց այդ արգելք չէր իւր անձը այնպէս երջանիկ զգալու, կամ թէ աւելի երջանիկ քան թէ մինիստրը և նորա խորհրդականքը։ Եւ ի՞նչ էր պակաս նորան։ Նա աւելի բաղդաւորուած էր քան թէ երբ և իցէ երևակայել ու յուսացել էր, և, բաց ի դորանից, ապագայքը ծաղկափթիթ վարդակարմիր լուսով տարածուած էր նորա աչքի առաջև։ Միանգամ ոտք կոխելով սանդուղքի վերայ, նա ունէր միայն աշխատելու, ուսանելու, իւր ժամանակը գործ դնելու, որ սանդուղքի վերայ աստիճան առ աստիճան վեր գնար մինչև ամենավերին կատարը։ Այս բանս գտնեայ

յուսացել էր Լոպպին, և նորա մեղքը չէր ամենևին, որ այս յոյսը նանրացաւ և անկատար մնաց։

Միւս առաւօտուն վաղ, առաջինն էր նա, որ եկաւ Պրեզիդենտի դիւանը, և որովհետև չգիտէր, թէ ինչ գործով պիտի պարապէր և ոչ ոք ներկայ չէր, որ նորան աշխատութիւն յանձնէր և պատուէրներ տար, վասն որոյ նստաւ նա հանգարտ մի աթոռի վերայ և սպասումէր։ Ոչ ամենևին դատարկ նստելու համար, վեր կալաւ նա մի փունջ բադի թեւեր և մի դանակ որ դրած էր գրասեղանի վերայ, և տաք տաք գրիչներ էր կտրում, մինչև բոլոր բադի թեւերը մշակուած էին իբրև պատուական գրիչներ։ Այնուհետև առ փոքր փոքր միմեանց հետևից եկան գրագիրները, և ամեն մինը նայումէին նորա վերայ զարմացած երեսով և չգիտէին, թէ ինչպէս վարուին նորա հետ։ Լոպպին նստած էր այնպէս միամիտ և խաղաղ, որ ոչ ոք չկամէր արտաքսել նորան։ բայց և տիրապէս ի՞նչ բան ունէր նա դիւանատնում, մտածումէին նոքա։

Լոպպին անփոյթ արեց այդ զանազան հայեցուածքը իւր վերայ. նա գտանվումէր այս տեղ իւր պաշտօնի զօրութեամբ, և միւս բաները արդէն կը պարզուէին, մտածումէր նա։

Եւ գործը պարզուեցաւ իսկ։ Դիւանապետը եկաւ և համառօտ կերպով վարուեցաւ նորա հետ, քան թէ գրագիրը։

«Ի՞նչ գործ ունիք այս տեղ», հարցրեց նորանից խոշորութեամբ։

«Սկսանելու իմ պաշտօնս», պատասխանեց Լոպպին ամենևին քաղաքավարութեամբ և սառնութեամբ։

«Պաշտօ՞ն սկսանելու։ Դուք յիմարացած էք։ Ո՞վ է Ձեզ պաշտօնի մէջ կարգել»։

«Պարոն Պրեզիդենտ Րօթը», պատասխանեց Լոպպին։

«Պարոն Պրեզիդե՞նտը։ Ինչո՞ւ չես ասում, թէ մեր ամենագթած տէրը, նոյն ինքն իշխանը։ Վե՛ր կացէք, հեռացէք այս տեղից. ապա թէ ոչ, դիւանի ծառային կը հրամայեմ դուրս տանել Ձեզ»։

Լոպպին չշարժուեցաւ տեղից։ Հարցրեցէք նոյն իսկ Պրեզիդենտից, եթէ չէք հաւատում ինձ», ասաց նա։

«Անմտութիւն», ձայն արձակեց դիւանապետը. Ելէ՛ք, դո՛ւրս ձգեցէք այս տղան»։

Այս րոպէիս հնչեց զանգակը։ «Եկել է նոյն ինքն Պրեզիդենտը», խօսքը յառաջ տարաւ դիւանապետը։ Գուցէ այդ գործը ունի որ և իցէ ստուգութիւն։ Սպասեցէք, մինչև վերադառնամ։»

Շուտով շտապեց նա եկաւորին հանդէպ, և Լոպպին սպասումէր համբերութեամբ, որովհետև միամիտ էր իւր գործի մասին։ Երկար չտևեց, և ահա վերադարձաւ դիւանապետը ամենևին փոխուած և ամենաքաղցր երեսով մօտեցաւ Լոպպիուն։

«Բոլորը ստոյգ է», ասաց նա։ Պարոն Պրեզիդենտը տուել է ինձ հարկաւոր տեղեկութիւնքը և առանձին կերպով յանձնել է Ձեզ իմ հովանաւորութեանս։ Ուրեմն կը տեսանենք։ Այն տեղ ահա ազատ է մի գրա-

սեղան — նստեցէք — և ահա՛ Ձեզ գործ. օրինակեցէ՛ք այս դիւանական արձանագրութիւնը»։

Դիւանապետը համառօտ շրջեց երեսը և թողեց մեր Լոպպին մի փոքր տարակուսանքի մէջ կանգնած գրատախտակի առաջև, և դիւանական արձանագրութիւնը որ ձգել էր նորա վերայ։ Լոպպին իւր սրտումը շուարուեցաւ այս կարճ և համառօտ վարեցողութեան վերայ, բայց շուտով ժողովեց ուշը վերան։ Ծուլութիւնը նորա գործը չէր։ «Ժամանակը արծաթ է» ասաց նա քթի տակ և վճռաբար նստաւ գրասեղանի մօտ, որ սկսանի իւր աշխատութիւնը։ Գրիչներ ունէր բաւական շատ, թանաք ու թուղթ պակաս չէր, ուրեմն տաք տաք ձեռնարկեց գործին։ Մի քանի ժամից յետոյ արձանագրութիւնը իստակ ու մաքուր օրինակել էր և բերեց տուեց դիւանապետին, որ նախ, զարմացած, իսկ յետոյ աւելի և աւելի քաղցրացած երեսով թերթեց տետրակը։

«Շատ լաւ է», ասաց նա վերջումը — «և բաւական շուտով լցուցած է գործը, երևումէ, որ Դուք պիտանի մարդ էք։ Եթէ յառաջ տանէք, ինչպէս սկսել էք, Ձեր գործը կը յաջողուի։ Այժմ, գրեցէք այս ահա։

Լոպպին շատ գոհունակ լինելով ստացած գովասանութիւններից, վերադարձաւ դէպ ի իւր գրասեղանը և սկսեալ այդ ժամից վայելումէր բարեացակամութիւնը իւր մեծաւորի, դիւանապետի, որ այնուհետև շուտով սկսաւ յանձնել նորան մեծակշիռ գործեր և ամենայն պատեհ միջոցում յայտնումէր իւր հաճութիւնը։

Լոպպին այնպէս շուտով ծանօթացաւ գործերին և այնպիսի հեշտութեամբ կարգադրումէր դորանց, որ նա բոլոր գրագիրների մէջ առաւել պարապ ժամանակ ունէր, թէպէտ յիրաւի աւելի գործակատար էր, քան թէ ամեն մինը նոցանից։ Ինչ որ անումէր նա, անումէր աշխատասիրութեամբ և իմաստնապէս գործ դնելով ամենայն րոպէ։ Նա գիտէր ժամանակի արժէքը, և ցան ու ցիր չէր անում ժամերը, ամենայն տեսակ անօգուտ երկրորդական բաների պարապելով։ Նա անչափ գործունեայ էր։ Երբ որ նորա ընկերակիցքը տակաւին գրումէին և քրտնումէին, նա շատուց արդէն աւարտել էր իւր գործը և ըստ մեծի մասին իւր համար ունէր ամբողջապէս, յետ ճաշու ժամերը։ Մի այլ մարդ դորանց գործ դրած կը լինէր իւր հաճութեան համար, բայց ոչ այդպէս վարուեցաւ Լոպպին։ Նա լաւ միտ էր առել այն խօսքը, որ ասել էր Պրեզիդենտը մատենադարանի մասին։ Երբ որ նա, ինչպէս սովոր են ասել, մի փոքր տաքացել էր իւր նոր պաշտօնի մէջ, և զգումէր իւր անձը դորա հետ ընտելացած, նա դիմեց դիւանապետի մօտ խնդրելու նորանից աւելի ճիշդ տեղեկութիւն մատենադարանի մասին։

«Բայց ինչ կամիք Դուք մատենադարանում անել», հարցրեց սա։ Ի՛նչ ունինք այն տեղ որոնելու»։

«Գիրքեր — ոչինչ աւելի», պատասխանեց Լոպպին։

«Ի՞նչ պէտք էին գիրքեր։ Դուք այդ տեղ գտանելու էիք լոկ գրուածք

տէրունական իրաւունքի, Պանդեքտների* և տէրութենական տնտեսութեան վերայ, ուրեմն այնպիսի բաներ, որոց Դուք ամենևին տգէտ էք»։

«Դոյն իսկ պատճառով հարկաւոր էր ինձ ծանօթանալ դոցա», մտածում էր Լոպպին։

«Այո՛, բայց ինչպէս կամէիք ծանօթանալ դոցա»։

«Եթէ գիտուն լինէի դոցա, ինձ հարկաւոր չէին այդ գրեանքը։ Բայց, ինչպէս Դուք ուղիղ ասացիք, պարոն դիւանապետ, ես տգէտ եմ, ուրեմն պարտ եմ ուսանել»։

«Ուսանե՞լ, Դո՞ւք. մի հասարակ գրագիր։ Այդպիսի բա՞րձր բաներ։ Զարմացքի մէջ եմ. և ի՞նչ խորհուրդ ունի այդ. ամենևին անօգուտ է Ձեզ»։

«Ինչ որ ես ուսանում եմ, ի՛մ համար է», ասաց Լոպպին կամակորութեամբ։

Դիւանապետը աւելի չորս չորս արեց աչքերը։ «Ասա՛ դու ինձ ի փառս Աստուծոյ, ի՞նչ խորհուրդ ունի այդ։ Ի՞նչ օգուտ Ձեզ դորանից։ Թէպէտև Դուք բոլոր գրեանքը անգիր իմանայիք, այդ օգտելու չէր Ձեզ. պատճառ, մի ուսումնական, ինչպէս դա ասվում է սովորաբար, այնու ամենայնիւ Դուք գտնելու չէիք Ձեր կեանքի մէջ։ Աւելի բարձր քան դիւանապետի աստիճան, կամ թէ գուցէ գաղտնի գործերի ատենադպրի աստիճան, բարձրանալու չէիք, և այդ հաղիւ թէ կարելի էր, եթէ չունէիք բարի ազգականներ, որ Ձեզ յառաջ խթէին»։

«Ցաւ չէ այդ», ասաց Լոպպին։ «Ինչ որ ես ուսանում եմ, իմ համար է, և հմտութիւնքը բեռն չեն մարդու վերայ։ Ես ունիմ բաւական ժամանակ»։

«Ապա գնացէք զբօսնելու և վայելելու Ձեր կեանքը»։

«Այդ լինելու էր վատնողութիւն, պարոն դիւանապետ, — ժամանակը արծաթ է։ Չէ պիտոյ իւր արծաթագլուխը պատուհանից դուրս ձգել»։

«Յիրաւ, Դուք ամենախորթամիտ մարդն էք, որ երբ և իցէ իմ կեանքումս հանդիպել է ինձ», մտածում էր ծեր, պատուելի դիւանապետը։ «Բայց մարդուս կամքը նորա երկնաւոր արքայութիւնն է, և վերջապէս, միշտ աւելի լաւ բան է իւր ժամանակը օգտակար կացուցանել, քան թէ տխմարութիւնք գործել։ Ահա Ձեզ մատենադարանի բանալին։ Ուրեմն կարդացէք ու ուսէք, ինչ որ կամէիք»։

Լոպպին ի զուր չլսեց այս խօսքերը. իսկոյն վեր կալաւ բանալին և այնուհետև իւր ազատ ժամերը անցուցանում էր մատենադարանում, կարդում էր և ուսանում էր և դորանով գերօրինակ երջանիկ էր համարում իւր անձը։

---

* Պանդեկտոս կամ Դիգեստա ասվումն այն Կորպուս Իւրիս (Corpus juris) անունով, օրէնքների և կարգադրութիւնների, որ Յուստինիանոս կայսրը 6 րդ դարում հաւաքել տուեց, — մի մասը։ Դա է մեծ համակարգութիւն օրէնքների, 50 գիրք բաժանուած, որոց մէջ պարունակվումեն հաւաքածոյք հին իրաւագէտների գրուածներից և նոցա իրաւագիտական վճռահատութիւնքը։

Ծանօթ. Հրատարակողի։

Արդարև սկզբումը, գիրքերը նորա համար անհասկանալի բաներ էին. բայց դոքա վերջապէս առ փոքր փոքր հասկանալի դարձան։ Ինչ տեղ նա դժուարանումէր և ի զուր էր որոնում հասկանալ բանի զօրութիւնը, այդ ժամանակ հարցանումէր գիւանապետից. եթէ սա կարող չէր մեկնել դժուար տեղերը, այնուհետև հարցանումէր նա Պրեզիդենտի գաղտնի գործերի ատենադպրից, որ միշտ բարեացակամ էր դէպ ի նա։ Այսպէս, Լոպպին գտանելով պատրաստական առաջնորդութիւն, առ փոքր փոքր ուսաւ շատ բան, այնչափ, որ ինքն ևս հազիւ թէ կարող էր պատկերացնել մտքով, թէ որպէս մեծապարունակ էին նորա գիտութեան գանձերը։ Նորան տանջումէր և խափանումէր մանաւանդ մի բան, որ նա չգիտէր լատիներէն։ Շուտով խելամուտ եղաւ, որ առանց լատինականի գիտութեան կարող չէր յառաջադէմ լինել։ Մի այլ ոք հանդիպելով այս արգելքին, պիտի յետ փախած լինէր. բայց մեր Լոպպին քաւ լիցի։ Նա ունէր ձեռնում արծաթ, ուսուցչի վարձ տալու, և այն մեծ, հասակն առած պատանին չամաչեց այժմ, լատինական լեզուի քերականութիւնը կռան տակ, դիմել ուսուցչի մօտ և հոլովել ուղղական mensa, սեռական mensae, ինչպէս ամենափոքրիկ աշակերտը։ Mensa-ից շուտով հասաւ բանը բայիս amo, amas, amat և այսպէս հետ զհետէ յառաջ գնալով, այնքան հմտացաւ լատինականին, որ ամենևին աջողակ կարող էր կարդալ իւր Կիկերոնը և առանց դժուարութեան վերահասու լինել այն հատուկտոր լատինական խօսքերին և ասացուածներին, որ հանդիպումէին մատենադարանի գրքերի մէջ։ Արդարև, մինչև այս տեղ հասանելու համար, պիտի նա այս և այն գիշերի կէսը անգիր սերտէր, ուսումնասիրէր և մտածէր։ Բայց ի՞նչ վնաս դորանից։ Մի՞թէ կարող էր նա աւելի բարւոք գործ դնել ժամանակը։ Այլև, առ հասարակ, ուսումը վաղուց էր նորա համար ոչ թէ աշխատութիւն, այլ միայն հաճութիւն։ Նա ուրախանումէր յաղթած դժուարութիւնների վերայ, ինչպէս զօրավարը ուրախանումէ մի ստացած յաղթութեան վերայ, և այդպէս զուարթ ու կատարեալ հսկայական քայլերով յառաջ գնաց նա։

Կարելի էր մտածել, թէ նորա առողջութիւնը այդպիսի ճգնողութեամբք պիտի տկարանար վերջումը — բայց ո՛չ։ Լոպպին այնքան խելացի էր, որ և ուսումնասիրութեան մէջ պահպանումէր չափ ու սահման և շնորհումէր իւրեան ժամանակ հանգստանալու։ Կիւրակէն նորա հանգստութեան օրն էր։ Այս օրիս պարապ էր նա. գրքերի ձեռք չէր տալիս։ Վաղ, Աստուծոյ պաշտօնից յետոյ, ուր նա ներկայ էր առանց զանցառութեան, երթումէր նա զբօսնելու արձակում, և զկնի ճաշուն մինչև երեկոյ շրջումէր նա անտառների մէջ, որ մինչև այժմ իսկ սիրելի էին նորան և քաղցր, ինչպէս անցած օրերում, երբ նա իբրև դատարկաշրջիկ վազվզումէր անապատի մէջ։ Այս զուարթացնումէր և զօրացնումէր նորան, այս պահպանումէր դալար և առողջ, այս տալիս էր նորան նոր զօրութիւն և ոյժ գալոց շաբաթի աշխատութեան և գործերի համար։ Եւ ձմեռան միջոցին և անձրևային կամ բուք եղանակում թողում չէր այս զբօսանքները։ Նա մանուկ էր և զօրեղ, պատերազմը տարրերքի հետ ուրախութիւն էր նորան;

և հեշտութեամբ յաղթում էր նա դժուարութիւններին որ բերում էր իւր հետ տարու եղանակների փոփոխութիւնը։

Եւ արդարև, այսպիսի հիմնաւոր, անվաստակելի աշխատասիրութեամբ, անպատճառ, Լոպպիու միտքը պիտի ճոխանար լի ու առատ տեղեկութեամբք որ գուցէ շատ անգամ պակաս էին իւր պարոն մեծաւորներին։ Առանց նկատելու, Լոպպին դարձել էր մի քաջ իրաւաբան և տէրութեան տնտեսագէտ, և նորա հայրենի աշխարհի օրպիսութիւնքը այնպէս լաւ յայտնի էին նորան, որ նա կարող էր մատերի վերայ համարել որպէս ամենամեծ, նոյնպէս ամենափոքր բաները։ Թերութիւնքը կառավարութեան մէջ աւելի քաջ հասկանում էր նա, քան թէ այս, կամ այն բարձրաստիճան խորհրդականը, և այս ու այն առաջարկութիւնը թէ ինչպէս կարելի էր այս և այն պակասաւորութեանը դարմանել, յղացաւ և հասունացաւ ժամանակով, նորա հանճարի մէջ։ Ի հարկէ այս բոլորս օգտեց նորան գոնեայ, արտաքուստ, շատ փոքր կամ թէ ամենևին ոչինչ։ Նորան ուշադիր չէին շատ. նոյն իսկ Պրեզիդենտը անփոյթ էր արել նորան, վասն որոյ Լոպպին էր և մնաց այն ստորակարգ գրագիրը որ և եղած էր սկզբից — այն տարբերութեամբ միայն, որ նորան այլ ևս չէին տալիս թղթեր օրինակելու, այլ ինքնիշխան աշխատելու և շատ անգամ յանձնում էին նորան ամենաշփոթ և ամենադժուարին գործերը պարզելու և լուսափայլ կացուցանելու։ Բայց և ինքը Լոպպին մեղաւոր էր այդ բանի մէջ, որ յառաջադէմ չէր լինում. նորա համեստութիւնը արգելեց նորան աւելի մեծ թոշակ կամ յառաջտարութիւն խնդրել — պաշտպանք և ազգականք, որ նորա համար բարեխօս եղած լինէին, չունէր նա, և այսպէս միւսերը որ աւելի վստահ էին, քան թէ նա, յառաջեցին նորանից և սանդուղքի աստիճաններից դէպ ի վեր բարձրացան, բայց նա մնաց նստած սանդուղքի ամենաստորին աստիճանի վերայ։ Այո՛ Պրեզիդենտը աւելի զօրաւոր կերպով հոգացած կը լինէր նորա համար, եթէ Լոպպին հաստատ կերպով խնդրած լինէր նորանից — բայց Լոպպին անփոյթ արեց այդ։ Նա սպասում էր համբերութեամբ, որ իւր աշխատասիրութեանը և հմտութիւններին կը շնորհէին այն, ինչ որ արժան էր նոցա, և չմտածեց, որ և իւր կողմից փոքր ինչ պիտոյ էր ձեռնտու լինել, եթէ մարդս կամի յառաջ գնալ։ Տէր դիւանապետը արդարև մտածում էր այդ բանի վերայ, բայց զգուշացաւ արթնացնել Լոպպին իւր քնէածութենից։ Լոպպին մատուցանում էր նորան ամենընտիր սպասաւորութիւնքը. Լոպպին էր ամենալաւ աշխատաւորը, Լոպպին հնարագէտ էր ամեն բանի մէջ, Լոպպին անփոխարինելի էր դիւանատան գործերում, Լոպպին էր ամենապինդ նեցուկը ալևոր դիւանապետի, նորա աջ ու ձախ ձեռները, բաց ի գործանից և գլուխը։ Ուրեմն Լոպպին պիտի մնար, Լոպպին պիտի աշխատէր և այսուհետև, Լոպպին պիտի հերիքանար իւր ստորին վիճակով և իւր չնչին թոշակով։ Այսպէս անկարելի էր և մնաց։ Եւ Լոպպին հերիքացաւ նոյնպէս։ Նա ոչ նախանձոտ էր և ոչ իսկ պատուախնդիր։ Նա ունէր, ինչ որ կարևոր էր նորան, ապրուստ, հանդերձ, զբաղմունք — ինչ հարկաւոր էր աւելի։ Նա սպասում էր և յոյս ու-

նէր, որ մի օր կը լինի արդէն յեղափոխութիւն և նորան յառաջ կը տանէ առանց իւր յատուկ ձեռնտուութեան։

Եւ այդ յեղափոխութիւնը եղաւ նոյնպէս արդարև։ Հին Պրեզիդենտը մեռաւ, մի նորը եկաւ նորա փոխանակ։ Սա ունէր բոլորովին այլ տեսութիւն, քան թէ իւր նախորդը, որ ծերութեան պատճառով թոյլ էր տուել գործերին ընթանալ, որպէս ընթանումէին։ Այժմ ներս մտաւ դիւանատան մէջ մի նոր հոգի և մի նոր կեանք։ Ցիրաւի, սկզբում և նոր Պրեզիդենտը շատ սակաւ ուշադիր էր մեր Լոպպիուն. պատճառ, ինչ բանով նորա փոյթը պիտի գրաւած լինէր իւր վերայ այդ աննշան գրագիրը, որ, Պրեզիդենտի կարծիքով։ ոչինչ գործ չունէր բաց ի միշտ ու միշտ թուղթեր օրինակելուց, որպէս յառաջ, նոյնպէս և այսուհետև։ Բայց երկար չանցաւ, և ահա փոխուեցաւ այդ. աննշանը դարձաւ մի անձն, որոյ վերայ այլ ևս կարող չէին նայել վեր ի վերոյ։ Պրեզիդենտի ձեռքն ընկաւ մի շատ մեծակշիռ գրաւոր աշխատութիւն, որ շարադրած էր այնպիսի բանագիտութեամբ, պայծառութեամբ և հիմնաւորութեամբ, որ գրգռեց նորա հարցասիրութիւնը, թէ ով է դորա հեղինակը։

«Ո՞վ իմ խորհրդականներից գրել է այս ճառը», հարցրեց նա դիւանատան մի ծեր խորհրդականից։

«Այդ ճառը։ Այն գրագիրը ահա — Լոպպի են ասում նորան. չըգիտեմ ստուգութեամբ, թէ ինչպէս է տիրապէս նորա անունը»։

«Ես չեմ հարցանում, թէ ո՞վ է օրինակել այդ գրուածը, այլ թէ ո՞վ է շարադրել այդ, պարոն խորհրդական», պատասխանեց Պրեզիդենտը սաստկութեամբ, Ուրե՞մն»․

«Ուրեմն, այո՛, գրագիրը — Լոպպին — ահա՛ ասումեմ Ձեզ»։

«Այդ անկարելի է»։

«Ամենևին ո՛չ, պարոն Պրեզիդենտ։ Այդ մարդը անաջողակ չէ. նորան շատուց արդէն տալիս չեն թուղթեր օրինակելու, այլ երբեմն յանձնումեն նորան ամենևին մեծակշիռ գործեր։ Երբէք անաջողակ չէ նա»։

«Այո՛, այդ տեսանումեմ ես այս ճառից, որ հազիւ թէ կարելի էր աւելի հիմնաւոր կերպով գրել։ Կանչեցէ՛ք այս տեղ այդ մարդը»։

Լոպպին եկաւ, ամենևին զարմացած նորան հասած լուրի վերայ, ուրովհետև կարող չէր ինքը մեկնել իւրեան, թէ ինչ կամի նորանից Պրեզիդենտը։

«Դո՞ւք գրագիր էք դիւանատնում», հարցրեց սա։

«Այո՛, պարոն Պրեզիդենտ», պատասխանեց Լոպպին խոր գլուխ տալով»։

Դո՞ւք էք գրել այս ճառս։ Այսինքն, Դո՞ւք էք դորա բուն շարադրողը և ոչ թէ լոկ օրինակողը»։

«Այո՛ ես եմ. ի՞նչ ունիք հրամայելու ինձ, պարոն Պրեզիդենտ»։

«Բայց ի՞նչ է պատճառը, որ Դուք և այդպէս մինչև այժմ լոկ գրագիր էք դիւանատան մէջ»։

«Լոպպին վեր քաշեց ուսերը։ «Ես ուսումնական չեմ — գոնեայ ու-

սած չեմ համալսարանում — պաշտպանք ու օգնականք պակաս են ինձ — յառաջ խթել իմ անձը չկամիմ — և բաց ի դորանից, բաւական եմ։

«Դուք չէ՞ք ուսած համալսարանում. բայց ո՞ր տեղից է այս մեծապարունակ ուսումնականութիւնը։

Լոպպին պատմեց — Պրեզիդենտը հիացաւ։

«Նարւոք է», ասաց նա վերջապէս. «Ես աւելի մի ըստ միջէ տեղեկութիւնք կը ժողովեմ — գուցէ — Դուք արդէն կը լսէք ինձանից»։

Լոպպին գնաց, ինչպէս եկած էր, մեծարողապէս գլուխը խոնարհեցնելով։ Նորա ուսումնականութիւնը, համեստութիւնը, պարզ վարքը խոր տպաւորութիւն էին արել նոր Պրեզիդենտի վերայ։ Այդ մարդը պիտանացու է», ասաց նա մի փոքր մտախոհութենից յետոյ, քթի տակ։ Եւ գուցէ — կը տեսանենք։

Նա հարցափորձ արեց, Լոպպիու ասածները բոլորը հաստատուեցան. Նա կարդաց մի քանի այլ գրուածք նորանից և աւելի ու աւելի զարմացաւ այս աննշան գրագրի մեծապարունակ և հիմնաւոր տեղեկութիւնների վերայ։ Մի օր յետոյ Լոպպին ստացաւ մի մեծ ծրար — բացեց այդ և կարդաց դորա մէջ, որ ինքը կարգած էր գաղտնի գործերի ատենադպիր Պրեզիդենտի դիւանատանում հազար թալեր տարեկան թոշակով։

«Թագաւորազնի խօսքը իրաւ է», ասաց նա. «Ժամանակը արծաթ է։ Ամենայն օր ես աւելի և աւելի վերահասու եմ լինում այս ճշմարտութեանը»։

~~~~~

ՈՒԹԵՐՈՐԴ ՑՕԴՈՒԱԾ.

ՓՈՐՁԱՆՔԸ։

«Ժամանակը արծաթ է»։ Այս խօսքը թագաւորազնի, ուրեմն վերջապէս կատարուած էր։ Լոպպին ստանումէր մի թոշակ հազար թալերի և այսուհետև ունէր միայն անցած օրերի աշխատութեան կէսը միայն, անցած օրերի, երբ նա իբրև վերջին գրագիր ստանումէր միայն երեք հարիւր թալեր։ Արդարև Լոպպին տհաճ չէր, որ գործերը այսպիսի կերպարանք էին ստացել։ Բայց գրեթէ նորանից աւելի երջանիկ էին նորա հոգաբարձու ծնողքը, մանաւանդ մօրաքոյր Քինդերլէյնը, որ յառաջուց արդէն գիտէր, թէ այս՝և այն թալերը այն հազարից թափուելու էր իւր գոգը։ Ո՛չ ապաքէն սիրելի Լոպպին, այդ պատուական, ազնիւ, բարի Լոպպին իբրև գրագիր արդէն հաւատացել էր նորան իւր երախտագիտութեան լուման։ Քինդերլէյն կինը լողէր տալիս մի երանական հոգեզմայլութեան մէջ և ոչ թէ միայն գովասանումէր իւր պատուական որդեգիրը, այլև փառաւոր թագաւորազը, որ այնպիսի գեղեցիկ խրատներ և այնպիսի բարի խօսքեր տպաւորել էր նորա սրտի մէջ։ Ծաղրածութիւն այս խօսքերի և խրատների վերայ չլսուեցան այսուհետև. նա և կարող չէր արդէն այլապէս վարուիլ, մե-
~~~~~

ծարելով պարոն խորհրդականը գաղտնի գործերի, որոյ վերայ այնպիսի յաղթող կերպով ստուգուած էր այն խօսքերի և խրատների խորին ճշմարտութիւնը։

Ինչպէս Լոպպին իւր անցած օրերի չքաւոր և անօգնական վիճակին արիական հոգով համբերել էր, նոյնպէս պարկեշտ և չափաւոր մնաց իւր բարի բաղդի մէջ։ Այո՛, թո՛ղ ճշմարիտն ասենք, տակաւին չէր հաւատում նա այս իւր բարի բաղդին։ Նա բարձրացել էր չափից դուրս վեր և արագութեամբ։ Ո՞վ կարող էր գիտել, թէ ինչ կար դորա տակում, որ դեռ ևս ամենևին անկարելի էր աչքի տակ առնուլ։ Նա ուրախանումէր չափով ու սահմանով, և թէպէտ ստանումէր տարեկան թոշակ հազար թալեր, այնու ամենայնիւ նա էր և մնաց հին Լոպպին, այսինքն աշխատասէր, համեստ և չափաւոր Լոպպին։ Բաղդաւորութիւնը չշինեց նորան մեծամիտ. ամենևին, դորա հակառակ։ Նա ինքը հաւատացնումէր իւրեան, որ նա այդքան բաղդաւորութեան արժանի չէր, և այսպէս պահպանեց իւր պարզ և ցածուն հոգին։

Մի օր Լոպպին Պրեզիդենտից պատուէր ստացաւ քննելու մի ջրանցքի շինութեան ծախքի ցուցակը, մի ջրանցքի, որ պիտի միաւորէր միմեանց հետ երկու նաւարկելի գետեր այն աշխարհում։ Գործը կարօտ չէր շտապողութեան. Նա կարող էր կէս տարի գործ դնել այդ քննութեան վերայ։ Բայց Լոպպին սիրում չէր մի բան յետ ձգել, և արդէն նոյն երեկոյին նստած էր և քննումէր թուղթերը։ Զգաստութեամբ և զգուշաւոր ճշդութեամբ անց կացաւ նա զանազան մասները գործի, մինչև հասաւ այնպիսի տեղ, ուր կարող չէր այլ ևս մի քայլ յառաջ գնալ։ Այսինքն հանդիպեցան մաթեմատիկական հաշիւներ, և Լոպպին, որ հմուտ էր այս և այն բանին, չգիտէր մաթեմատիկայից ոչինչ բան, բայց լոկ այն միակ դրութիւնը, թէ երկու զուգահեռական գծեր յառաջ տարուելով թէև անվերջանալի կերպով, երբեք կարող չէին շօշափել միմեանց։ Այս տեղեկութիւնս բաւական չէր ներկայ դիպուածումս։ Ուրեմն ի՞նչ պիտոյ էր անել։ Մի այլ մարդ գործը յանձնած կը լինէր մի մաթեմատիկոսի, և ասած կը լինէր. քննեցէք այդ բանը և մանրաւորեցէք ինձ դորա հետևութիւնը։ Ո՛չ այսպէս Լոպպին։ «Ես ունիմ ժամանակ», ասաց նա ինքն իւրեան և խաղաղութեամբ բա՛ց դրեց թուղթերը։ «Կէս տարում կարելի է շատ բան ուսանել, եթէ մարդ կամք ունէր, և ինչ որ ես ուսանումեմ, իմ համա՛ր է»։ Անյապաղ դիմեց նա մի մաթեմատիկոսի մօտ, և յառաջ քան թէ անցած էր կէս տարի, նա ուսած էր այնքան մաթեմատիկա, որ իւր աշխատութիւնը կարող էր ինքնին աւարտել։ Եւ այդ աշխատութիւնը, ինչպէս սովորաբար, էր ճիշդ գործակատարութեան օրինակ. բաց ի դորանից Լոպպին գտաւ այն հաճութիւնը, որ նորա աշխատութիւնը արժանացաւ առանձին գովասանութեան, իսկ ինքը կարող էր իւր մէջ խոստովանել, որ նա դարձեալ իւր ժամանակը ճոխացուցել էր մի փոքրիկ արծաթագլխով, որ անկորուսանելի էր, քանի որ իւր յիշողութիւնը մնումէր գալար։

Այսպիսաբար եկան ու գնացին օրեր և գիշերներ, և Լոպպին օրէ օր

աւելի ընտելացաւ իւր նոր կացութեանը որ ունէր նորա համար այս և այն վայելչութիւնը. Պրեզիդենտը մնաց դէպ ի նա բարեմիտ այժմ, որպէս յառաջ. նորա եկամուտքը թոյլ տուեցին նորան առատ չափով օգնական լինելու իւր հօգաբարձու ծնողներին, և այնու ամենայնիւ այնքան անտես էր նա, որ կարող էր իւր զբօսանքի համար մի հեծանելու ձի և պահել։ Այս զեղխութիւնը, որ մի հատն էր, նա կարծումէր թէ կարող էր թոյլ տալ. պատճառ, նախ որ ձին տալիս էր նորան մի քաղցր պատեհ վարժելու իւր առաջին աջողակութիւնը և այնուհետև համարուելու ամենաքաջ ձիաւորը մայրաքաղաքում։ Թող այս. զբօսանքը ձիով օգտակար էր նորա առողջութեանը. դորա համար ունէր նա արծաթ և այլ ոչինչ դժուարութիւն չուկար։ Մի զբօսանք զուարթ ձիու վերայ հեծած, էր նորա ամենասիրելի և գրեթէ մի հատիկ հանգստութիւնը այնքան շատ աշխատութիւններից յետոյ։

Եւ այսպէս ամենայն բան ընթանումէր փառաւոր կերպով, և ահա մի օր Պրեզիդենտը մօտեցաւ նորան և ասաց. սիրելի ատենադպիր գաղտնի գործերի, խնդրեմ այս երեկոյ գալ իմ մօտ մի բաժակ թէ վայելելու։ Ամենևին պարզաբար, խնդրեմ. մեք լինելու ենք միայն և մեր մէջ»։

Լոպպին շուարուեցաւ. պատճառ, թէպէտև Պրեզիդենտը հաւասարապէս քաղցրութեամբ վարուած էր նորա հետ, բայց դեռ ևս մի այդպիսի պատիւ վիճակուած չէր նորան։ Ի հարկէ նա ընդունեց այդ հրաւիրանքը, և, ժամը եօթն զարկած, գտանվումէր նա Պրեզիդենտի նախասենեկում։ Սպասաւորը ներս տարաւ նորան, Պրեզիդենտը ողջունեց նորան անսովոր մտերմութեամբ և ընտանութեամբ, հրամայեց սպասաւորին հեռանալ, փակեց նորա քամակից դուռը և այնուհետև գտանվումէր Լոպպիու հետ ամենևին միայնակ։

«Լոպպին շուարուեցաւ։ Ահա», մտածումէր նա, «այժմ բացվումէ կնճիռը իմ արագաթռիչ յառաջընթացութեան, օձը ծաղիկների տակ։ Զգաստացիր, Լոպպի։ Մի ամենևին անխորհուրդ բան չէ այս գաղտնածածուկ ընթացքը և չափազանց քաղցրութիւնը Պրեզիդենտի»։

Ես պիտի ասեմ, որ Լոպպին ունէր մի շատ սուր քիթ։ Այո, կար այս տեղ մի կնճիռ։ Պրեզիդենտը ունէր մի խորհուրդ, որ է մինիստր դառնալու, այսինքն թագաւորից յետոյ առաջին տղամարդը լինելու տէրութեան մէջ, և այս խորհուրդս լցուցանելու պիտի ձեռնտու լինէր Լոպպին։ Հարկաւոր էր միայն այժմեան մինիստրը իշխանութենից ցած ձգել, և այս դժուար չէր այնքան, եթէ կամէին յանձն առնուլ մի փոքրիկ դաւաճանութիւն, զոր օրինակ բամբասանք, հնարովի և տակով արած արձանագրութիւնք գործերի և դոցա նման բաներ։ Պարոն Պրեզիդենտը մանրամասնաբար մեկնեց Լոպպիուն թէ ինչպէս պիտի վարուէին — գործի առաջարկութիւնը պատուական էր — դա պիտի յաջողուէր, եթէ Լոպպին իբրև գաղտնի գործերի ատենադպիր աջակից լինէր Պրեզիդենտին։ Բայց Լոպպին խղճմտանքով մարդ էր. նա վեր քարշեց ուսերը և ասաց ամենևին պարզաբար։ «Խնայեցէք ինձ այդ մասին, պարոն Պրեզիդենտ»։

Բայց Պրեզիդենտը այդպէս հեշտ չկամէր բաց թողուլ իւր խորհուրդը։ Լոպպին անհրաժարելի հարկաւոր էր նորան։ «Լսեցէք, սիրելի բարեկամ», ասաց նա շողոքորթութեամբ — «Դուք գիտէք, որ ես յարգում եմ Ձեզ, որ ես միայն բոլոր միւսերից ճանաչեցի Ձեր արժանաւորութիւնը և բարձրացուցի Ձեզ դէպ ի Ձեր այժմեան պաշտօնը։ Եթէ մինիստր էի, այնուհետեւ կարող էի Ձեզ աւելի շնորհ ցուցանել։ Ես կարող եմ Ձեզ խորհրդական շինել — այդ արժէ ինձ մի լոկ խօսք իշխանի առաջև»։

«Ներեցէք ինձ, պարոն Պրեզիդենտ», պատասխանեց Լոպպին մեծ քաղաքավարութեամբ — «Դուք շատ գթած էք — ես անարժան եմ այդքան ողորմածութեան և ամենևին բաւական եմ իմ կացութեամբ»։

Սաթարամիտ մարդիկը սովորաբար սխալվումեն իւրեանց դատողութեան մէջ պատուաւոր մարդերի մասին. սոյնպէս և սխալվումէր Պրեզիդենտը Լոպպիու մտածութեան կերպի մասին, և կարծումէր միայն, թէ այն հրապոյրը (մոլորեցուցիչ հնարը) որ առաջարկել էր նորան, տակաւին չէ այնքան գրաւիչ։

«Դուք իրաւ էք, իմ սիրելի», ասաց նա կարճատև խորհրդածութենից յետոյ։ «Ես լաւ չեմ գնահատել Ձեր արժանաւորութիւնը։ Դուք Ձեր մեծապարունակ տեղեկութեամբք և Ձեր անհաւատալի աշխատասիրութեամբ աւելի պտղաբեր էք, քան թէ բոլոր պարոն խորհրդականները — ես կը շինեմ Ձեզ իմ տեղ Պրեզիդենտ։ Ահա իմ աջս և իմ պարծանքս»։

Լոպպին դարձեալ վեր քարշեց ուսերը. հրապոյրը չէր տակաւին կաշառել։ «Խնդրեմ մտածել, ո՛վ պարոն Պրեզիդենտ — ասաց նա — «Դուք մոռանումէք, որ ես ուսած չեմ համալսարանում, ուրեմն անպիտան էի պրեզիդենտ դառնալու»։

«Յիմարութիւն, սիրելի տղամարդ։ Բանը համալսարանի ուսման մէջ չէ. այլ այն է, ինչ որ մի մարդ գիտէ, ինչ որ մարդս ուսել է և ինչպէս կարող էր դորան գործ դնել.

«Բայց բոլոր աշխարհը կը զայրանայ դորա վերայ»։

«Ի՞նչ փոյթ է մեզ աշխարհի կարծիքը, եթէ մեք կարողութիւն ունինք ճնշել դորան։ Բանը վճռած է։ Ցանձնառու եղէք, պարոն ատենադպիր, և չորս շաբաթի մէջ ես մինիստր եմ, իսկ Դուք — պրեզիդենտ»։

«Լոպպին չընդունեց մատուցած աջը։ «Ներեցէք, պարոն Պրեզիդենտ», ասաց նա, «ինձ աւելի սիրելի էր պահպանել իմ այժմեան կացութիւնը։

«Բայց ի՞նչ էք յապաղում», ձայն տուեց Պրեզիդենտը տհաճութեամբ. «Իմ այժմեան կացութիւնը առաջինն է մինիստրից յետոյ, այս աշխարհումս։ Մի՞թէ պահանջումէք, որ ես շինէի Ձեզ մինիստր»։

«Քա՜ւ լիցի այդպիսի պահանջողութիւն։ Ես յօժար էի մնալ ինչպէս որ կամ»։

«Բայց Դուք պիտի Պրեզիդենտ դառնայիք։ Աստուա՜ծ իմ, մի՞թէ բաւական պարզ չեմ խօսում։ Կամ թէ գուցէ երկբայ էք իմ խօսքիս վերայ։

բերեցէք ինձ մի գրաւոր պայման, և ես կը ստորագրեմ նորան. այնուհետև կը հաւատայիք ինձ»։

Դուք, պարոն Պրեզիդենտ, ինչպէս երևում է, չէք հասկանում ինձ», ասաց Լոպպին քաղցրութեամբ։ Ես մտածում եմ ամենևին պարզաբար, թէ ես նախապատիւ էի համարում մնալ մի [illegible] մարդ, քան թէ Պրեզիդենտ դառնալ»։

Պրեզիդենտը կանգնած էր այն տեղ որպէս կայծակից զարկած։ Նախ գոյնը թռաւ երեսից, ապա մի պղտոր կարմրութիւն պատեց նորա վերայ և բարկութեան երակը նորա ճակատի վերայ ուռաւ ու բարձրացաւ։ Այս բանս երևակայել ևս չէր Պրեզիդենտը, թէ Լոպպին հրաժարուելու էր մի այդպիսի վարձատրութենից մի բոլորովին անվտանգ լցուցանելի դաւաճանութեան համար։ Սակայն կարողացած կը լինէր հեշտ գուշակել այդ, միայն թէ ուսած լինէր ճանաչել Լոպպիու բնաւորութիւնը. պատճառ, մի ժրաջան մարդ է սովորաբար և մի արդարամիտ մարդ, և Լոպպին անտարակոյս պատկանում էր ամենաժրաջան մարդերի կարգին բոլոր աշխարհում։ Պարոն Պրեզիդենտը իւր լայնարձակ խորհուրդներով, իւր պատուամոլութեամբ, իւր ախտով և իւր յատուկ ոչ ըստ ամենայնի ուղիղ և պատուելի բնաւորութեամբ կուրացած, սխալուած էր Լոպպիու մասին, վասն որոյ այս հարուածը զգալի եղաւ նորան նոյնքան սաստկութեամբ, որքան անակնկալ և անկարծելի հասել էր նորան։

«Պարոն, ասաց նա, բարկութենից և տհաճութենից դողալով — Դուք մոռանում էք ամենևին, թէ ով Ձեզ բարձրացուցել էր»։

«Երբէք ոչ — Ձեզ եմ պարտական իմ այժմեան կացութիւնս, «և այդ երբէք մոռանալու չեմ»։

«Բայց ով որ բարձրացնում է, նա կարող է և խոնարհեցնել։ Եթէ Դուք յանձնառու չէք, էգուց արդէն կ'արձակուիք պաշտօնից։ Անխելմի՛ եղիք, իմ բարեկամ. թո՛ղ կորչին Ձեր ծիծաղելի խղճմտութեան խայթերը։ Ձե՛ռք պարզեցէք։ Մի այսպիսի պատեհ ժամանակ դէպ ի վեր բարձրանալու, միւսանգամ լինելու չէ»։

«Այդ գինը չափից դուրս թանգ է ինձ, պարոն Պրեզիդենտ» պատասխանեց Լոպպին սառնութեամբ։ «Իմ խիղճս աւելի արժէ ինձ քան թէ մի արտաքին պատիւ, որ միայն բերում է ներքին ամօթ։ Խնդրեմ, խնայեցէք ինձ, պարոն Պրեզիդենտ»։

Լոպպիու ընդդիմութիւնը այնպէս խաղաղ էր, բայց և այնպէս հաստատ ու վճռական, որ վերջապէս Պրեզիդենտը խելամուտ եղաւ, որ նա այս, ապառաժի պէս ամուր արդարամտութիւնը կարող չէր դղրդել։ Խաբուած ակնկալութեան զայրոյթը դուրս յարձակուեցաւ անսանձելի կատաղութեամբ։

«Լաւ է», ասաց նա։ Դուք մի ծիծաղելի կուրութեամբ մերժում էք իմ առաջարկութիւնը, և անմտաբար ոտնակոխ էք առնում Ձեր բաղդաւորութիւնը և նոյն միջոցին մահու չափ վիրաւորում էք ինձ։ Դուք ապերախտ մարդ էք, և այդպիսի մարդու հետ չկամիմ այսուհետև գործ ունե

նալ։ Ես արձակումեմ Ձեզ դիւանատնից — սկսած այս օրից չէք Դուք գաղտնի գործերի ատենադպիր»։

«Ես ընդունումեմ այդ արձակումը», ասաց Լոպպին քաղաքավարութեամբ խոնարհեցնելով գլուխը։

«Եւ լսեցէք Դուք», խօսքը յառաջ տարաւ Պրեզիդենտը—«Դուք գուցէ երեւակայումէք, որ ինձ Ձեր ձեռումն ունէիք և կարող էք վնասել ինձ, որովհետև ես չափից դուրս հաւատաւոր գտանուելով, յայտնել եմ Ձեզ իմ խորհուրդքը։ Բայց մի՛ սխալուիք։ Մեր խօսակցութիւնը եղած է առանց վկաների. ես, եթէ գործը յայտնուեցաւ, կ՚ուրանամ իմ խօսուածքը, և դուք իբրև խաբեբայ, բամբասող և անուն ու պատիւ ապականող կը կոխուիք բանտ։ Ո՛ւշ դրեցէք այս բանիս և ապա— ահա՛ Ձեզ դուռը»։

Անյողդողդ սառնութեամբ Լոպպին վեր կալաւ գդակը և գնաց։ Բայց դրան շէմքում դարձեալ միանգամ դադարեցրեց նորան Պրեզիդենտը։

«Պարո՛ն», ասաց նա, «լա՛ւ մտածեցէք թէ ինչ էք գործում։ Ոտք փոխելով այս շէմքի վերայից, թողումէք այս տեղ կամ Ձեր ամենաջերմ բարեկամը, կամ թէ Ձեր ամենադառն թշնամին։ Ընտրեցէ՛ք երկուսի միջից, ո՞րը կամիք։ Որպէս զօրաւոր բարեկամ կարող եմ ձեզ շատ վեր բարձրացնել — որպէս նոյնքան զօրաւոր թշնամի կարող եմ հալածելով հալածել Ձեզ։ Ձեր կացութիւնը յաւիտեան աւերուած է — երբէք այլ ևս կարող չէիք յուսալ իբրև տէրութեան սպասաւոր գործ և թոշակ ստանալ. պատճառ, ես երբէք մոռանալու չեմ ինչ որ մեր մէջ անցել է։ Դարձեալ ասեմ. «ընտրեցէ՛ք»։

«Ես ընտրել եմ, պարոն Պրեզիդենտ», պատասխանեց Լոպպին քաղաքավարութեամբ, բայց սառն։ «Եթէ հարկաւոր էր, կարող եմ իմ հացս փայտ կոտրելով վաստակել, և այդ հացը ինձ աւելի համեղ էր լինելու, քան թէ մի Պրեզիդենտի սեղանի ծուխ արձակող կերակուրները, որ գնած էի իմ պատուիս գնով։

Մի կիսաձայն անէծք կարդալով քթի տակ, բացեց Պրեզիդենտը դուռը և Լոպպին ամենամեծ քաղաքավարութեամբ հրաժարական ողջոյն տուեց նորան, որպէս թէ ոչինչ առանձին բան անցած չէր այդ երկուսի մէջ։

«Ուրեմն իմ ասպարէզս այդպէս պիտի անցանէի», ասումէր Լոպպին ինքն իւրեան, երբ որ նա եկաւ իւր օթեւանը։ «Այո՛, այո՛, ես իսկոյն հասկացայ, որ գործը պիտի ունենար մի կնճիռ։ Այժմ բարեա՛ւ մնացէք, գաղտնի գործերի ատենադպիր, հազար թալեր և հեծնելու ձիս։ Ես դարձեալ Լոպպին եմ, հին Լոպպին, աղքատ Լոպպին, բայց — Աստուած կ՚օգնէ, որ ես մնամ նոյնպէս բարեխիղճ Լոպպին։ Շատ շնորհակա՛լ եմ Ձեզ, պարոն Պրեզիդենտ։ Մի վատթար մարդ չկամիմ շինել տալ ինձ — աւելի լաւ էր մուրացկան դառնալ, եթէ այլապէս անկարելի էր։ Եւ ո՛վ գիտէ—գուցէ նա վերջապէս զգաստանայ և թողու ինձ այն տեղ, ուր ես կամ»։

Այս վերջին յուսովս դիմեց նա քնելու — բայց հազիւ թէ միւս առաւօտուն տեղից վեր էր կացած, և ահա չքացաւ այդ յոյսը։ Եկաւ մի թուղթ,

Պրեզիդենտից ստորագրած այսպէս.» Արձակումն պաշտօնից առանց թոշակի։ Ոչինչ աւելի։»

«Եւ այդ լաւ է», ասաց քթի տակ Լոպպին։ «Աւելի յօժար եմ դորան, քան թէ պղծելու խիղճս։ Տեսանենք այժմ, թէ ինչ պիտոյ էր անել»։

Լոպպին աւելի մօտ աչքի տակ ձգեց իւր գործերի որպիսութիւնը։ Նա վաճառեց իւր ունեցած բաներից, որը աւելորդ էր նորան, ի հարկէ և հեծնելու ձին. դորանից հանած արծաթը բաժանեց իւր ողբացող հօգաբարձու մօր հետ, որ շատ ու շատ յուսահատուած էր նորա անկարծելի և անհասկանալի արձակման վերայ, որոյ մասին ոչինչ տեղեկութիւն չտուեց Լոպպին։ Այժմ կային նորա ձեռնում երեք հարիւր թալեր, որով պիտի սկսանէր մի նոր ասպարէզ։ Նա մտածեց այս կողմ ու այն կողմ։ Այնքան հաւաստի էր, որ նա այնուհետև կարող չէր մնալ իւր հայրենի աշխարհում, որովհետև Պրեզիդենտը թոյլ չէր տալու այդ։ Եւ ինքը յօժար չէր մնալ։ Մարդիկ նայումէին նորա վերայ կասկածոտ աչքով, որովհետև կարողանում չէին հասկանալ նորա յանկարծակի արձակման պատճառը, և ոչ իսկ նա համարձակութիւն ունէր այդ բանը բացայայտելու։ Ուրեմն Լոպպին կամէր և պարտ էր հեռանալ։ Բայց ո՞ւր։

Յանկարծ նորա միտն եկաւ Լորդ Բրիդջէուատրը։

«Լաւ է», մտածեց նա։ Եթէ Լօրդը այժմ իսկ մտածումէ այնպէս, որպէս այն ժամանակ, երբ որ ես չգիտէի անգլիարէն, ապա իմ կարիքիս դարման էր մատուցած։ Ես իբրև ձիավարժ կը մտանեմ նորա պաշտօնի մէջ, և իմ ապագայս ապահովուած էր։ Ուրեմն դէպ ի Անգլիա»։

Մտքումը դրած ու արած։ Լոպպին սիրում չէր երկար դանդաղել, եթէ նա միանգամ հաստատել էր մտքումը մի խորհուրդ։ Նա ոտով գնաց Համբուրգ, որ խնայէ իւր արծաթը, նստաւ մի վաճառական նաւի վերայ, նաւարկեց դէպ ի Անգլիա, հասաւ Լոնդոնին, հարց ու փորձ արեց Լօրդ Բրիդջէուատրի մասին, որ ծանօթ էր բոլոր աշխարհին, և բոլոր աշխարհը ասաց նորան թէ Լօրդը կամ Չինստանումն է, կամ թէ արևելեան Հնդկաստանում։

Այս մի հարուած էր, որ զարկեց կօշտութեամբ։ Ոչ Չինստան, ոչ Հնդկաստան կարող էր Լոպպին գնալ Լօրդի քամակից. պատճառ, մի այդպիսի ճանապարհորդութեան համար փոքր էր նորա արծաթը։ Ուրեմն ինչ պիտոյ էր անել։ Վերադառնա՞լ դէպ ի Գերմանիա, թէ մնա՞լ Լոնդոնում։ Լոպպին վճռեց վերջինը։ Զբաղմունք գտանելու էր Լոնդոնում նոյնպէս, որպէս Գերմանիայում. բաց ի դորանից կարող էր կատարելագործել իւր անձը անգլիարէն խօսելու մէջ։ Ուրեմն նա մնաց, վարձեց իւր համար մի սենեակ տանիքի տակ Լոնդոնի նախագաւիթների մի անկիւնում, որչափ կարելի էր տնտեսութեամբ կարգադրեց իւր կեցութիւնը, ուտումէր գրեթէ լոկ հաց և խմումէր լոկ ջուր, և գործ դրեց ժամանակը մանրամասնաբար ծանօթանալու հսկայական քաղաքին։

Այս բանն արեց նա և հիմնաւոր կերպով։ Աշխատութիւն որոնելու, վազումէր նա փողոցից փողոց, ամեն տեղ առաջարկումէր իւր սպասաւո-

րութիւնը իբրև գրագիր, իբրև ձիադարման, իբրև ձիավար, իբրև ծառայ, բայց ամենայն տեղ մերժեցին նորան։

Զարմացք չէ։ Նա օտարական էր առանց ընծայութեան վկայականների, և Անգլիացիք մի կասկածոտ, ծանրախոհ, զգոյշ ազգ են։ Ի՞նչ փոյթ էր նոցա օտարականը որ կարող էր լինել այո՛ հազար մաղից անց կացած չարագործ և նոյնպէս մի շատ արդարագնաց մարդ։ Նոքա գործը փորձի տակ չձգեցին և համառօտ մերժեցին նորա խնդիրքը աշխատութեան մասին։

Թէպէտ Լոպպին չկորցրեց համբերութիւնը, բայց կամաց կամաց ձեռքից թողումէր իւր փոքրիկ արծաթի պաշարը։ Նորա քսակը օրէ օր աւելի թուլանումէր և վերջապէս հասաւ տակին, այնպէս որ մի պղնձի դրամ ևս չմնաց նորա մէջ։ Այս մի անախորժ բան էր, մանաւանդ օտարութեան մէջ, առանց ազգականների, առանց բարեկամի, սառնասիրտ և սառնաբիւն Անգլիացոց մէջ։ Լոպպին չկամէր մուրալ, արծաթ չունէր նա, բաց ի՜այն լուիդօրից որ ստացել էր թագաւորաղնից, որ և պահումէր իբրև մի խորհրդաւոր սուրբ բան. ուրեմն ոչինչ մնում չէր նորան, եթէ ոչ, կամ սովից մեռանել, կամ թէ գնալ նաւաստի դառնալ։ Նաւի վերայ այո՛ կարող էր գտանել մի պաշտօն, բայց և յայտնի էր նորան, որ այդ տեղ վարելու էր մի ճշմարիտ շնական կեանք։ Բայց ի՞նչ պիտոյ էր առնել։ Հարկաւորութիւնը քար կը կոտրէ, և մի շնական կեանք վարել, այնու ամենայնիւ աւելի լաւ է, քան թէ սովից մեռանել։ Լոպպին իմաց տուեց իւր տանուտիրոջը, թէ նորանից հրաժարուելու է. վեր կալաւ իւր սակաւ ունեցած չունեցածը կռան տակ և ոչ շատ ուրախ սրտով ճանապարհ ընկաւ դէպ ի նաւահանգիստը, որ սպասաւորութիւն յանձն առնու։ Այնուհետև նորա կեանքը գոնեայ մի ժամանակ ապահովուած էր, իսկ ապա, մտածումէր Լոպպին, միւս բաներն ևս կը գտանուէին։

Սակայն, Լոպպիու սիրտը ոչ ամենևին ուրախ էր։ Նա գիտէր հասարակ նաւաստիների կոպտութիւնը և յառաջատես էր, որ շա՛տ պիտի վըշտանար դոցա կողմից։ Եթէ իմացած լինէր այլ հնարքի ելք, դորան ընտրած կը լինէր առաւել, քան թէ որ և իցէ այլ ճանապարհ — բայց թէև նա շատ ջանահնար եղաւ, այնու ամենայնիւ, իւր կեանքը պահպանելու համար, ոչինչ չմնաց նորան, եթէ ոչ գնալ և նաւաստի դառնալ։

Երբ որ նա այսպէս, բաւական վհատուած, մարդերի խուռն բազմութեան մէջ փողոցներում սողալով յառաջ էր գնում, նա նկատեց մի անկիւնի մօտ մի մեծ, պատին կպցրած յայտարարութիւն խայտաճամուկ, կանգնաչափ երկայն տառերով գրած, որ հարիւր քայլաչափ հեռաւորութենից կարելի էր կարդալ։ Հարցասիրութեամբ մօտեցաւ նա այն տեղ։ Թղթի վերայ տպած էր. Ընկերութիւն. Այս տեղ մշակներ կարող են աշխատութիւն գտնել. Օրական վարձ — երկու մինչև չորս շիլլինգ։ Վիլհելմեան փողոցում, Համար 17։

Դէպ ի աջ դարձաւ Լոպպին, քամակը շրջեց դէպ ի նաւահանգիստը և ուղիղ ճանապարհով ուղևորուեցաւ դէպ ի Վիլհելմեան փողոցը։

«Ես տխմար պիտի լինէի, որ գնայի ծառայելու ծովի վերայ, եթէ կարող եմ դեռ ևս այլ կերպով իմ օրական հացը ճարել», խօսեց քթի տա-

կին։ «Աշխատութիւնը ամօթ բան չէ, և աւելի լաւ էր ինձ սայլակ գլորել և հող կրել, քան թէ թոյլ տալ նաւաստիների կոխոտել ինձ ոտքի տակ և զարկել գլխիս. երկու շիլլինգով օրը կարելի է ապրել և սոված չմնալ— եթէ աւելի վաստակէի, ապա յետ կը ձգէի, դէպ ի հայրենիքս վերադառնալու համար։ Արդարև մի մարդու, որ երբեմն գաղտնի գործերի ատենադպիր էր, ոչ ամենևին արժանի զբաղումն էր սայլակ գլորել, բայց արծաթ ստանալ իւր սովը լցուցանելու, էր այժմ գլխաւոր հոգսը. ուրեմն դէպ ի յառաջ։

Նա դէպ ի յառաջ գնաց զուարթ քայլափոխներով, յանդիման եղաւ պաշտօնակալին, որ ունէր հոգալու մշակների ընդունելութիւնը և առաջարկեց իւր սպասաւորութիւնը։ Գործակալը սկզբում ցոյց տուեց մի կասկածոտ դէմք, երբ որ նկատեց Լոպլիու քնքուշ, սպիտակ ձեռները, որ, ակնյայտնի, սովոր չէին կոշտ և ծանր աշխատութիւնների. բայց Լոպլին գործ դրեց իւր լեզուի բոլոր ճարտարութիւնը և վերջապէս, արդարև շատ դժուարութեամբ, ընդունուեցաւ, իբրև սայլակ գլորող և հող կրող մշակ։ Նա ստացաւ մի վկայական և պատուէր իսկոյն ուղևորուելու դէպ ի քառասուն մղոն հեռաւոր մի կոմսութիւն, ուր պիտի շինուէր երկաթուղին։ Մի քանի շիլլինգ ճանապարհի համար վճարեց նորան գործակալը, և շատ գոհունակ դուրս գնաց Լոնդոնից մեր պատուելի ատենադպիրը, որ հասանէ իւր նոր ասպարէզի մէջ, որ էր սայլակ գլորել և հող կրել։

Սկզբում, այդ բանը պիտի խոստովանենք, շատ դժուար թուեցաւ անբաղդ Լոպլիուն, բոլոր օրը առաւօտից մինչև երեկոյ աշխատել ձիու պէս։ Նորա քնքուշ ձեռները, որ միայն սովոր էին գրիչը կամ թեթև սանձը վարելու, ստացան ուռոյցներ և ճեղքեր, քամակը և անդամները ցաւումէին և ոտները հազիւ թէ կամէին կրել նորան, երբ որ նա կիւրակամտին, ծանր աշխատութենից յետոյ, վերադառնումէր դէպ ի փոքրիկ խուղը, ուր նա անցուցանումէր գիշերը կոշտ յարդի անկողնում. — բայց դորանով իսկապէս նորա ի բնէ առողջ և զօրաւոր մարմինը սովորեց այդ ծանր աշխատութեանը, և արդէն մի շաբաթից յետոյ գիտէր նոյնպիսի աջողակութեամբ վարուիլ սայլակի հետ, որպէս միւս մշակները, որ սկզբում ծաղր էին արել անբաղդ Լոպլիուն իւր փափուկ ձեռնով և իւր նուրբ ու սիրուն կերպարանքով։

Աւելի՛ բան։ Լոպլին ուսած էր մաթեմատիկա և սովոր էր մտածելու։ Նա հնարեց մի քանի կատարելագործութիւնք իւր սայլակի վերայ, գործ դրեց դորանց ինքնին, և այժմ ինքը կարող էր ծիծաղել միւսերի վերայ, որ ծանր աշխատութեամբ հազիւ կարող էին լցուցանել այնքան օրական գործ, որքան լցուցանումէր Լոպլին, գրեթէ խաղալով։ Դորանից ունէր նա կրկնապատիկ օգուտ։ Նախ, այլ ևս ստիպուած չէր նա այնքան դառն քրտինք թափել և, երկրորդ, որովհետև աշխատութեան վարձը վճարվումէր միտ դնելով լցուցած գործին, և ոչ թէ ժամերի կամ օրերի հաշուով, նա վաստակումէր կրկնապատիկ աւելի արծաթ, քան թէ սկզբում, երբ գործը տակաւին նոր և օտար էր նորան։ Սկզբում, հազիւ կարողացել էր մին ու կէս շիլլինգ վաստակել — այժմ վճարումէին նորան օրը ութ

կամ ինն շիլլինգ, և Լոպպին, որովհետև ապրումէր անչափ տնտեսաբար և ոչ մի կռօշ առանց հարկաւորութեան ծախսում (մսխում) չէր, ժողովեց մի փոքրիկ գոյք, այնպէս որ նա, եթէ ողջ և առողջ մնաց, կարող էր խաղաղութեամբ սպասել եկող ձմեռանը։ Թո՛ղ այս բանս։ Լոպպիու քաղաքավարի, միշտ անփոփոխ քաղցր բարք ու վարքը ճարեց նորան բարեկամներ ոչ թէ միայն իւր աշխատակիցների, այլև պաշտպանք իւր վերակացուների և մեծաւորների մէջ, որ այս ու այն փոքրիկ արդիւնք հասուցանումէին նորան, որ և նորա ծանր կացութիւնը փոքր ի շատէ թեթևացնումէին։ Այսպէս ահա, Լոպպին հաշտուեցաւ իւր այժմեան վիճակի հետ, թէպէտ դա իսկապէս կարող չէր նախանձելի ասուիլ։ Նա գոհունակ էր, և յոյսը թէ իւր որպիսութիւնը այսօր կամ էգուց աւելի կը բարուքանայ, հեշտ անց կացրեց նորան այս և այն անախորժութիւնների վերայից, որ զուցէ թէ միւսերի համար նեղիչ կամ թէ անտանելի եղած կը լինէին։

«Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ», գրած կայ, և Լոպպիու յոյսերի կատարումը շատ հեռի չէր։ Երբ որ մարդս ունել է մի օրինաւոր բան, կամենումէ աշխատել և առ հասարակ ունի իւր մէջ մի առողջ, արգասաւոր հատիկ, ապա պիտոյ է բաղդը շատ կամակորութեամբ հալածէր նորան, եթէ նա յառաջ կամ յետոյ կեանքի հոսանքի մէջ չպիտի դարձեալ դէպ ի վեր բարձրանար։ Եւ այդպէս յամառ ու կամակոր չէ ամենևին բաղդը։ Անբաղդ Լոպպիուն բաղդը պատրաստել էր արդէն այս և այն սրտացաւութիւնը, բայց վերջումը այնու ամենայնիւ յաղթեց նորա հաստատ կամքը, նորա դիմացկոտութիւնը, և ամենից առաւել հմտութիւնների գանձը, որ նա անձանձիր և անվաստակելի ժողովել էր, սկսեալ իւր հանդիպմանից Ադելբերտ Թագաւորաղնին, ինչպէս մեղուն իւր քաղցր մեղրը իւր խորշիկների մէջ։

Մի օր, մօտ վեց շաբաթ յետ իւր կարգուելուն սայլակ գլորող և հող կրող, Լոպպին ճաշից յետոյ եկաւ իւր տեղը, որ նորից սկսանի իւր գործը։ Բայց նա երկաթուղու տարածութեան մէջ չգտաւ սովորական կարգը և գործունէութիւնը, այլ մշակները, վերակացուքը և շինութեան ճարտարապետքը անգործ էին և վերջինքը տարակուսած և հոգածու երեսներով վազվզումէին երկաթուղու ծայրումը այս տեղ ու այն տեղ։ Լոպպին հարցրեց թէ ի՞նչ էր այս անսովոր անցքի պատճառը, և տեղեկացաւ, որ երկաթուղու շինութեան յառաջտարութիւնը հանդիպել էր մի անակնկալ արգելքի, որ ճարտարապետքը կարող չէին հեռացնել իսկոյն։ Լոպպին թո՛ղ տուեց իւր սայլակը, մօտեցաւ նշանակած տեղին և գտաւ ճարտարապետքը արդարև տարակուսած և մեծ դժուարութեան մէջ։ Հանդարտ և ծանրախոհ քննեց գործի որպիսութիւնը, և այս տեղ շատ ձեռնտու եղան նորա հմտութիւնքը մաթեմատիկայի մէջ և նորա սովորական խաղաղութիւնը։ Մի քանի րոպէից յետոյ արդէն գտել էր ցաւի պատճառը և դորա հետ միասին հնարքը իսկոյն վերացնելու ցաւը։ Մի երկու խօսք գլխաւոր ճարտարապետի հետ, բաւական եղան պարզ ու բացայայտ ապացուցանելու Լոպպիու կարծիքի ուղղութիւնը, և մեծաւորը ուրախութեամբ պայծառացած երեսով մատուց նորան ձեռը։

«Տղամարդ դու, ո՞վ է յայտնել Ձեզ այդ խորհուրդը» ձայն արձակեց ճարտարապետը։ «Դուք արդարև մի փրկիչ էք նեղութեան մէջ։ Յետոյ կամէի ես Ձեր հետ խօսել, այժմ հարկաւոր է այն տհաճեցուցիչ արգելքը վերացնել, որ պատրաստել է մեզ այնքան գլխակոտրութիւն։ Եկեցէ՛ք, մարդիկ, այս տե՛ղ աշխատեցէք։ Զուա՛րթ, տա՛ք տա՛ք։ Մեք շուտով կը վճռենք գործը։

Լոպպին չյապաղեց, միւսերի հետ ձեռն տալ գործին, և արդարև մի քանի ժամից յետոյ յաղթահարել էին ցաւը, և երկաթուղու ընդհատուած շինութիւնը կարող էր նոր ի նորոյ սկսանուիլ։ Լոպպին կամէնումէր միւս մշակների հետ գնալ իւր տեղը, բայց գլխաւոր ճարտարապետը հրամայեց կանչել նորան իւր մօտ, մի խօսակցութեան համար։

«Ձեր մտածութիւնը պատուական էր, տղամա՛րդ», ասաց նորան քաղցրութեամբ։ Նախ և յառաջ վե՛ր կալէք այս հինգ գինէքը, Ձեր արդար վաստակն է, և յետոյ ասացէ՛ք ինձ. ո՞վ էք Դուք և ի՞նչ վիճակի մարդ։ Մի հասարակ օրական վարձկան չէ՛ք Դուք, ինչպէս հեշտ կարելի է նկատել ձեր բոլոր կերպարանքից»։

Լոպպին չյապաղեց իւր մեծաւորներին բացայայտել այն պատճառը, որ դրդել էին նորան երկաթուղու մշակ դառնալ։ Գլխաւոր ճարտարապետը շուարուեցաւ։

«Դուք յիրաւի մի հարազատ սերմի ծնունդ էք», ասաց նա։ Ունենալով այդպիսի հմտութիւնք և Ձեր անցած օրերի լցուցած պաշտօնից յետոյ յանձն առնուլ աշխատել սայլակով, այդ յիրաւի կարօտ էր մի մեծ վճռական կամքի։ Բայց — ես ուրախ եմ, որ աւելի մօտ ծանօթացել եմ Ձեզ։ Մի սպասաւորութիւն արժէ միւսը։ Յանձնեցէ՛ք Ձեր սայլակը մի ուրիշի և իբրև օգնական ճարտարապետ մտէք առ ժամս իմ պաշտօնի մէջ։ Թոշակը թէպէտ նշանաւոր չէ, բայց աւելի մեծ քան թէ Ձեր մինչև այժմ ստացած օրական վարձը. այլև Դուք, անտարակոյս, դորանով կը ստանայիք աւելի պատկանաւոր և պատշաճ կացութիւն։ Յուսամ, որ Դուք հաւան էք իմ առաջարկութեանը և կ՚ընդունէք նորան։

«Ես ի սրտէ ուրախութեամբ և անկեղծ շնորհակալութեամբ, ի հարկէ», պատասխանեց Լոպպին հաճութեամբ։

«Ուրեմն, եկեցէ՛ք երկաթուղու դիւանատան իմ հաստատուածս։ Ես կը տամ Ձեզ գործ և աշխատութիւն։ Աներկմիտ եմ, որ մեք կը մնանք լաւ բարեկամներ, և յետոյ կը տեսանեմ, թէ ի՛նչ աւելի բան կարող էի Ձեր համար առնել։

Լոպպին բարեա՛ւ մնա, ասաց նորան ամենաուրախ երեսով։

«Դարձեալ միւսանգամ տեսանումեմ, որ թագաւորաղը խօսել է ճշմարտութիւն», ասաց Լոպպին ինքն իւրեան։ Եթէ այն ժամանակ ուսած չլինէի մի փոքր երկրաչափութիւն, Աստուած գիտէ, թէ ո՛րչափ երկար մնացած կը լինէի մի թշուառ օրական մշակ սայլակ գլորելով և հող կրելով։ Ի՞նչպէս յիմար էր այն մարդը, որ իւր ժամանակը խղճմտութեամբ գործ չէր դնում, ինչ որ մեք ուսանումենք, մե՛ր համար ենք ուսանում, և

ամենայն գիտութիւն է մի անկորուսանելի արծաթագլուխ, որ բերում է ամենախառաւոր տոկոսիք: Փառք Աստուծոյ, որ նա Թագաւորազը հանդիպեցրեց ինձ: Շնորհաւոր լինի: Առ ժամս գոնեայ ապահովուած է իմ ապագայս և մնացածը: Բայց ի՛նչ հարկաւոր է հոգս անել և հալումաշ լինել: Ես տեսանում եմ ահա՛, որ երկնաւոր հայրը վերևում, հի՛ն, բարի Աստուածը տակաւին կենդանի է»:

Փոխանակ դարձեալ լծուելու սայլակի մէջ, յանձնեց այդ միւս մշակի, դիմեց առաւել մօտակայ քաղաքը, գնեց իւր համար այն հինգ գինեքով որ գլխաւոր ճարտարապետը ընծայել էր նորան, մի պատշաճաւոր հանդերձ, զուգուեցաւ արժանապէս և վայելչապէս և միւս օրին դարձեալ աշխատում էր գրչով, փոխանակ սայլակով: Այս ախորժելի էր նորան: Նա չէր տրտնջացել, երբ որ նա, իւր կեանքը պահպանելու համար, պարտ էր յանձն առնուլ մի շատ նուաստ զբաղումն, ուրեմն և այժմ անտարակոյս ոչ ոք կարող էր մեղադրել նորան, եթէ նա մեծապէս ուրախացած էր իւր բարի բաղդի վերայ: Այո՛, Լոպպին ուրախանում էր իւր բարի բաղդի վերայ, բայց գրեթէ և՛ս առաւել ուրախանում էր իւր սրտի մէջ այն բանի վերայ, որ այդ բոլորը ամենից յառաջ պարտական էր իւր առածի հաւատարիմ և ուղիղ գործադրութեանը:

«Այո՛, այո՛», ասում էր նա ինքն իւրեան, երբ որ շատ ժամանակից յետոյ դարձեալ յարմարում էր առաջին գրիչը, որ մի նորան յանձնած գրաւոր աշխատութիւն լցուցանէ — «այո՛, այո՛ ժամանակը արծաթ է և ինչ որ ես ուսանում եմ, իմ օգտիս համար է: Եթէ ժամանակս շահեցրած չլինէի, եթէ կարդալ, գրել և հաշուել ուսած չլինէի, անգլիարէն, ֆրանսիարէն, մաթեմատիկա ուսած չլինէի — ի՛նչ պիտի եղած լինէր իմ վիճակը: Ես մնացած կը լինէի այն անպիտանը, ինչ որ էի և գուցէ թէ նստած կը լինէի բանտում: Ինչպէս որ այժմուս է, այսպէս աւելի լաւ է: Ժամանակը բարւոք գործ դնել, ուսանիլ, հմտութիւնք ժողովել — ա՛յս է ահա, որ թոյլ չէ տալու մարդուս կործանուիլ, թէև կեանքի փոթորիկները կրկնապատիկ սաստկութեամբ և ուժով կատաղէին նորա գլխի վերայ: Ուսանիլ, ուսանիլ, մի՛շտ ուսանիլ: Թո՛ղ ապրի Թագաւորազը»:

ԻՆՆԵՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ.

ՄԻ ՅԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

Այժմ, առ ժամանակ մի, դարձեալ շատ լաւ էր Լոպպիու վիճակը: Գլխաւոր ճարտարապետը ցոյց տուեց իւր անձը շատ գոհունակ և հաւան նորա աշխատութիւններին և վճարում էր նոցա համար այնպիսի առատ վարձ, որ Լոպպին առանց չափից դուրս տնտեսութեան, կարող էր մի փոքրիկ արծաթագլուխ հաւաքել: Մինչ այս, մինչ այն, զուարթութեամբ յառաջ էր գնում երկաթուղու շինութիւնը և վերջացաւ: Դորա հետ միասին

վերջացան և Լոպպիու պարապմունքը, ձմեռը կանգնած էր դրան առաջև, և Լոպպին դարձեալ պիտի ընկնէր իւր առաջին անօգնական վիճակի մէջ, եթէ փոքր ինչ արծաթ տնտեսութեամբ յետ ձգած չլինէր, և գլխաւոր ճարտարապետը չցուցանէր նորան իւր տեւողական բարեկամութիւնը։ Ինչպէս միւս աշխատաւորքը, նոյնպէս և Լոպպին արձակուեցան։ Բայց գլխաւոր ճարտարապետը խոստացաւ սորան, թէ, ձմեռը անցած, նա անպատճառ պիտի դարձեալ պաշտօն ու զբաղմունք գտանէր, եթէ մինչև այն ժամանակ գտած չէր մի այլ պաշտօն։ Լոպպին հաւան էր այս խոստմանը, վերադարձաւ դէպ ի Լոնդոն, վարձեց մի փոքրիկ օթևան և գործ դրեց իւր պարապի ժամերը, որ ևս աւելի հիմնաւորապէս ուսանի երկրաչափութիւն, ճարտարապետութիւն և դոցա նման գիտութիւնք։ Այս էր նորան մի ախորժելի զբաղումն։ Առաւօտուն վաղ նստած էր իւր գրքերի, նկարների և աշխարհացոյցների մօտ և ուսումնասիրումէր մինչև երեկոյ, ապա երթումէր զբօսնելու, որ նորոգէ իւր զօրութիւնքը. իսկ յետոյ դիմումէր մի փոքրիկ բայց մաքուր կերակրատուն քաղաքի նախագաւիթում, ուր վայելումէր իւր սեղանը պարզ, առողջարար և թեթևագին ուտելիքով։

Մի օր իւր զբօսանքը աւելի վաղ էր աւարտել նա, քան թէ սովորաբար, և երեկոյեան մութը դեռ ևս վերայ չհասած, եկաւ նա հացկերութեան հիւրանոցը։ Դրան առաջև կանգնած էր տան սպասաւորը և երկու ձիեր բռնած ունէր սանձերից. այդ ձիանքը այնչափ գերօրինակ գեղեցիկ էին, որ Լոպպին, ինչպէս յայտնի է մեզ, յառաջուց արդէն լինելով ազնիւ ձիանքի սիրող, մօտ եկաւ, որ աւելի մանրամասնաբար զննէ նորանց։

«Գեղեցի՜կ, փառաւո՜ր ձիեր, Ջօ՛ն», ասաց տան սպասաւորին։ Ո՞ւմ են պատկանում դոքա։

«Չգիտեմ, Սիր», պատասխանեց տղան։ «Երկու օտար մարդիկ կան սենեկումը։ Ես ծանօթ չեմ նոցա և առաջին անգամ եմ տեսանում նորանց։ Դոցա են պատկանում ձիանքը»։

«Մի խորթ բան», ասաց Լոպպին։ «Մեծատուն պարոններ սովոր չեն որոնել այսպիսի հիւրանոց, և այս ձիանքը այնպէս մեծագին են, որ կարող էին միայն հարստականների սեփականութիւն լինել»։

«Այո՛, մինը այդ պարոններից ունի մի հպարտ մեծատունի կերպարանք», պատասխանեց տան սպասաւորը։ «Նա, անտարակոյս լորդ է կամ մի նմանապիսի անձն։ Միւսը գուցէ նորա ձիադարմանն է. միայն թէ զարմանում եմ ես, որ նա սենեկում սեղանակից է իւր տիրոջը և երկուքն ևս խմում են մի սրուակից։ Այդպէս մի լորդ սովոր չէ վարուիլ իւր ծառայի հետ»։

«Ի հարկէ ո՛չ», պատասխանեց Լոպպին։ Բայց այդ մեր հոգալի բանը չէ։ Թո՛ղ լինին դոքա, ով և էին։ Բայց — ես մի բան կը տայի, եթէ գոնեայ միանգամ մի ժամ կարողանայի նստել այս կարմիր ձիու վերայ։ Սա, յիրաւի, մի փառաւոր անասուն է։

«Այո՛, Սիր։ Իրաւ էք ասում, Սիր», ասաց տան սպասաւորը։ Եւ ես աւելի հաւան եմ կարմրին, քան թէ դեղնագունին, և այդ պատճառով

զարմանում եմ, որ նորա վերայ հեծած չէր մեծատունի կերպարանքով պարոնը, այլ միւսը, որ յիրաւի կարող է լինել մի ծառայ կամ թէ ձիադարման, թէպէտ չէ կրում մի պաշտօնահանդերձ։ Իսկ թէ, Սիր, այդ մեծատունը թոյլ կը տար Ձեզ հեծնել Ձեր հաւանած ձիու վերայ, եթէ խնդրէիք նորանից»։

«Թող այժմ ներս գնամ և այդ մարդիկը միանգամ զննեմ մօտից», պատասխանեց Լոպպին։ «Ապա կը տեսանենք, թէ ինչպէս կը լինի»։

Վասն որոյ ներս մտաւ նա հիւրանոցի սենեակը և չգտաւ այն տեղ ոչ ոք, բաց ի յիշեալ երկու հիւրերից։ Իսկոյն նկատեց նա, որ տան սպասաւորը ուղիղ էր գտել։ Մինը այդ երկու տղամարդերից, ակնյայտնի, մեծատուն պարոն էր, միւսը ծառայ միայն։ Լոպպին բաւական ապրել էր աշխարհի վերայ, որ նկատէ այս տարբերութիւնը զանազան փոքրիկ յայտարար նշաններից և շարժուածքից։

Երբ որ նա ներս մտաւ, երկու օտարականքը խօսումէին անգլիարէն, բայց հազիւ թէ հանգստացաւ աթոռի վերայ, և ահա մեծատունը ասաց միւսին. «Թո՛ղ խօսենք փրանսիարէն, մեզ կարող են ականջ դնել, բայց հարկաւո՛ր է զգուշութիւն»։

«Այդ մարդը օտար է», պատասխանեց միւսը, Լոպպիու վերայ մի քննողական աչք ձգելուց յետոյ — նա այնու ամենայնիւ մեզ հասկանալու չէ։ Բայց ինչպէս հրամայումէ Լորդը — ես կարող եմ նոյնպէս փրանսիարէն խօսել»։

Լոպպին, որ ոչինչ պատճառ չունէր լռես լինելու, կամէր նոյն րոպէին յայտնել, թէ ինքն ևս գիտէր փրանսիարէն, բայց մի խօսք օտարականի բերանից յետ պահեց նորան այդպիսի ծանօթութենից։

«Խելացի գործը խելացի է», ասաց պարոնը անուանելով իւր ընկերը «մայ Լորդ» — «Սատանան երբեմն խաղ է անում, և եթէ թագաւորազն Ագելբերտը իմանար, թէ ո՛րպիսի խմոր էր շինուում այս տեղ, ապա վա՜յ կը լինէր քեզ, տղայ»։

«Ճշմարիտ է այդ», պատասխանեց սա մտատանջուած և ակնյայտնի մի փոքր ահաբեկուած։ «Ուրեմն թո՛ղ գնանք մի առանձին սենեակ, մայ Լորդ։ Գուցէ այդ մարդը հասկանումէ ամենը, ամենը, ինչ որ մեք խօսումենք»։

«Ո՛չ, ես կարծում չեմ», պատասխանեց Լորդը կամաց։ «Բայց Դու կարող ես փրանսիարէն խօսք ձգել նորա հետ»։

Լոպպին հասկանումէր ամեն մի խօսք, որչափ ևս կամաց խօսումէին այդ երկուքը. պատճառ, նա ունէր մի նուրբ և սուր ականջ։ Թագաւորազն Ագելբերտի անունը շուարեցրեց նորան. ակամայ յղացաւ նորա մէջ մի գուշակութիւն, իցէ թէ այդ Ագելբերտը Իւր ծանօթ թագաւորազն էր, և նա մտքումը դրեց ցոյց չտալ, թէ ինքը նոյնպէս լաւ խօսումէր փրանսիարէն, որպէս այդ երկուքը։ Լոպպին վեր կալաւ մի շատ սառն կերպարանք, կեղծաւորուեցաւ, որպէս թէ ամենևին անփոյթ էր այդ երկու օտարների մասին, այլև փոքր ինչ պարզամիտ էր երևում. և ահա նոցանից մինը մօտե-

ցաւ Լոպպիուն և ֆրանսիական լեզուով քաղաքավարի հարց արեց նորանից, արդեօք դա տեսած էր դուրսում տան ծառան ձիաների մօտ։

«Չեմ հասկանում»— պատասխանեց Լոպպին անգլիարէն և շարժեց գլուխը։

«Հարցանումեմ, արդեօք տան ծառան դեռ ևս ձիաների մօտ է, Սիր», կրկնեց այն մարդը այժմ անգլիարէն։

«Yes, Sir,— Այո՛, պարոն — ասաց տղամարդը և դարձաւ դէպ ի իւր ընկերակիցը — Անհոգ կացիր, մայ Լորդ», շշնջեց նորա ականջին. «այդ մարդը լինելու չէր վտանգաւոր, թէև հասկանար մեզ։ Պարզմտութիւնը դրոշմած է նորա երեսի վերայ»։

«Թո՛ղ այդպէս լինի, զգուշութիւնը խելացի բան է, մանաւանդ մի մեծակշիռ գործի մէջ». պատասխանեց Լորդը։ Այժմ անցանենք դէպ ի խնդիրը։ Դու գիտես արդէն, թէ ինչ էր իմ կամքը»։

«Ինձ յայտնի է միայն, որ մայ Լորդը և իմ պարոնը գրաւ են բռնել, բայց բանի միջոցները յայտնի չեն ինձ։

«Bon (լաւ է). ուրեմն յայտնեմ քեզ։ Մեք նորումս միասին էինք և և խօսք ընկաւ գերմանական և անգլիական աջողակութեան վերայ ձի հեծանելու և ձի վարելու մէջ։ Քո Թագաւորազը պնդումէր, թէ Գերմանացիք երկուսի մէջ ևս աւելի հմուտ էին, քան թէ մեք, Անգլիացիքս. դորա հակառակ, ես պաշտպանեցի իմ հայրենի աշխարհի պարծանքը։ Այսպէս ահա գրաւ բռնեցինք. գլուխներս տաքացած էին գինիուց և եռանդից։ գրաւը որոշուեցաւ քսան հազար ֆունտ ստերլինգի վերայ։ Բոլորեքեան, մեծատուն և հարստական տղամարդերը Մեծ Բրիտանիայի ներկայ էին և ստորագրեցին պայմանագիրը։ Բոլորեքեան ներկայ պիտի գտանուին, երբ, հաշուելով այս օրից, ութ օր յետոյ կը վճռուի գրաւը, և այժմ ես կարօտ եմ քո օգնականութեանը»։

«Ինչո՛վ կարող եմ օգնական լինել Ձեզ, մայ Լորդ»։

«Ահա ասեմ։ Ինձ յայտնի է, որ դու առաւել աջողակ ձիաւորը և ձիավարն ես Թագաւորազնի սպասաւորների մէջ։ Տասն անգամ զգուշացրեց ինձ Թագաւորազը ասելով. «Դուք գիտէք իմ Գէորգս, իմ ձիաւորս. Դուք գիտէք իմ ձիանքս, իմ ազնիւ կարմիր որձ ձին Աքիլլէսը։ Դուք պէտք կորուսանէք գրաւը, եթէ իմ Գէորգս ասպարէզ դուրս բերեմ ընդդէմ Ձեր ախոռապետին։ «Eh bien, ես գիտէի քեզ, ձիանքը և ամեն բան, սակայն հաւաստի է, որ ես տանելու էի գրաւը, եթէ կաշառէի քեզ։ Գործը շատ պարզ է։ Մի այնպիսի աջողակ մարդ, որպիսի դու ես, կարող էր այնպէս տնօրինել, որ նորան գերազանցէր մի այլ թէև ոչ այնքան աջողակ ձիաւոր — ի հարկէ ենթադրելով, որ դու ստացել էիր առատ հատուցումն։ Պիտոյ է լինի արշաւողութիւն անհաւասար ձիաներով — Թագաւորազնի կարմիրը պիտի վազէր իմ դեղնագունի հետ — այսպէս է պայմանը։

«Բայց գիտէ՞ք Դուք, մայ Լորդ, որ կարմիրը ամենայն մասամբ գերազանց է Ձեր դեղնագունից»։

«Արդեօք գիտէի՞ ես այդ բանը, յիմարագլուխ։ Եթէ այդ չլինէր, ես

երբէք աշխատելու չէի խօսել քո հետ։ Մի՞թէ դու չես հասկանում իմ խորհուրդը։ Եթէ քո Թագաւորազը ամենևին հաւաստի եղած չլինէր, երբէք գրաւ դրած լինելու չէր մի այսպիսի նշանաւոր արծաթ։ Բայց նա պիտի անպատճառ գրաւ բռնէր, որովհետև իմ սիրտը ագահ էր նորա արծաթին։ Հասկանու՞մես այժմ բանի զօրութիւնը»։

«Այո՛, մայ Լօրդ — բայց ի՞նչ գործ ունիմ ես այդ տեղ»։

«Նոյնպէս արծաթ շահուիլ։ Ձիդ այնպէս քշիր, որ քո պարոնը կորուսանէ գրաւը և երկու հազար ֆունտը քսան հազարից կը լինին քոն»։

«Բայց այդ լինելու էր մի խայտառակ դաւաճանութիւն դէպ ի իմ պարոնը»։

«Փա՛հ. Մի՞թէ քո խիղճը հանգստանալու չէր երկու հազար ֆունտի վճարով»։

«Բայց Դուք, մայ Լօրդ, մոռանումէք, որ Թագաւորազն Ադելբերտը անպատճառ պիտի վերահասու լինի խաբէութեանը և այդ պատճառով արտաքսելու էր ինձ պաշտօնից»։

«Այնուհետև դու կը հրաժարուէիր նորա պաշտօնից և կը մտնէիր իմ պաշտօնիս մէջ։ Աջողակ տղայք, որպիսի և դու ես, կարող եմ ես միշտ գործ դնել»։

«Բայց երկու հազար ֆունտ, մայ Լօրդ, փոքր է»։

«Փո՞քր է։ Եթէ դու այդպէս հեշտ շահվումես այդ գումարը։ Դու արդարև մի անմտօթ մարդ ես, Գէօրգ։ Ի՞նչ աւելի գործ ունիս Դու լցուցանելու, քան թէ մինչև նպատակի մօտաւորութիւնը պահպանել քո ձիու յառաջընթացութիւնը, ապա թող տալ որ իմ գիղնաւէջը յառաջընթաց լինէր»։

«Այո՛, մայ Լօրդ — բայց յետոյ ի՞նչպէս կը լինի սայլարշաւութեան գործը։ Ձեր գրաւը երևումէ միայն կիսով չափ տարած, եթէ Դուք չյաղթէիք արքայազնին սայլարշաւութեան մէջ»։

«Այդ մի չնչին բան է։ Իմ լծի ձիանքը ամենայն մասամբ գերազանց են Ձեր պարոնի լծի ձիանքից։ Այդ մասին երկիւղ չունիմ, և սայլարշաւութեան մասին թողումեմ քեզ կատարեալ ազատութիւն։ Այդ գործի մէջ բոլորովին հաւաստի եմ յաղթութեան մասին։ Արքայազը պիտի խոստովանէ, որ մի ազնուական անգլիացի աւելի փառաւորութեամբ սայլարշաւ է լինում, քան թէ մի գերմանացի. Թո՛ղ այդ. կան և ասպարէզի մէջ դատաւորք որոց դատակնիքը կարող չէ տարակուսելի լինել։

«Ո՛վ գիտէ, մայ Լօրդ»։ Ծանօ՞թ է՞ք Դուք ունգարական լծի ձիանքին։

«Այո՛ ծանօթ եմ։ Ո՞րպէս են դոքա»։

«Չորս ձիանք արշաւումեն հողմի սրընթացութեամբ»։

«Իմ սև ձիանքս վազումեն աւելի լաւ»։

«Բայց նոցա վարժութիւնը, մայ Լօրդ։ Գիտէք դուք, որ մի ձայնարկութիւն բաւական էր այդ փառաւոր ձիանքը իւրեանց ամենարագ վազողութեան մէջ դադարեցնել։ Ու՛ ոք չգիտէ այդ ձայնարկութիւնը, բաց ի Թագաւորազնից և ինձանից։

Լօրդը ձգեց երեսը «Diable», ասաց նա, արդարև ես այդ բանը չը-գիտէի, և եթէ թագաւաւորացը այդ առաւելութիւնը աջողակութեամբ գործ դնէ, այնուհետև... բայց ի՛նչ երկիւղալի բան կար իմ համար: Դու կը զգուշանաս, Գէորգ, և գործ դնելու չես այդ ձայնարկութիւնը: Diable, այժմ միայն հասկանումեմ ես թէ ինչ պատճառով թագաւորացը կրկին և դարձեալ զգուշացնումէր ինձ: Ես կամակորութեցայ գրաւի վերայ, և կապած ու կաշկանդած եմ, եթէ դու օգնական չլինիս ինձ: Երկա՛ր մի ձգիր գործը, Գէո՛րգ: Երկու հազար ֆունտ ստերլինգ մի երևելի արծաթ են, որ ամեն օր գտանվում չէ փողոցի վերայ: Վերադառնալով դէպ ի Գերմանիա, կարող ես դու ապրել դորա տոկոսիքով:

«Բայց ինչպէս կարելի է այդ, մայ Լօրդ: Ես իմ թագաւորացնի պաշտօնի մէջ ապրումեմ աւելի լաւ: Ոչ — մայ Լօրդ, ես չկամիմ դաւաճանել իմ տէրը այդպիսի փոքրիկ փոխանակով»:

Ահա — ես հասկանումեմ — Դու հազար մաղից անցած մարդ ես: Ուրեմն — ահա տալիս եմ քեզ երեք հազար»:

«Հինգ հազար, մա՛յ Լօրդ: Մի այդպիսի ազնիւ տէր, որպիսի իմն է, չկամէի խաբել մի փոքրիկ շահաւէտութեան պատճառով»:

«Հինգ հազար». ձայն արձակեց Լօրդը ահաբեկուած: «Մա՛րդ դու, այդ մի ահագին գոյք է»:

«Անտարակոյս, մայ Լօրդ — բայց և ինձ հարկաւոր էր Դ գոյք, եթէ կամէի Գերմանիայում այնպէս վայելչաբար ապրել, ինչպէս ապրումեմ իմ թագաւորացնի հովանաւորութեան տակ: Թո՛ղ այդ, Դուք ստանումէք այնու ամենայնիւ այդ արծաթի երեքպատիկը: Եթէ չկամիք — ապա ես մնումեմ մի հաւատարիմ մարդ և կը ծառայեմ տիրոջս այնպէս, ինչպէս մինչև այժմ ծառայել եմ: Diable, դու մի անամօթ մարդ ես: Հի՛նգ հազար ֆունտ ստերլի՛նգ: Բայց դորա ձեր արծաթով երեսուն հազար թալերից աւելի են: Ո՛չ, աւելի լաւ էր խափանել գրաւը»:

«Ինչպէս հաճոյ է Ձեզ, մայ Լօրդ», ասաց թագաւորացնի սպասաւորը սառնութեամբ և վեր կացաւ սեղանի մօտից: Ե՛ս չէի առաւել կորուսանողը այդ գործի մէջ»:

«Պահի՛ճը առնու, տանէ քեզ — ի՛նչ ես այդպէս շտապում: Տեսանումեմ արդէն, որ ես քո իշխանութեան տակ եմ և պիտի տեղիք տամ: Թո՛ղ քո ասածը լինի: Ուրեմն դու կը ստանաս հինգ հազար ֆունտ, ստացած յաղթութենից յետոյ իսկոյն: Իմ խօսքս ահա գրաւ եմ տալիս»:

«Լա՛ւ է, լա՛ւ է, մայ Լօրդ: Ես կարօտ չեմ Ձեր գրաւ դրած խօսքին: Դուք քաջ գիտէք թէ ինչպէս կը լինէր գործը, եթէ յայտնէի Ձեր դաւաճանութիւնը: Աստուած Ձեր հետ, մայ Լօրդ — ես պիտի շտապեմ դէպ ի տուն, որ իմ երկար բացակայութենից կասկածանք չբաղէին»:

«Ես յետ չեմ պահում քեզ — գնա՛, բայց մի՛ մոռանար, որ հինգ հազար ֆունտ ստերլինգը փոքր բան չէ»:

«Լա՛ւ գիտեմ ես, մայ Լօրդ — Դուք կարող էք անհոգ լինել, Ձեր գրաւը տարած է»:

«Այս խօսքերովս տղան թողեց սենեակը։ Լօռդը ձգեց մի արհամարհական հայեացք նորա քամակից։ «Այդ վատթարը», խօսեց նա քթի տակին, «լաւ հասկանում է իւր օգուտը։ Բայց, թէ այսպէս և թէ այնպէս, — գրաւը գոնեայ տարուած է, և ես այդ գործի մէջ այնու ամենայնիւ այնչափ օգուտ ունիմ, որ կարող եմ գոհունակ լինել»։

Տակաւին ձգեց նա մի հարևանցի հայեացք Լոպպիւ վերայ, որ ըստ երևութին ամենևին անընտրողաբար նստած էր այն տեղ, առաջև դրած մի բաժակ պորտեր և պատուհանից դուրս էր նայում դէպ ի փողոցը։

«Դա ոչինչ նկատել չէ», մռմռաց նա քթի տակին, և իսկոյն դուրս գնաց հիւրանոցի սենեկից։ Լոպպին տեսաւ նորան հեծնելով ձիու վերայ և արշաւակի հեռանալով այն տեղից։

«Նայց այս մի վատթար դաւաճանութիւն է, որոյ նմանը տակաւին տեսել չէ աշխարհը», ձայն արձակեց Լոպպին զայրացած, երբ օդը մաքրուած էր և նա ազատապէս կարող էր անձնատուր լինել իւր զգացողութիւններին։ «Տարակոյս չկայ, որ դոցա թագաւորազն Ադելբերտը էր թագաւորազն է, և նոքա կամենում են այդ վատթարները կողոպտել խաբէութեամբ։ Բայց համբերութիւն։ Արքայազը կարելի էր որոնել և գտանել. այնուհետև կը տեսանենք, թէ ինչ դարձուած կը ստանայ գործը։ Ինչպէս լաւ է, որ ես փրանսիարէն ուսել եմ։ Այսպէս պիտի բերէր բաղդը։ Եթէ թագաւորազը շարժած չլինէր իմ խիղճս, եթէ նա ինձ ասած չլինէր. «Ժամանակը արծաթ է, և ինչ որ ուսանում ես դու, քո համար է», այնուհետև նա պիտի խաբուէր և զրկուէր աւելի քան թէ հարիւր հազար թալերից։ Եթէ նորա խօսքին հետևած չլինէի, մի՞թէ կարողացած կը լինէի այժմ իմ երախտագիտութիւնս յայտնել նորան։ Ինչպէս կը զարմանայ բարի թագաւորազը, երբ որ ես յայտնէի նորան այդ ամբարիշտ դաւաճանութիւնը։ Ինչպէս կ'ուրախանայ նա, որ անցած օրերում ինձ արժանացուցել էր իւր քաղցր շնորհին և խօսակցութեանը իմ հետ։ Այո՛, այո՛, ամեն մի բարի գործ և խօսք յառաջ կամ յետոյ գտանում է իւր վարձը։ Բայց այժմ դէպ ի յառաջ։ Այսօր իսկ պիտի ես որոնեմ և գտանեմ արքայազը և զգուշացնեմ նորան. այնուհետև կը տեսանենք թէ ինչպէս կ'երթայ գործը, իսկ ես կարծում եմ որ իմ մանկութեան օրերում զուր եղած չէ իմ սպասաւորութիւնը ախոռի մէջ։ Մի այդպիսի վատթար հոգի, որպիսի Գէորգն է, չպիտի գերազանց լինի ինձանից ձիավարութեան գործի մէջ. այլ ես կարող էի աւելի երկար միջոց այն գեղեցիկ կարմիր ձիու վերայ զբօսանք առնել, քան թէ մի ժամ յառաջ ցանկացած էի։ Այժմ դէպ ի ճանապարհ. ինչ գործ լցուցանելի էր, պիտի անյապաղ լցուցանուի»։

Լոպպին չյապաղեց—նա քաջ գիտէր, որ ժամանակի գործադրութիւնը լաւ շահաբեր է։ Գդակը դրեց գլխին և ճանապարհ ընկաւ դէպ ի պօլիցիան, որովհետև իրաւամբ մտածում էր նա, որ այս տեղ աւելի շուտ և ստուգապէս տեղեկանալու էր, թէ որ տեղ է բնակում արքայազը։ Պօլիցիայի շինուածքին հասած, հարցրեց նա Բ. . . . թագաւորազնի մասին,

բայց յուսահատուած լսեց պատասխանին, թէ այդպիսի անունով թագաւորազն չկայ Լոնդոնում»։

«Բայց նա պէտք է այս տեղ լինի», ասաց Լոպպին։ «Խնդրումեմ, պարոններ, ճշդութեամբ քննեցէք ձեր ցուցակը, ուր գրած էին օտարականների անունները»։

Քաղաքավարութեամբ և յառաջամատոյց կերպով կամակատար եղան դէպ ի Լոպպիու խնդիրը, բայց ի զուր։ Թագաւուազնի անունը չգտնուեցաւ ցուցակների մէջ, և Լոպպին բաւական վհատուած պիտի հեռանար այն տեղից։

«Երդեօք այդ թագաւորազը պիտի մի այլ անձն լինէր», հարցանումէր Լոպպին ինքն իւրեանից. կարելի բան է այդ, բայց ես հանգիստ չունիմ, ես պիտի աւելի յառաջ տանեմ իմ հարց ու փորձս»։

Դէպ ի այս կողմ ու այն կողմ մտածեց Լոպպին, թէ ինչ կերպով կարող էր յայտնի կացուցանել թագաւորազնի օթեւանը, և վերջապէս միտն եկաւ, որ պիտոյ էր դիմել դէպ ի մի քանի մեծատունների բնակութիւնք և այդ տեղի սպասաւորները հարցաքննել թագաւորազնի մասին։ Ամենեին ուղիղ եզրակացնումէր նա, թէ մի այնպիսի մեծատուն պարոն, որպիսի իւր արքայազն էր, պիտի աներկբայ ծանօթ լինէր մեծատուն մարդերի մէջ, և այդպէս անյապաղ դիմեց նա դէպ ի առաջին հանդիպած ապարանքը մի անգլիական մեծատնի։ Քաղաքավարութեամբ հարցրեց նա, քաղաքավարութեամբ պատասխանեցին նորան — բայց նորա որոնած թագաւորազնի մասին ոչ ոք չգիտէր մի բան։ Նա յառաջ գնաց, առանց ձանձրանալու, հարց ու փորձ արեց չորս, հինգ ապարանքի մէջ, բայց լսեց մի և նոյն բանը — ոչ ոք չգիտէր արքայազը։ Այնուհետեւ հանգստացաւ Լոպպին մտածելով, թէ իւր արքայազը պիտի անպատճառ մի այլ անձն լինի, քան թէ այն արքայազը, որոյ վերայ խօսած էին այն խաբեբայքը, և ահա կամէր նա վերադառնալ դէպ ի իւր օթեւանը, բայց մտաբերեց փորձել մի վերջին փորձ։

«Երբեւ աթոռաժառանգ, իմ թագաւորազը, եթէ այս տեղ էր, պիտի մասնակից գտնուէր պալատական տօնախմբութիւններին, ուրեմն նորան պիտի ճանաչողք լինին պալատումը», մտածեց նա և ուղղեց իւր քայլափոխքը դէպ ի թագաւորական պալատը։ Նա հարցրեց մի դռնապանից, սա չգիտէր ոչինչ և ուղարկեց նորան դէպ ի սպասաւորը։ Սպասաւորը չըգիտէր և ուղարկեց նորան դէպ ի պալատի տնտեսը։ Պալատի տնտեսը գիտէր բոլոր անունները մեծատուն պարոնների, որ այցելու էին պալատին, բայց Լոպպիու թագաւորազնի անունը չկար դոցա մէջ։ Այժմ հանգստացած էր Լոպպին։ Խաբուած արքայազն Ադելբերտը ամենեին կարող չէր լինել իւր թագաւորազը։ Նա շնորհակալ եղաւ պալատական տնտեսին փոխարէն նորա բարեմտութեամբ տուած ծանօթութեանը և սա քաղաքավարութեամբ տուեց նորան ուղեկիցք մինչեւ գլխաւոր մուտքը ամրոցի, որոյ մէջով յանկարծ մի կառք ներս գլորուեցաւ։ Լոպպին թողեց նորան անց ենալ, կառքի ապակեղէն պատուհաններից ներս ձգեց մի հարեւանցի հա-

հայեացք և վառ գազեղէն ճրագների պայծառ փայլողութեամբ տեսաւ որ֊ֆոյոէը, էոր որֆոյոլը։ Նոյն ինքն կենդանի և ստոյգ թագաւորազն Ագելբերտը։ Մի շփոթութիւն անկարելի էր այս տեղ։ Նա շատ քաջ ծանօթ էր իւր բարերարի ազնիւ և գեղեցիկ երեսին, դորան շատ խոր տպաւորել էր իւր յիշողութեան մէջ, քան թէ կարող էր մոռանալ դորան։

«Աստուած իմ», ձայն արձակեց Լոպպին և ամուր բռնեց պալատական տնտեսի կռնից — «ահա սա էր թագաւորազն Ագելբերտը Բ...»։

«Ո՛չ, ո՛չ, իմ պարոն, Դուք սխալւումէք», պատասխանեց պալատական տնտեսը»։ Այդ պարոնը էր Նորին պայծառափայլութիւն, կոմսը Հօխբերգեան։ Ես շատ լաւ ծանօթ եմ Նորան. գոնեայ միանգամ շաբաթումէջ Նա սեղանակից է պալատի հացկերութեանը»։

Այժմ յանկարծ, ասես՚ թէ, մի կեղևանք ցած եկաւ Նորա աչքի վերայից։ Արքայազը ուղևորուած էր incognito (իբրև մի անյայտ անձը)։ Նա տուել էր իւրեան անունս կոմս Հօխբերգ իւր կալուածներից մինի անունով, և այդպէս Լոպպին արդարև յաւիտեան պիտի հարցափորձ արած լինէր թագաւորազն Ագելբերտ Բ.ի մասին, առանց գտանելու Նորան։

«Այո՛ ամենևին յիրաւի, ամենևին յիրաւի, իմ ազնիւ պարոն, դա էր կոմս Հօխբերգը — ասաց Նա մեծապէս ուրախացած։ Այժմ խնդրեմ ասել ինձ, թէ ո՛ւր է Նորա օթևանը»։

Պաշտօնաւորը յօժարութեամբ տուեց փողոցի և տան համարաթուի անունը. իսկ Լոպպին առ ի սրտէ ուրախացած, շտապով հեռացաւ այն տեղից, մտքումը դրած, որ առաւօտուն շատ վաղ որոնէ արքայազը և իմաց տայ Նորան հարկաւոր բաները.

«Շատ լաւ եղաւ, որ ես չյապաղեցի», ասումէր Նա ինքն իւրեան։ «Եթէ սպասած լինէի մինչև էգուց, գուցէ տեսած չլինէի արքայազը և զուր պիտի եղած լինէր իմ բոլորը հարցափորձս Նորա մասին Լոնդոնի մէջ։ Ի՛նչպէս լաւ բան է, երբ որ մարդս տնտեսաբար վարվումէ իւր ժամանակի հետ և կորուսանում՝ չէ ոչ մի րոպէ անգամ։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

ԹԱԳԱՒՈՐԱԶԸ.

Առաւօտեան օրը հազիւ թէ բացուած էր, և ահա Լոպպին անկողնից վեր էր կացել և հագնուած էր։ Նա ամենայն ճշդութեամբ ծանօթացրել էր փողոցը, ուր ասել էին Նորան թէ կենումէ թագաւորազը. առանց դժուարութեան գտաւ տան թուահամարը։ Նա թակեց դուռը, խնդրեց որ Նորան Ներս թողուն, բայց մերժեցին Նորան սպասաւորքը ասելով թէ արքայազը մտադիր է մի քանի օրով ճանապարհորդել, ուրեմն և ոչ ոք կարող չէր ընդունել։

«Արդէն շատ գեղեցիկ է, որ ես այսպէս վաղ եկած եմ, յառաջ քան Թագաւորազը ճանապարհ է դուրս եկած», ասաց Լոպպին. «ինձ պէտք է նորա հետ խօսել, պատճառ, ես ունիմ մեծակշիռ բաներ յայտնելու նորան։ Անյապաղ իմաց տուեցէք Նորին արքայական Վսեմութեանը իմ գալուստս։

«Բայց — ի՞նչ մարդ էք Դուք։ Խնդրեմ ասել Ձեր անունը»։

«Անունս այս տեղ ոչինչ խորհուրդ չունի», պատասխանեց Լոպպին. «իմաց տուեցէք այն, թէ մի մարդ Նորին արքայական վսեմութեանը այն գրաւի մասին, որ եղած է Լօրդի — մոռացայ, ինչպէս էր դորա անունը.

«Կարծեմ Լօրդ Սէյմուրի հետ».

«Այո՛, արդարև Լօրդ Սէյմուրի հետ բռնած գրաւի մասին կամէր յայտնել մի շատ հարկաւոր գիտելիք»։

«Արդէն փորձ կը փորձեմ և իմաց կը տամ Նորին արքայական վսեմութեանը, բայց կարծեմ, դժուար թէ ընդունէ նա Ձեզ», ասաց սպասաւորը և հեռացաւ։ Սակայն Լոպպին, ամենևին այլապէս քան թէ կարծել էր սպասաւորը, ներս թողուեցաւ և մի րոպէ յետոյ կանգնած էր Թագաւորազնի առաջև, որին այս ճանաչեց ինքը, բայց ոչ արքայազը նորան։

«Ո՞վ էք Դուք, իմ պարոն, և ի՞նչ ունիք ասելու ինձ», հարցրեց Թագաւորազը։

«Թէ ո՛վ եմ ես, այդ յետոյ», պատասխանեց Լոպպին — «բայց ինչ որ ես ունիմ ասելու Ձեզ, այս է Լօրդ Սէյմուրը խաբեբայ մարդ է և Ձեր սպասաւոր Գէորգը մի վատթար դաւաճան»։

«Բայց իմ պարոն», ձայն արձակեց Թագաւորազը ամենևին շուարուած — «այդ ի՞նչ անպատշաճ խօսք է իմ բարեկամի, Լօրդ Սէյմուրի մասին։ Գոնեայ պիտի կարողանաք ապացուցանել, ինչ որ դուք պնդումէք»։

Այո՛, Ձեր վսեմութիւն. այդ կարող եմ ես»։ պատասխանեց Լոպպին և պարզ ու մերկ պատմեց, ինչ որ երեկ մի բաղդաւոր բերմամբ իմացել էր։

«Բայց այդ յիրաւի մի վատթար, և անարժան գործ է», ձայն տուեց Թագաւորազը։ «Լօրդ Սէյմուրը մի խաբեբա՜յ։ Եւ Գէորգը, որոյ հաւատարմութեան վերայ կամեցած կը լինէի ես տուներ կառուցանել, մի խայտառակ դաւաճա՜ն դէպ ի իւր տէրը։ Այդ անկարելի է։ Ապացոյցներ բերեցէք իմ պարոն։ Դուք ինձ օտար էք, ես տեսանումեմ Ձեզ առաջին անգամ — ի՞նչպէս կարող եմ հաւատալ Ձեր տուած ծանօթութիւններին։

«Եթէ Ձեր Վսեմութիւնը կամի սրտի վկայութեամբ վերահաստ լինել այն բանին, թէ իմ ասածս ճշմարիտ է, հրամայեցէք ապա, որ Գէորգը գայ այս տեղ և երես առ երես պարտաւորեցէք նորան իւր ամօթալից դաւաճանութեամբ», ասաց Լոպպին. «իսկ ես Ձեր թոյլտուութեամբ, մինչև կը լինի այդ բանը, կ'երթամ մի կից սենեակ, և եթէ վատթար դաւաճանը ուրաստ կը լինի, իսկոյն կ'երևիմ նորա առաջև։ Կարծումեմ, որ իմ երևելը այնպիսի սասանութիւն կը բերէ նորա վերայ, որ նա համարձակուելու չէր երկար կամակորուիլ իւր ստախօսութեան մէջ»։

«Բարի է։ Այդ հնարքը պտղաբեր կը լինի. եթէ Դուք հաւաստի էք Ձեր ասածի ուղղութեան մասին։ Տակաւին դժուար էր ինձ հաւատալ, թէ Գէորգը… բայց մեք կը տեսանենք։ Գնացէք այն կից սենեակը, իմ պարոն։ Դուռը կիսաբաց թողէք, որ կարողանայիք լսել, թէ ինչ էր խօսվում այս տեղ»։

«Լոպպին հնազանդուեցաւ։ Ագելբերտ Թագաւորազը հնչեցրեց զանգակը և հրամայեց սենեկածառային կանչել Գէորգը, որ և իսկոյն ներս մտաւ սենեակը։ Լոպպին դրան ճեղքից նայելով, իսկոյն ճանաչեց նորան։

«Գէո՛րգ», ասաց Թագաւորազը, դու կաշառք ես կերել Լօրդ Սեյմաւրից, որ իմ բանած գրաւս կորուսանել տաս։ Քո խիղճը հանգստացնելու գինը հինգ հազար ֆունտ ստերլինգ է»։

Գէորգը սպիտակեցաւ որպէս պատի կիրը, անամօթութեամբ ուրաստ եղաւ ամենայն բան։

«Ո՞վ է ասում այդ բանը», ձայն արձակեց նա։ Դա մի զարշելի ստախօսութիւն է։ Ո՛չ ինչ գնով կարող չէի ես դաւաճանել իմ բարի և գթած տէրը»։

«Եւ այնու ամենայնիւ Դու դաւաճանել ես նորան», ասաց Լոպպին, իսկոյն դրան քամակից դուրս գալով և խաբեբայի առաջև կանգնելով։ կարծեմ, որ դու ինձ ճանաչում ես»։

Ասես թէ մի ոգի, մի բարկացող վրէժխնդիր երևոյթ տեսած էր նա. այնպէս ահաբեկուած և խորտակուած դէպ ի յետ սարսափեցաւ դողացող յանցաւորը Լոպպիու կայծակնացայտ աչքից։ Իսկոյն ընկաւ նա Թագաւորազնի ոտքը, փաթաթուեցաւ նորա ծունկերին և աղաչեց ողորմութիւն։

«Ուրեմն ճշմարիտ է», ասաց Թագաւորազը ցաւած սրտով, և մի թեթև գունաթափութիւն պատելով նորա ազնիւ երեսի վերայ։ Ես այդպիսի յոյս ունեցած չէի քեզանից, Գէո՛րգ»։

Ո՜հ, տէր, փորձա՜նքը։ Արծաթը շա՜տ մեծ էր», ասաց տղան լալագին։ «Ողորմութի՜ւն, արքայազն տէր, ողորմութի՜ւն։ Երբէք, երբէք այսուհետև տեղիք տալու չեմ մի այդպիսի հրապուրանքի»։

Բաւակա՛ն է — հեռացի՛ր, բայց դուրս չգաս քո սենեկից։ Ե՛րթ, թշուառական դու»։

Տղան վեր քարշուեցաւ և դողդոջելով դուրս գնաց սենեկից. Թագաւորազը հրամայեց իւր սենեկապանին ամենայն խստութեամբ պահել նորան, և ապա վերադարձաւ դէպ ի Լոպպին։

«Ի՛նչպէս շնորհակալ լինիմ Ձեզ, իմ պարոն», ասաց նա։ Դուք ցուցել էք ինձ մի մեծ սպասաւորութիւն, յայտնելով ինձ այն դաւաճանութիւնքը, որ ընդդէմ իմ նիւթած էին։ Բանած գրաւի կորուստը պիտի պատրաստէր ինձ մի անհնարին դժուարութիւն։ Տասն և չորս օրի մէջ պիտի դուրս գնամ այս տեղից և վերադառնամ դէպ ի հօրեղբօրս աթոռանիստ մայրաքաղաքը — և իմ նիւթական հնարքս այնպէս սպառուած են, որ այն բանած գրաւի արծաթը վճարելուց յետոյ, հազիւ թէ մնացած կը լինէր ինձ ճանապարհի ծախք։ Ես յիրաւի շատ ու շատ շնորհակալ եմ

Ձեզ. իմ պարոն — պատճառ, այժմ գրաւը ի հարկէ ոչինչ և ոչինչ է, և իմ դժուարութիւնս Ձեր միջնորդութեամբ արդէն յառաջուց վերացած է»:

«Գրաւը ոչի՞նչ և ոչի՞նչ: Եւ ի՞նչ պատճառով, Ձեր Վսեմութիւն»:

«Որովհետև, խաբեբայութիւն կայ մէջ տեղում — ի հարկէ»:

«Բայց Ձեր վսեմութիւնը խաբել չէ, այլ պիտի լինէր խաբուածը», պատասխանեց Լոպպին: Դուք կը պահէք գրաւը և կը տանէք նորան»:

«Անկարելի է: Գէորգը ամենաքաջ ձիավարն է: Նա միայն կարողացած կը լինէր հնարաւորել այդ յաջողութիւնը»:

«Գիտութիւն լինի Ձեր Վսեմութեան, որ Ձեր կարմիր ձիու պատուականութեամբ կը տանէ գրաւը ամեն մարդ, եթէ միայն փոքր ի շատ հմուտ ձիաւոր էր»:

«Թո՛ղ այդ. մնումէ ձիավարութիւնը կառքով: Ո՛չ ոք բաց ի Գէորգից կարող է կառավարել իմ ունգարական ձիերի լուծը: Անկարելի՛ է»:

«Այնու ամենայնիւ, գուցէ կարելի է, Ձերդ Վսեմութիւն», ասաց Լոպպին: «Դուք տակաւին ութ օր ժամանակ ունիք: Շնորհեցէ՛ք ինձ այդ ութ օրը, և ես յանձնառու եմ լցուցանել Գէորգի տեղը»:

«Դո՞ւք. Մի՞թէ Դուք այնքան աջողակ էք ձիահեծութեան և ձիավարութեան մէջ»:

«Պիտոյ էր միայն փորձել մի փորձ»:

«Որ և մեք իսկոյն կարող էինք կատարել», ասաց Թագաւորազը: Հրա՛ւ արէք», ձայն տուեց նա դէպ ի դուրս — պիտոյ էր Աքիլլէսը թամբել և բերել գաւիթը: — Բայց», խօսքը յառաջ տարաւ նա, դարձուցանելով դէմքը դէպ ի Լոպպին, «ես զգուշացնումեմ Ձեզ, Աքիլլէսը մի վտանգաւոր անասուն է անհմուտ ձիաւորի համար:

«Կարծեմ, որ ոչ իմ համար», պատասխանեց Լոպպին վստահութեամբ և ցած շտապեց դէպ ի գաւիթը, երբ որ իմաց տուեցին թէ ձին պատրաստ էր: Թեթևութեամբ վեր թռաւ նա ձիու վերայ և Թագաւորազնի աչքի առաջև հանդիսացրեց մի այնպիսի կատարեալ ճարտարութիւն ձիահեծութեան մէջ, որ Թագաւորազը հիացած մնաց նորա աջողակութեան վերայ:

«Բաւական է, բաւական է, իմ պարոն», ձայն տուեց նա դէպ ի ցած: «Ես տեսանումեմ արդէն, որ մեզ հարկաւոր էր յառաջ տանել մեր խօսակցութիւնը միմեանց հետ»:

Փապտելով ցած իջաւ Լոպպին ձիուց և դարձեալ շտապեց դէպ ի արքայազը, որ այժմ ևս աւելի քաղցրութեամբ և քաղաքավարութեամբ, քան թէ յառաջ, ընդունեց նորան:

«Յիրաւի, Դուք ամենաքաջ ձիաւորն էք, որ ես իմ կեանքումս տեսած եմ», ասաց նա: Այս մասին մեք հաւաստի կարող էինք լինել, որ յաղթութիւնը մերն է: Բայց մնումէ գրաւի միւս կէսի հոգալիքը: Ես ունիմ մի լուծ չորս ունգարական ձիերի: Գէորգը վարժել է դորանց այնպէս, որ ամենաասուր արշաւանքի մէջ կարող է յանկարծ դադարեցնել նորանց, երբ որ ձայն է տալիս նոցա ունգարական բառս [illegible]: Նա այնպէս հաւաստի է այս մասին, և ձիանքը այնպէս հնազանդ նորան, որ նա երբէք սխալուած

չէ. աՀա սոյն այս բանիս վերայ ես Հիմնել էի իմ յոյսս, թէ տանելու եմ գրաւը։ Խնդիրը այն էր, որ մի Համարձակ գործակատարութեամբ Հիացք ու զարմացք բերուէր Հանդիսականների վերայ։ Իմ ձիանքս պիտի ամենասուր արշաւանքով դաշտի միջից վազէին մինչև Թէմզի եզրը և խիստ մօտեցած այն տեղին, ուր եզրը զառ ի վայր ցած էր իջանում դէպ ի ջուրը, յանկարծ դադար առնուին։ Այս ճարտարութիւնը ոչ մի Անգլիացի կարող չէ լցուցանել, ուրեմն գրաւը պիտի անպատճառ վճարուէր դէպ ի իմ օգուտս։ Այժմ այդ գրաւը լցուցանել անկարելի է. ոչ ոք բաց ի Գէորգից և ինձանից կարող չէ սանձաՀարել ձիանքը. բայց գրաւ բռնելու միջոցին յատկապէս պայման է դրուած, որ գրաւ բռնող անձինքը չպիտի Հեծնեն ձիանքը և կառավարեն սայլերը։ Լօրդ Սէյմուրը առաջարկել է այս պայմանը, և այժմ ի Հարկէ բացայայտ է ինձ, թէ ինչու նա այդպէս վարուեցաւ»։

«Անաս չունի, Ձերդ Վսեմութիւն», պատասխանեց Լոպպին։ Ես իմ վերայ եմ առնում, գրաւը տանել Ձեր Համար»։

«Դո՞ւք։ Բայց ո՞վ էք Դուք իսկապէս», Հարցրեց Թագաւորազը։ Ջուր չէ իմ Հարցումս. պատճառ, նախ քան թէ կարելի էր ինձ վստաՀանալ Ձեր վերայ, պիտոյ էր ինձ գիտել, թէ ինչ մարդու Հետ գործ ունէի։ Ես չկամիմ վշտացնել Ձեզ — բայց մի՞թէ անկարելի բան էր, որ Դուք լինէիք Լօրդ Սէյմուրից կաշառուած մարդ, որ ուղարկուած էր իմ մօտ մտնել Գէորգը, այն խորՀրդով, որ նա յետոյ աւելի ապաՀով ձեռք բերէր յաջողութիւնը։ Գէորգը կարող էր տակաւին ուշը վերան Հաւաքել և զգալ — բայց Լօրդ Սէյմուրը գուցէ միամիտ է իւր յատուկ ձիավարների մասին»։

«Այո՛, ես Հասկանումեմ», պատասխանեց Լոպպին ժպտելով։ «Բայց կարծեմ, եթէ Ձեր Վսեմութիւնը իմանայիք թէ ով եմ ես, այնուՀետև այլապէս կը մտածէիք իմ մասին։

«Շուտ արեցէք, ասացէք վերջապէս թէ ո՛վ էք Դուք»։

Լոպպին սառնութեամբ դուրս Հանեց ծոցից այն լուիդօրը, որ շատ տարիներից յառաջ ստացել էր Թագաւորազնից»։

«Խնդրեմ, վե՛ր կալէք, Ձերդ Վսեմութիւն», ասաց նա — ճանաչումէք այս արծաթը»։

«Մի ոսկի դաՀեկան. ինչ խորՀուրդ ունի դա»։

«Այս ոսկիս Դուք ընծայեցիք ինձ մի օր, երբ որ ես մի Թռչուն, որ Դուք Հրացանով ցած էիք գլորել, խանդակից դուրս բերեցի։ Դա էր մի լեռնային արծիւ»։

«Ուղի՛ղ է, միտս է գալիս։ Բայց ո՞վ զարմանք։ Մի՞թէ Դուք այն ժամանակի փոքրիկ անպիտան մանուկն էք»։

«Այո՛, Ձերդ Վսեմութիւն, նոյն անպիտան տղան եմ ես, միայն թէ փոքր ինչ աւելի Հասակաւոր և մեծացած», խօսքը յառաջ տարաւ Լոպպին ժպտելով։ «Դուք ինձ ասացիք այն ժամանակին, երբ որ ընծայումէիք ինձ լուիդօրը, թէ ես զորան վատնելու էի — բայց աՀա տեսանումէք այդ ոսկին այս տեղ, և աՀա մի ապացոյց, որ ես կարող եմ լինել և տնտես»։

«Բայց այս ուշադրութեան արժանի Հանդիպումն է, այսքան տարի-

ներից յետոյ», ձայն արձակեց Թագաւորազը։ Ես աւելի և աւելի պայծառապէս յիշումեմ, որ Դուք այն ժամանակին յիրաւի ամենևին, ինչպէս ասումեն — ներեցէք ինձ, սիրելի պարոն — մի կատարեալ շրջմոլիկ և օրագող էիք — իսկ այժմ . . .»

«Այժմ, չեմ ես այլ ևս այդպիսի», յաւելացրեց Լոպպին։ «Բայց որ ես չեմ այդպիսի, այդ բանը պարտական եմ Ձեզ, Ձերդ Վսեմութիւն»։

«Ինձ», զարմացած հարցրեց Թագաւորազը։

«Այո Ձեզ։ Բաց ի Լուիդօրից Դուք տուեցիք ինձ այլ ևս երկու բարի, շատ բարի գործական խրատներ։ Դուք ասացիք ինձ, նախ. «Ժամանակը արծաթ է, ուրեմն գործ դիր քո ժամանակը»։ Երկրորդ, «Ուսիր։ Ինչ որ դու կ'ուսանիս, քո համար կ'ուսանիս. Արդեօք գալիս է Ձեր միտը այս խօսակցութիւնը իմ հետ»։

Այո, այո, գալիս է միտս։ Այն երկու խրատները այնպէս վատ չեն։ Ուրեմն Դուք և հետևած էք դոցա»։

«Ամենայն բարեխղճութեամբ. պատճառ, ես միշտ ուրախութեամբ սպասումէի այն րոպէին, երբ միւսանգամ տեսանելու էի Ձեզ։ Յետոյ դարձեալ միանգամ տեսայ Ձեզ, երբ որ ես շնավարժ մանուկ էի և Դուք ինձ մի շուն ընծայեցիք։ Գիտէ՞ Ձեր Վսեմութիւնը և այս բանս»։

«Այո, այո. գիտեմ և այդ — այն շրջմոլիկ մանուկը փոքր ինչ ուղղուած էր, թէպէտ դեռ ևս ոչ ամենևին ուղիղ ճանապարհի վերայ ոտք կոխած. նա գործ էր դնում իւր ժամանակը, բայց տակաւին ոչ պատշաճաւոր կերպով»։

«Ամենևին այդպէս, Ձերդ Վսեմութիւն։ Դուք ասացիք ինձ այդ խօսքերը» զրոյցը յառաջ տարաւ Լոպպին — և ես, ես դորանց տպաւորեցի մտքումս։ Եւ ուստի ամենայն բան, ինչ որ հանդիպեցաւ և ինձ հասանելի էր. շնավարժ մանուկից դարձայ ախոռի սպասաւոր — ախոռի սպասաւորից — ձիադարման, յետոյ գնացի ուսումնարան, դարձայ գրագիր — գաղտնի գործերի ատենադպիր — մի մաղաչափ բան էր պակաս, որ դառնայի պրեզիդենտ — յետոյ եղայ սայլակ գլորող երկաթուղու վերայ — վերջապէս ուղեշինութեան ճարտարապետ և այդպիսի կոչումն ունիմ տակաւին, կամ թէ յոյս ունիմ վերստին ստանալ դորան»։

«Արդարև, դա է մի արժանայիշատակ ասպարէզ կեանքի։ Ուրեմն, ի՞նչ էք ուսել Դուք յատկապէս»։

«Կարդալ, գրել, համարել, շուներ վարժել, ձի հեծնել, Ֆրանսիարէն, անգլիարէն, քաղաքական իրաւագիտութիւն, քաղաքական տնտեսութիւն, մաթեմատիկա, ճարտարապետութիւն և ոչինչ աւելի։ Վերջին պաշտօնի մէջ կամ ես ներկայումս»։

«Ի՞նչ ասեմ. յիրաւի այդ բաւական բան է, և ես տեսանումեմ, որ Դուք Ձեր ժամանակը հիմնաւոր կերպով գործ էք դրել», ասաց Թագաւորազը բարեմիտ ժպտմամբ։ Մեզ անպատճառ հարկաւոր է աւելի մօտ ծանօթանալ միմեանց հետ»։

«Ուրեմն Դուք հաւատումէք ինձ, Ձերդ Վսեմութիւն»։

«Անտարակոյս։ Ամենայն սրտից։ Ո՞չ ապաքէն մեք լաւ հին ծանօթներ ենք»։

«Եւ գրա՞ւը»։

«Եթէ Դուք կարծումէք, թէ դորան կարելի է տանել, ապա փորձեցէք Ձեր բաղդը»։

«Ոչ թէ միայն կարծումեմ, այլև գիտեմ այդ, ենթադրելով, որ Ձեր պատուելի Լօրդը չիմանայ, թէ մեք տեղեկացած էինք նորա հնարագործութեանը և գուշակել էինք նորա խաբէբայ խաղը»։

«Այդ մասին թո՛ղ հոգաբարձու լինինք։ Գէորգի վերայ պիտի հսկել ամենայն խստութեամբ, որ նա ոչինչ մարդու տեղեկութիւն չտայ»։

«Այնուհետև ամեն բան կարգումն էր։ Խնդրեմ միայն, որ Ձեր Վսեմութիւնը իմաց տայ իւր բոլոր ծառաներին, թէ ես ձիավար եմ կարգուած Գէորգի փոխանակ»։

«Դո՞ւք. Ձիավո՞ր։ Երբ որ արդէն գրեթէ պրեզիդենտ պիտի դարձած լինէիք», ասաց թագաւորազը։

«Եւ ինչո՞ւ ոչ, Ձերդ Վսեմութիւն։ Դուք մոռանումէք, որ ես եղած եմ նոյնպէս սայլակ գլորող, և բաց ի դորանից դա մի լոկ խաղարկութիւն է ութ օրով»։

«Բարի է. ուրեմն ես կը հոգամ միւս հարկաւոր բաները — բայց այժմ պատմեցէք Դուք ամենից յառաջ, մանրամասնաբար, Ձեր կեանքի ընթացքը։ Ձեր գլխից պիտի արժանի գիտութեան, զարմանալի անցքեր անցած լինին»։

«Բայց Ձեր ուղևորութիւնը, արքայական Վսեմութիւն»։

«Դա կարող է յետ ձգուիլ։ Նստեցէք, թո՛ղ նախաճաշիկ առնենք — և ապա — պատմեցէք»։

Լոպպին ընդունեց թագաւորազնի ցանկութիւնը իբրև հրաման և մի ըստ միոջէ ու ճշգութեամբ պատմեց ինչ որ մեք կարդացինք նախընթաց թերթերի վերայ։ Թագաւորազը նկատեց արդարև, որ ինքը գործ ունէր, ոչ թէ միայն մի արմատովին արդարամիտ, այլև շատ խոհական և իւր աշխարհի որպիսութիւններին քաջ ծանօթ և վերահասու տղամարդի հետ։ Նա զարմանումէր Լոպպիու լուսաւոր հայեացքի վերայ, որ նա ամեն պատեհ միջոցում դուրս էր փայլեցնում, և նորա արդարամտութիւնը Պրեզիդենտի պահանջողութիւնների ընդդէմ, ազդեց արքայազնի մէջ ամենախորին յարգանք դէպ ի Լոպպին։ Թագաւորազը հարցրեց հազարաւոր բաներից, և ամեն բաների մասին տուեց Լոպպին շատ հիմնաւոր պատասխանք»։

«Ազնիւ պարոն», ասաց վերջապէս արքայազը, երբ որ երկուքը բոլոր ժամանակը ճաշից յառաջ անցուցել էին միմեանց հետ զրոյց տալով, և Լոպպին կամէր հրաժարական ողջոյն տալ — «ես առ ի սրտէ ուրախ եմ, որ մեր ծանօթութիւնը նորոգուած է։ Մեզ պիտոյ է աւելի մօտ ծանօթանալ միմեանց հետ։ Ես յոյս ունիմ, որ Դուք իմ հետ կը վերադառնայիք Գերմանիա և Ձեր հմտութիւնների պտուղքը կը նուիրէիք ոչ թէ մի օտար տէրութեան, այլ Ձեր հայրենիքին»։

«Բայց Ձերդ Վսեմութիւն, որչափ ես յօժար էի այդ բանին, անկարելի է այդ», պատասխանեց Լոպպին — «Ձեզ յայտնի է արդէն, որ Պրեզիդենտը, կամ թէ այժմեան մինիստրը ուխտել է ինձ մի մշտնջենաւոր թշնամութիւն»։

«Ինչ որ հայումն դէպ ի այդ մարդը, իմ սիրելի, դորան թողեցէք իմ կամքիս», ասաց Թագաւորազը։ Դուք նախ և յառաջ կը մտանէք ոչ թէ տէրութեան, այլ իմ պաշտօնիս մէջ։ Միւս բաները կը գտանեն իւրեանց ճանապարհը։ Ես կարգումեմ Ձեզ իմ առենադպիր, իմ գանձապետ, իմ գաղտնի խորհրդական, կարճ ասեմ — իմ ձեռք ու ոտք։ Ձեր թոշակը կը որոշէք ինքներդ։ Ոչինչ հակառակութիւն աւելի, իմ ազնիւ պարոն։ Ձեր աջը — իբրև առհաւատչեայ»։

Արդեօք Լոպպին մատո՞ւց իւր աջը։ Այո՛ Լոպպին մատուց աջը արտասուքը աչքերում. այդպէս շարժեց նորա սիրտը Թագաւորազնի գթութիւնը։ Հազիւ կարողացաւ նա բերանից հանել մի քանի շնորհակալական բանք»։

«Շնորհակալ մի՛ եղէք ինձ, ազնիւ պարոն», կտրեց նորա խօսքը արքայազը։ Ես լցուցանումեմ միայն հին և նոր պարտականութիւնք։ Դուք գիտէք, որ ես խոստացայ հոգալ Ձեր վիճակը, եթէ հետևէիք իմ խրատներին — և ես կարծումեմ, որ արդէն ժամանակ էր լցուցանել այդ հին խոստումը։ Թո՛ղ այդ. Դուք յայտնի կացուցանելով այն խաբեբայութիւնը որ պիտի նիւթուէր դէպ ի ինձ, յետ էք պահել իմ համար մի արծաթ աւելի քան թէ հարիւր քան հազար թալեր. ուրեմն արժան էր միայն, որ ես աշխատէի երախտագէտ գտանուիլ։ Վերջապէս» — յաւելացրեց արքայազը աւելի ծանրութեամբ — «քաջայոյս եմ, որ Դուք կը ցուցանէք Ձեր հայրենիքին ամենալաւ սպասաւորութիւնք, եթէ Ձեզ պատեհ միջոց տրուէր, և այս առ ի սրտէ վկայութիւնը աւելի պարտք է դնում իմ վերայ, քան թէ բոլոր միւս բաները։ Իսկ այժմ. իմ սիրելի ձիավար — լաւ նայեցէք ձիաներին և մի՛ կորուսանէք իմ բռնած գրաւը։

«Ներհոգ եղէք, Ձերդ արքայական Վսեմութիւն։ Իմ հին աջողակութենից ինձ մնացած կը լինի այո՛ այնքան բան, որ ես կարողանայի կառավարել չորս լուծ ձի։

Լոպպին չվերադարձաւ դէպ ի իւր օթևանը, այլ օր ու գիշեր գտանվումէր ունգարական ձիաների շրջակայքում։ Նա հեծնումէր ձիաների վերայ, վարումէր ձիանքը և պարապումէր իւր անցած օրերի գործերին մի ջերմեռանդութեամբ, որ հազիւ թէ քնելու և հաց ուտելու միջոց էր թողում նորան։ Բայց իւր դէպ ի դուրս ձիընթացութիւնների մէջ նա միայնակ էր. ոչ ոք չունէր համարձակութիւն ուղեկից լինելու նորան. նա չկամէր ընկերակցութիւն և ոչ իսկ Թագաւորազնի կողմից։ Բայց սա տեսանումէր այնու ամենայնիւ, որ ձիանքը զարմանալի սովորած էին Լոպպիուն։ Եթէ սա կանչումէր, սուլումէր միանգամ — ձիանքը գալիս էին դուրս թռչելով ախոռից, լիզումէին նորա ձեռները և երեսը և խաղումէին նորա չորս կողմը

իբրև մանուկ շունէր։ Այս բանս հանգստացրեց արքայազնի սիրտը և այնուհետև գրաւի վերջը չէր պատրաստում նորան ոչինչ հոգածութիւն։

Այսպէս հասաւ վճռահատութեան օրը։ Թագաւորազը կառքով ուղևորուեցաւ դէպ ի ձիամարտութեան ասպարէզը և Լոպպին ձիու վերայ հեծած, զուարթութեամբ արշաւումէր թեթևընթաց կառքի կողքին։ Երբ որ տեղ էին հասած, արդէն Լօրդ Սէյմուրը, ձիամարտութեան դատաւորքը և բազմաթիւ մեծատուն հանդիսականներ ժողովուած էին, որ հայցասիրութեամբ վննուէին արքայազը և նորա ուղեկիցը։ Լօրդ Սէյմուրը աչքերով որոնումէր իւր չորս կողմում. բայց երբ որ չգտաւ իւր որոնելին, կնճռեց ճակատը։

«Ո՞ւր է Ձեր Գէորգը, արքայազն պարոն», հարցրեց նա։

«Նա կարող չէ դուրս գալ իւր սենեկից, մայ Լօրդ, և ես ստիպուած էի առնուլ այլ ձիավար։ Բայց դա ոչինչ արգելք չէ։ Ես հաստատ եմ իմ գրաւի վերայ»։

«Դուք կարող էք հաստատ մնալ, թագաւորազն», ասաց Լօրդ Սէյմուրը տհաճութեամբ — բայց ես կարող չեմ։ Պայման էր դրած, որ Գէորգը լինէր ձիընթացը և ձիավարը»։

«Չկարծեմ, թէ այդպիսի պայման եղած է», պատասխանեց թագաւորազը։ Բայց թող ձիամարտութեան դատաւորքը վճռեն տարակուսանքը։

Եւ դատաւորքը վճռեցին. վճիռն էր դէպ ի օգուտը արքայազնի, որ և այժմ յանձնեց նոցա գրաւի արծաթը, ինչ որ վաղուց արդէն արել էր Լօրդ Սեյմուրը»։

Ձիամարտութիւնը սկսուեցաւ։ Լոպպին խթեց իւր կարմիր ձիու կողերը. այդ ազնիւ անասունը ծտի պէս թռչտումէր ցանգերի, փոսերի և փակարանների վերայով և շատ ու շատ յետ թողեց իւր քամակում Լօրդ Սէյմուրի դեղնագոյն ձին։ Մի ընդհանուր հաւանութիւն հասաւ Լոպպիուն, երբ որ դա վերադարձած էր իւր արշաւանքից։ Գրաւի կէս մասը տարուած էր արդէն թագաւորազնի համար — այսուհետև կարող չէր նա ոչինչ խորտակել։

Այլերը յառաջ եկան այժմ։ Որպէս Լոպպին, նոյնպէս և Լօրդի ձիավարը կառավարեցին իւրեանց ձիանքը այնպիսի ճարտարութեամբ և արագութեամբ, որ երկար ժամանակ անվճռելի մնաց թէ ով էր գրաւի միւս մասի տանողը։ Ոչ մի կողմին կարելի չէր ընծայել յաղթութիւնը, և Լօրդ Սէյմուրը ուրախացած, արդէն պարզումէր ձեռը դէպ ի իւր ցած դրած արծաթը, որ նա կարծումէր գոնեայ ապահովեցուցած, թէև ոչինչ դորա վերայ չյաւելանար. և ահա Լոպպին քաղաքավարութեամբ բայց վճռակի յառաջ բերեց մի ընդդէմ պատճառ։

«Այս տեղ հարկաւոր է ցոյց տալ աչողակութիւն սայլարշաւութեան և ձիերի վարժութեան մէջ», ասաց նա։ Մինչև այժմ ես ցոյց եմ տուել նոյն ճարտարութիւնը, ինչ ճարտարութիւն ցոյց է տուել Լօրդ Սէյմուրի ձիավարը — այժմ մի վերջին հանդէս փորձի։ Եթէ իմ հակառակորդս ինձանից յետոյ լցուցանէ այդ փորձը, այնուհետև իմ դրուած սիրոջ

թոյլտուութեամբ պիտի գրաւը կորուսած համարուի մեր համար, բայց եթէ նա չկարողացաւ, այնուհետեւ գրաւը տարուած էր մեր համար։

«Հաւան եմ», ձայն տուեց Լօրդ Սեյմուրը, որ այս առաջարկութենից կարող էր միայն օգուտ ստանալ։

Ձիամարտութեան դատաւորքը գրեցին թղթի վերայ պայմանքը, և Լոպպին ցած թռաւ սայլից, արձակեց ձիաների սանձերը, ձգեց դորանց դէպ ի մի կողմ և դարձեալ վեր ելաւ սայլը։ Բոլորեքեան հիացան — նոյն իսկ արքայազը։

«Այդ ի՞նչ բան է, Լոպպի», ձայն արձակեց արքայազը։ Արդեօք խելագարուա՞ծ ես դու, որ կամէիր առանց սանձերի սայլարշաւ լինել»։

«Թոյլ տուեցէք ինձ, ողորմած տէր. ես իմ գործս շատ լաւ գիտեմ — պատասխանեց Լոպպին, տարածեց ձեռը և սուլեց կարճ շնչով։ Կայծակի արագութեամբ թռան պատուական ձիանքը, թողնելով իւրեանց հետ և սայլը։

«Նոքա գլուխ կ'առնուն և կը փախչեն», դառնութեամբ ժպտեցաւ Լօրդ Սեյմուրը։

Բայց նա սխալվումէր — մի խօսքով, մի ձայնարկութեամբ, մի սուլմամբ Լոպպին կառավարեց ձիանքը — յետ դարձաւ — աղեղնաձև շրջան առաւ հիացած հանդիսականների բազմութեան չորս կողմով, և ապա յանկարծ նետի արագութեամբ վազեցրեց ձիանքը դէպ ի Թէմզէի ափեզրը, որ այս տեղումն զառ ի վայր և սեպացած դէպ ի ցած էր իջանում։

Նորա և նորա թուշը գունաթափուեցաւ, և նոյն ինքն արքայազն Ադելբերտը հազիւ կարողացաւ յետ պահել իւր անհանգստութիւնը. պատճառ, անդունդը շատ խոր էր, և եթէ ձիանքը դէպ ի ցած գլորուէին, պիտի ջարդուփշուր լինէին սոսկալի կերպով։ Ձիանքը աւելի և աւելի մօտեցան այդ կործանաբեր եզրին — մի րոպէ, և նոքա պիտի չքանային խորքի մէջ — ձիանքի սմբակները ահա ամենևին մօտից շօշափումէին դէպ ի ցած իջանող ահագին խորութեան ափը — այժմ, այժմ — կորուստը երևումէր անփախչելի — «Նա կորա՛ծ է», ձայն էին տալիս ամենքեան — և ահա՛, յանկա՛րծ, միակ խթմամբ դադարեցան ձիանքը, սմբակները ասես թէ արմատացած գետնի մէջ, և խրխնջալով յետ նայեցին դէպ ի իւրեանց համարձակ կառավարը։ Մի խօսք — և ահա ձիանքը արագութեամբ թեքուեցան դէպ ի աջ և թունդ վազողութեամբ վերադարձան այն տեղ, որ տեղից սկսել էին իւրեանց արշաւանքը։ «Քերեք» ձայն տուեց Լոպպին, և ձիանքը դադարեցան իսկոյն։

Բարձրացաւ մի ընդհանուր ցնծութիւն. նոյն ինքն Լօրդ Սէյմուրը, թէպէտև նորա շրթունքը կատաղութենից և զայրացմանից դողումէին, խոստովանեց, որ նորա գրաւը կորած էր և հեռացաւ։ Արքայազը ընդունեց արծաթի գումարները. Լոպպին դարձեալ կարգի դրեց ձիերի սանձերը, փայփայեց շողոքորթելով իւր ընտիր ձիաների վիզը, և ամենքեան վերադարձան դէպ ի Լոնդոն — արքայազը շատ գոհունակ, որ չէր եղած

խաբերայութեան զոհ. Լոպպին բաղդաւոր, որ իւր վերայ առած գործը լցուցել էր այդպիսի հրաշալի կերպով։

«Ժամանակը արծա՜թ է. ժամանակը արծա՜թ է», մռմռաց նա քթի տակին։ «Եթէ ես իբրև ախտի սպասաւոր, չեղած լինէի ժրաջան, արքայազը կորցրած կը լինէր իւր արծաթը։ Ի՛նչպէս լաւ բան է, եթէ մարդս հիմնաւոր կերպով ուսանում է, ինչ որ ուսանում է։ Այնուհետև այդ ուսածը ուսած է, ոչ թէ իւր համար միայն, այլև միւսերի համար միանգամայն։ Այո՛, այո՛, ժամանակը արծաթ է։ Եւ արքայազն իշխանը ապաշաւելու չէ, որ այդ իմաստուն առակը տուել է ինձ ուղեկից իմ կեանքի ճանապարհի վերայ»։

Արքայազն իշխանը, արդարև երևում չէր, թէ ապաշաւում էր այդ խրատուութիւնը, այլ մանաւանդ շատ գոհունակ էր Լոպպիուց։ Երբ որ սա վերադարձած էր դէպ ի տուն, արքայազն իշխանը հրամայեց կոչել նորան և մատուցոյց արեց մի կոյտ ոսկիներ, որ թափուած էին սեղանի վերայ։

«Վեր կալէք Ձեր արծաթը, իմ սիրելի», ասաց նա։

«Ի՞նչ արծաթ», հարցրեց Լոպպին ամենևին զարմացած։

«Ահա այն արծաթը, որ Լորդ Սեյմուրը Ձեր վերայ տանել է տուել»։

«Ի՞մ վերայ։ Ձե՛ր վերայ, արքայական Վսեմութիւն»։

«Ո՛չ այդպէս, սիրելի», պատասխանեց արքայազն իշխանը ժպտելով։ Ես բոլորովին գոհունակ եմ, որ Դուք իմ արծաթս փրկել էք — այն միւսը պատկանում է Ձեզ, որովհետև Դուք Ձեր աջողակութեամբ ստացել էք այն։ Ուրեմն բանը վերջած է։ Սակայն», յաւելացրեց նա ժպտելով, «սակայն Դուք պիտի խոստովանէք, որ իմ տուած խրատը ճշմարիտ է։ — Այդպէս չէ՞. ժամանակը արծաթ է, և ես Ձեզ տուած չեմ ոչինչ վատ խրատք»։

Լոպպին չգիտէր, արդեօք արթնութեա՞ն թէ երազի՞ մէջ էր։ Այդպիսի ահագին կոյտ ոսկիների և այդ բոլորը պատկանո՞ւմ էր նորան։ «Բայց այս մի մեծ գոյք է, մի հարստականի գոյք» թոթովեց նա։

«Անտարակոյս. այս է այն արծաթագլուխը, որ Դուք Ձեր ժամանակի իմաստուն գործադրութեամբ ժողովել էք», պատասխանեց թագաւորազն իշխանը։ Վեր կալէք դորան և վայելեցէք։ Դուք ամենևին արժանի էք դորան, և ես բաղդաւոր եմ, որ Ձեր հաւատարիմարար հետևողութիւնը իմ խրատներիս, բերել է Ձեզ այդպիսի բարի պտուղներ։ Այս պտուղները են արդարև այնպիսի պտուղներ, որ դուք պարտական էք նախ և յառաջ Ձեր հմտութիւններին. երկրորդ, նոյնպէս բաղդի բերմանը։ Բայց Ձեր համար հասանումեն և այլ պտուղներ և [illegible] գոնեայ կը լինին միայն Ձեր ժրաջանութեան և արդարադատութեան պտուղքը։ Ութ օրի մէջ մեք կ'ուղևորուինք դէպ ի Գերմանիա, Դուք կը լինիք ինձ ուղեկից — նախ և յառաջ իբրև բարեկամ։ Բայց թէ Ձեր ապագայն մի օր լինելու է այնպիսի, որ Դուք կարող էիք ներգործել օրհնաբեր կերպով, այդ բանը թողեցէք իմ հոգաբարձութեանը։ Եւ աւելի բացայայտ, քան թէ մինչև այսօր, կը դառնայ Ձեզ այն ճշմարտութիւնը, որ դուք արդէն անտարակոյս զգացել էք Ձեր կեանքի մէջ, այն ճշմարտութիւնը, որ ոչ թէ միայն ժամանակը

արծաթ է, և մարդս ոչ թէ միայն իւր համար է ուսանում, ինչ որ ուսանումէ, այլև միւսերի և իւր ընկերների օգտի համար, և թէ չկայ ոչինչ ապահով աղբիւր բաղդաւորութեան և գոհունակութեան, եթէ ոչ, ժամանակի իմաստնապէս գործադրութիւնը և հոգևղէն գանձերի ժողովումը»։

Արքայազն իշխանի խօսքը իրաւ էր. Լոպպին օրէ օր աւելի քաջ տեղեկացաւ այս բանիս։ Նա ուղևորուեցաւ արքայազնի հետ դէպ ի Գերմանիա. մի տարի յետոյ արքայազը նստաւ թագաւորութեան աթոռ, և Լոպպին, որ մի օր եղած էր չնավարժ տղայ, դարձաւ Պրեզիդենտ — ապա մինիստր, և, որ աւելի արժանաւոր բան է քան թէ այս, ամենայն կացութեան մէջ մնաց իւր՝ իշխանի բարեկամը, — մի վերապատուած, մի մեծարուած ու սիրած բարեկամ։

Քինդերլէյն տիկինը, նորա մօրաքոյրը, տակաւին այս և այն տարին խնդաց իւր որդեգրի բաղդաւորութեան վերայ, և իրաւամբ. պատճառ, Լոպպին չմոռացաւ իւր մանկութեան օրերը, այլ այդ բարի կնոջը հասցրեց այս և այն լաւութիւնը և պայծառացրեց նորա ծեր օրերը առատ բարերարութեամբք։

«Այո՛, այո՛», երբեմն քթի տակին խօսումէր այդ կինը, երբ որ Լոպպիու սենեկապանը որ և իցէ պարգև բերումէր նորա փոքրիկ սենեակը, «այո՛, այո՛, մանուկը այն ժամանակ սուտ չէր ասում։ Ահա տեսանումեմ. ժամանակը արծաթ է, ժամանակը արծաթ է, և եթէ այդ բանը աւելի վաղ իմացած լինէի ես, գուցէ և ես աւելի բաղդաւոր եղած լինէի կեանքիս մէջ։ Բայց այժմ անագան է։ Ինչ որ մարդս կամենումէ ուսանել, պէտի ուսանի մանկութեան օրերում։ Ժամանակը արծաթ է, և ինչ որ մարդ ուսանումէ, իւր համար է ուսանում։ Երանի՜ թէ այս բանս մտածէին մանուկները։ Մանուկնե՜րը, մանուկնե՜րը։ Ո՜հ, ո՜վ կարող էր դարձեալ մանուկ դառնալ։

Բայց դուք, իմ ազնիւ ընթերցողներ, Դուք մանուկ էք։

Ս. Նազարեանց։

ՀԵՐՈՍ.

Ո՜վ հերոս, հերոս, ինչո՞ւ դու այդպէս
Գորտերի նման սառնարիւն դարձած,
Մտնումես միայն հողմերի հանդէս,
Ոչ մի հայրենի գործով չշարժուած։

Ճշմարտութիւնը ընկած է գետին,
Նորան յարուցիչ ոչ ոք չէ լինում.
Հանդիսանումէ ստութեան հոգին,
Ընդէ՞ր ախոյեան Դու վեր չես կենում։

Ք՛ո՛ է այս պարծանք. զգաստացի՛ր հոգով.
Մատենագրութեան ոսկեղէն թերթեր
Թո՛ղ լցուցանուին քո յիշատակով,
Ապագայք հիւսեն քեզ դափնի պսակներ։

Կը զարթեցնեն, անշուշտ, իմ խօսքեր
Քո մէջ մեծամեծ հարցասիրութիւնք.
«Ո՛ւր են այդ հերոսք, ո՛ւր նոցա փառքեր,
Ո՞ւր նոցա գործեր, հոյակապ արդիւնք»։

Երդեօք հողի մէջ դրած չէ՞ն նոքա,
Կեր ճճիների, անկենդան դիակ.
Ա՞յս է նոցա փառք, թէ տառեր ոսկեայ.
Խօսի՛ր դու յայտնի և ոչ քօղի տակ». —

Իրա՛ւ, երկրի խորք ընդունեց նորանց,
Չկառուցին նոցա մի անշունչ արձան.
Բայց կարդացե՞լ ես դու այն մշտապանծ
Ցիշատակարան համաշխարհական.

Գիտե՞ս դու նորա պարունակութիւն.
Կը գտնե՞ս դու այդ մեծ մատենի մէջ
Ոտնակոխ արած սուրբ ճշմարտութիւն,
Կամ թէ ստութեամբ խանգարուած մի էջ։

Այս տեղ կենդանի են այդ Հերոսներ,
Ապրումեն կեանքով մի յաւերժական.
Նոցա քրտնաջան, անմահ վաստակներ
Ստանումեն այս տեղ փոխարէն արժան.

Ուրեմն, Հերոս, քաջացի՛ր հոգով,
Եղի՛ր դու պաշտպան սուրբ ճշմարտութեան,
Գո՛ւրս եկ ախոյեան ամուր դրօշակով,
Տապալի՛ր հիմքը գարշելի ստութեան.

4 Նոյեմբ. 1864. Գէորգ Սմբատեանց.
ՀԱՇՏԱՐԽԱՆ.

ԿՐՕՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ·

Մեսիան իւր գործը աշխարհի վերայ լցուցել էր: Մի նոր, քաջութեան հոգի ստանալով զօրութեամբ Հոգւոյն սրբոյ, որ Հոգեգալստի օրին թափուել էր առաքեալների վերայ, սոքա դուրս գնացին ամենայն աշխարհ և քարոզեցին ազգերին խաչելեալը և Աւետարանը, կամ ուրախաբեր լուրը Աստուծոյ արքայութեան մասին աշխարհի վերայ: Այնուհետև հաւատացեալ Հրէայք և հեթանոսք, շատ անգամ ծանր հալածանքի տակ, դարձան դէպ ի Տէրը և նորա ուսումը: Քաղաքներում և գիւղերում յառաջացան փոքրիկ քրիստոնէական հասարակութիւնք, որ լցուցանումէին իւրեանց աստուածպաշտութիւնքը և դոցա մէջ հետևումէին Փրկչի նախկին բարեկամներից և խոստովանողներից դրած ծէսերին և արարողութիւններին: Այսպէս կազմուեցաւ այն սուրբ հասարակութիւնը հաւատացեալների և երկիւղածների, որ յետոյ օրէ օր աւելի ընդարձակուեցաւ, իւր աստուածպաշտական կարգադրութիւնքը բազմացրեց և միաբան էր նոցա հետ, որ տակաւին խոտորվումէին նորանից — այն հասարակութիւնը որ յետոյ աշխարհի մէջ յայտնի դարձաւ քրիստոնէական եկեղեցու անուամբ:

Ուսմունքը որ ԻՔ Յէ----ը տուել էր, շատ պարզ էին եղած: Նոցա խրանացուցիչ ճշմարտութիւնը հասկանալի էր և անուս մարդուն, այլ և երեխաներին: Այդ պատճառով ևս նոքա շուտով տարածուեցան աշխարհի վերայ և չէին ուսումնական ու խորամանկ քննութիւնների և մեկնութիւնների նիւթ: Յիսուսը ցոյց էր տուել մահկանացուներին միակ կենդանի Աստուածը, տիեզերքի տէրը, իբրև նոցա հայրը. նա ցոյց էր տուել նոցա, յաւիտենական կեանքը իբրև նոցա նպատակ. նոցա սրբագործութիւնը, նոցա մեղքերի և սխալների յաղթահարութեան ճանապարհը, ձգտողութիւնը դէպ ի կատարելութիւն մարդասիրական գործերով և խորհուրդներով, իբրև այն կոչումը, որ նոքա կոչուած էին:

Նորա կեանքը պիտի դառնար նոցա կեանքի օրինակ, և միաւո-
րութիւն Աստուծոյ հետ նոցա ամենավերին բարին: Սորա հակա-
ռակ քարոզել էր նա, որ մի մոլորական առ ի ցոյց բարեգործու-
թիւն, մի լոկ պահպանութիւն արտաքին ծէսերի և եկեղեցական
արարողութիւնների, կարող չէ տանել դէպ ի յաւիտենական ե-
րանութիւնը: Այս պատճառով խօսեց նա իւր աշակերտ Յով-
հաննու բերանով. Օրէնքը Մովսէսի ձեռով տրուեցան, շնորհքը
և ճշմարտութիւնը Յիսուսի Քրիստոսի ձեռով եղան և նորա ա-
ռատութենից առել ենք մեք շնորհք փոխանակ շնորհքի:

Արեմն ոչ թէ արարողութիւնների արտաքինքն են նոր կրօնը,
որ Մեսիան բերել է և պատուիրել է մարդկային ազգին, այլ ներքին,
աստուածահաճոյ ուղղագործութիւնը սրտի: Այդ արտաքինքը
(դուրսի բաները) որպէս մովսիսական օրէնքը, են մարդու գործ,
բայց շնորհքը և ճշմարտութիւնը, սուրբը և կատարեալը, որ
պիտի բնակէ մարդկային սրտի մէջ, է աստուածեղէնը:

Այս պատճառով, առաջին քրիստոնէական հասարակու-
թիւնքը ունէին և միայն սակաւաթիւ եկեղեցական արարողու-
թիւնք, և սոյն իսկ սակաւաթիւ արարողութիւնքը շատ պարզ
էին: Սկզբում տակաւին մի քանիքը հրէական եկեղեցու արարո-
ղութիւններից յետ պահուեցան, և նոյն իսկ առաքեալք ընդդէմ
չէին այն բանին, որ, զոր օրինակ, այս և այն հաւատացեալ Հ-
րէայք իւրեանց սովորաբար պահած պահքի վերայ հաստատ կա-
յին կամ թէ այս և այն կերակուրքը պիղծ էին համարում: Պատ-
ճառ, այս բոլոր համարվում էր երկրորդական բան. բայց ուղղա-
գործութիւն սրտի, հաւատ և վստահութիւն դէպ ի Մեսիան,
էր նոցա համար ամենից գլխաւորը: Միակ, նոյն իսկ Քրիստոսի
ձեռով սահմանադրած հանդիսաւոր արարողութիւնքը էին Մը-
կրտութիւնը չափահասների, որ խոստովանում էին Յիսուսի Քը-
րիստոսի ուսումը և վերջին ընթրիքը կամ Հաղորդութիւնը: Շու-
տով դոցա վերայ յաւելացուցին և սիրոյ սեղանքը (Ագապէ աս-
ուածք յունական բառով) ուր հարուստք և աղքատք եղբայրա-
կան հաւասարութեամբ միմեանց հետ վայելում էին ինչ որ ունէին:

Առաջին ուսուցիչքը քրիստոնէական եկեղեցու տակաւին չէին
միմեանցից բաժանուած, ինչպէս այժմ, թէ իւրեանց պաշտօնա-
կատարութեան մէջ և թէ իւրեանց անուններով: Նոքա ասւու-
մէին հասարակութիւնների մէջ Πρεσβύτεροι (աւելի հասակաւորք),

որովհետև այդպիսիք էին նոքա, կամ թէ ἐπίσκοποι, որ կամի ասել վերակացուք, վերատեսուչք։ Նոքա չունէին այնպիսի իշխանութիւն և ոչ այնպիսի ձոխ եկամուտք, որպէս յետոյ ժամանակներում։ Նոքա էին օրինակ երկիւղած խոնարհութեան և այդ բանի մէջ հետևում էին առաքեալներին, որ չէին ոչինչ առանձին հասարակութեան առաջնորդք, այլ տեղեց տեղ ճանապարհորդում էին, իւրեանց ձեռքի աշխատութեամբ ապրում էին և մարդասիրական տուրքեր ընդունում էին հարուստ քրիստոնեաներից։

Բայց երբ որ առ փոքր փոքր բազմացաւ հաւատացեալների թիւը մի հասարակութեան մէջ և քրիստոնէական հասարակութիւնների թիւը աշխարհների մէջ, այնուհետև բազմացան և ուսուցիչքը և վերակացուքը, զանազան հասարակութիւնների վերայ կարգուեցան վերակացուք, գործերը աւելի հեշտ հոգալու, նոցա շատութիւնը մասն մասն բաժանելու և առ հասարակ աւելի լաւ կարգ պահպանելու համար։ Սկսան, հրէական սովորութեանը հետևելով, ուսուցիչքը և քահանայքը համարել աշխարհականներից որոշուած մի դասակարգ. նուիրել նորանց ծէսերով, ինչպէս Հրէից ու հեթանոսների մէջ սովորութիւն էր. տուեցին նոցա առանձին իշխանութիւնք հասարակութենից արտաքսելու յանցաւորքը կամ թէ ապաշխարանք դնելու նոցա վերայ։ Ներս բերեցին հիւանդների և մեռանողների օծումը. նուիրական իւղը (մեռոնը), Դրոշմը և նմանապիսի բաներ։ Արարողութիւնների թիւը, որպէս և նոցա փառահեղութիւնը և քահանաների իշխանութիւնը քրիստոնէական եկեղեցու մէջ աճեցաւ մանաւանդ, երբ որ Յիսուսի Քրիստոսի կրօնը այլ ևս հալածվում չէր, և նոյն իսկ կայսրներ և թագաւորներ սկսան խոստովանել նորան։ Այնուհետև շատացան և տօները, մինչ սկզբում կիւրակէն միայն սահմանուած էր մանաւանդ Աստուծոյ պաշտօնի համար։ Զատիկը և Հոգեգալուստը, երևում է, թէ եղած են առաջին տօնքը քրիստոնէական եկեղեցու. բայց շուտով սկսան տօնել և Յիսուսի Քրիստոսի ծննդեան տօնը և դորա հետ միասին տարեմուտքը։

Այսպէս Քրիստոս եղած է հիմնադիրը մեր հաւատի, բայց ոչ բոլոր, յետոյ յառաջացած եկեղեցական կարգերի, օրէնքների, պատուէրների և ուսմունքի։ Այս յետինքս յառաջացան, ինչպէս դոքա, միտ դնելով հանգամանքին, հարկաւոր կամ թէ հանգամանքից յաջողուած էին։ Աստուածեղէն ծագումն ունի Հա-

ւատը, բայց մարդկեղէն ծագմամբ յառաջացած են զանազան ե-
կեղեցիների կարգերը: Անփոփոխ մնացել է ուսումը Յիսուսի Քը-
րիստոսի. Նա Առաքեալների ձեռով գրաւորապէս աւանդուած
է մեզ, և Փրկչի խօսքերը գրուած են Աւետարանիչների կամ թէ
Քրիստոսի վարքագիրների ձեռով: Բայց Եկեղեցին դարերի ըն-
թացքում շատ անգամ փոխել է իւր կերպարանքը, իւր կարգը
և վարդապետական սկզբունքը: Քրիստոնեայ ենք մեք ամենե-
քեանքս, որ հաւատումենք Քրիստոս, նորա անունով մկրտուած
ենք և յոյս ունինք գալ առ Աստուած, ապրելով նորա ուսմանը
համաձայն, առնելով կամքը մեր երկնաւոր Հօր երկնքում, որ մեզ
յայտնել է Յիսուս Քրիստոս: Բայց ոչ ամենայն քրիստոնեայք
պատկանումեն մի և նոյն եկեղեցու. որովհետև նորա մէջ յառա-
ջացել են բաժիններ և հերձուածք, որ միմեանցից խտրվումեն
աստուածպաշտութեան ձևերով, արարողութեամբք և զանազան
միւս կարծիքներով: Ցաւելի է ասել, որ այդպիսի խտրումունք ե-
րևեցան արդէն Առաքեալների օրերում, երբ ոմանք կամէին լինել
պաւղոսեան, միւսերը ապաւղոսեան, և այլ միւսերը կեփասեան
(պետրոսեան): Դորա ընդդէմ ծանրութեամբ վեր կացաւ Պաւ-
ղոս առաքեալը ասելով. իսկ արդ ով է Պաւղոսը, կամ ով է Ա-
պաւղոսը. պաշտօնեայք են նոքա որոց ձեռով Դուք դարձել էք
հաւատացեալք: Ես տնկեցի, Ապաւղոսը ջուր տուեց, բայց Աստ-
ուած աճեցրեց. մի այլ հիմք ոչ ոք կարող չէ դնել, քան թէ դը-
րածն է, որ է Յիսուս Քրիստոս: (1. Կորնթ. 3, 5—11.)—
Բայց մարդիկ մնումեն մարդիկ. պատահականի վերայ շատ ան-
գամ մոռացուեցաւ հարկաւորը, զգեստի վերայ շատ անգամ մար-
մինը, եկեղեցու վերայ սուրբ հաւատը և հաւատի սուրբ պտուղը,
Սէրը: Մինչև այժմ իսկ է միայն մի քրիստոնէական կրօն, բայց
կան շատ, քրիստոնեայ եկեղեցիք: Բայց բոլորեքեան, ինչ եկե-
ղեցում ևս աղօթէին դոքա, եթէ խոստովանումեն Յիսուս Քը-
րիստոսը ոչ լոկ շրթամբք, այլև սրտով, այսինքն, եթէ նոքա Քը-
րիստոսի հոգով ընթանումեն և գործումեն, քրիստոնեայ են:
Եւ արդէն Պետրոս առաքեալը ասել է թէ հրէաների և թէ հե-
թանոսների մասին. Ես ճշմարտութեամբ վերահասու եմ եղած,
որ ոչինչ ակնառութիւն (երեսպաշտութիւն) չկայ Աստուծոյ ա-
ռաջև. այլ ամենայն ազգերի մէջ ով որ երկնչումէ Նորանից և
գործումէ արդարութիւն, ընդունելի է նորան: (Գործք Առաքե-

լոց. 10, 34, 35.) Եւ մեզ համարձակ է հաւատալ, որ Աստուած ակնառու չէ անձին, նոցա մէջ, որ ամենքեան մկրտուած են Քրիստոսի անունով, այլ իւրաքանչիւր եկեղեցում ով որ նորանից երկնչումէ և գործումէ արդարութիւն, նա է նորան ընդունելի։

Ուրեմն մի էական տարբերութիւն կայ կրօնի կամ քրիստոսեան ուսման և քրիստոսեան հաւատի, մի կողմից, և եկեղեցու մէջ միւս կողմից։ Կրօնը ինքն բանն է, մեր սրտի յարաբերութիւնը առ Աստուած. եկեղեցին է արտաքինը, համաձայնութիւնը, հաղորդակցութիւնը համամիտ քրիստոնեաների ընդունելու և գործադրելու հաւատը և պաշտելու Աստուած ամենայն յարաբերութեամբք որ դա ունէր դէպ ի մարդկային ազգը երկրիս վերայ։ Կրօնը է անտեսանելին, իսկ Եկեղեցին է դորա երկրաւոր զգեստը։

Բայց, թէպէտև Յիսուսի Քրիստոսի կրօնը աւելի կարևոր է աշխարհի ու յաւիտենական կեանքի համար, քան թէ եկեղեցին իւր սահմանադրութեամբք և արարողութեամբք կամ թէ դաւանաբանութեամբ. այնու ամենայնիւ եկեղեցին մնումէ քրիստոնէի համար մի արժանամեծար հիմնարկութիւն, մի հարկաւորութիւն։ Ինչպէս մարդս բաղկանումէ հոգուց և մարմնից և նա կարօտ է նիւթականին իբրև գործի կամ նեցուկ հոգու համար. սոյնպէս կրօն ու եկեղեցի բաղկացնումեն մի ամբողջութիւն, և շատ մօտ միմեանց հետ կապակից բաներ, որ արդարև առանց վտանգի կարելի չէ բաժանել մինը միւսից։ Եթէ կրօնը գրաւումէ իմ հոգին, ցոյց տալով ինձ թէ ինչպէս դա պիտի երևելի կացուցանէր իւր անձը զգալի աշխարհում և ներգործէր նորա մէջ բարի բաներ, նոյնպէս եկեղեցին գրաւումէ իմ երկրաւոր գոյութիւնս, ցոյց տալով թէ ինչպէս դա պիտի բարձրանար դէպ ի յաւիտենականը և աստուածեղէնը, և պիտի օգնական ու ձեռնտու լինէր հոգեղէնին իմ մէջ։

Մի մոլորութիւն է, եթէ քրիստոնեայք, ինչ հաւատական բաժնից ևս լինէին, կամէին ասել. ինձ պիտոյ չէ եկեղեցի. ինձ պիտոյ չեն նորա կարգերը, պատուէրները և արարողութիւնքը։ Ես առանց դոցա ևս կարող եմ բարի քրիստոնեայ լինել և երանութիւն գտանել։

Բարեկամ, ես կամէի ասել այդպիսուն, բոլոր միլիոնաւոր մարդերից, որ ապրումեն աշխարհի վերայ և ապրել են հազարա-

ւոր տարիներ յառաջ, դո՞ւ ես այն միակ մահկանացուն, որ իւր սիրտը դէպ ի վեր ուղղելու համար, կարօտ չէր ոչինչ զգալի տպաւորութեան և օգնականութեան։ Դո՞ւ ես այն միակ մարդը, որոյ յիշողութիւնը կարօտ չէր ոչինչ ուշաբերութեան և զգաստացուցման։ Դո՞ւ ես այն մի հատ մարդը, որ ամենայն օր և ամենայն ժամ հաւատարապէս յօժարամիտ էր դէպ ի երկիւղած խորհուրդներ, դէպ ի յաղթահարութիւն իւր անձին, երբ որ զարթնումէին ախտերը, դէպ ի կատարելագործութիւն ամենայն լաւ բանի մէջ, երբ որ հազարաւոր փոքրիկ փորձանք դէպ ի չարը պաշարումէին և հրապուրումէին քեզ։ — Ոչ, ոչ։ Այդ քո հպարտութիւնը ապացուցանումէ արդէն, որ դու ոչ այն բարին և ամուրն ես, որ դու երևակայումես քեզ թէ էիր, և ոչ իսկ կարող ես առանց արտաքին ազդեցութիւնների քո սիրտը պահել այն վերուղղութեան մէջ, որ դու ինքդ քեզանից պահանջումես։ Հոգին յօժար է, բայց մարմինը տկար։

Կրօնը և եկեղեցին կանգնած են միաւորուած, ներքին մարդը ազնուացնելու համար։ Ոչ թէ եկեղեցին է պարգևում երանութիւն, այլ սուրբ, պտղաբեր հաւատը. բայց եկեղեցին է հաւատի գաւազանը և նեցուկը այս երկրաւոր աշխարհի մէջ։

Եւ Յիսուս Քրիստոսը, երբ որ այս սուրբ հաւատը տալիս էր աշխարհին, շատ լաւ գիտէր այս բանը։ Նա տեղեակ էր մարդկային ազգի տկարութիւններին և թէ այո՛ նոյն իսկ շատ իմաստունին ժողովրդի մէջ հարկաւոր էին այս և այն տեսանելի նկարագիրքը անտեսանելուն, այս և այն յիշեցուցիչ նշանակները և զարթուցիչ հնարները։ Ո՞չ ապաքէն այս խորհրդով նա ինքն կարգել է մկրտութիւնը, այս արտաքին նշանակաւոր գործողութիւնը նոցա համար, որ կամենումեն նուիրել իւրեանց անձը նորա ուսման խոստովանութեանը, նորա առաքինի, մարդկութեանը երանութիւն պարգևող վարքի հետևողութեանը։ Դոքա, ինչպէս որ ջուրը արտաքուստ (դուրսից) մաքրումէ մկրտութեան մէջ, պիտի վկայեն, որ նորա խօսքով իւրեանց սիրտը կամէին մաքրել ամենայն մեղաւոր ցանկութիւնների ապականութենից։ Այս ներքին սրբագործութիւնը էր էականը, արտաքին լուացումը էր մի նշանաւոր վկայութիւն, մի արտաքին նուիրանք խոստովանողների հասարակութեան մէջ, բայց ոչ արդէն նոյն իսկ հնազանդութիւնը և լուսաւորութիւնը սրտի։

Որպէս քնքուշ սիրով Յիսուս Քրիստոսը սիրել է իւր աշակերտները, որպէս քնքուշ սիրով սիրուած է նա իւր աշակերտներից դարձեալ: Արդարև նա գիտէր նոցա սրտերը, որ ինքը դաստիարակել էր. նա գիտէր արդարև նոցա հոգին: Այնու ամենայնիւ նա երբէք աւելորդ չհամարեց տալ նոցա և զգալի օգնական հնարներ, որպէս զի նոքա, երբ որ ինքը այլ ևս լինելու չէր նոցա մէջ, յաճախ միտ բերէին նորան, յիշէին յաճախ նորա ուսումունքը և ինքեանք իւրեանց մէջ, որպէս և բոլոր միւսերը, եղբայրօրէն իբրև նորա հաւատարիմ բարեկամք և մասնակիցք Աստուծոյ արքայութեան, ճանաչէին իւրեանց անձը: Այդ պատճառով ահա սահմանադրեց նա սուրբ ընթրիքը (սուրբ երեկոյեան սեղանը) և հրամայեց Աշակերտներին պահպանել դորան: Այս հացը իմ մարմինս է, այս գինին իմ արիւնս է, խօսեց նա: Դուք ճաշակելով դորան, խոստովանեցէք, որ Դուք ամենեքին մի էք իմ հետ, որ ես Ձեր մէջ եմ, որ Դուք իմ հետ ամենամօտ կերպով հաղորդակից էք դէպ ի Աստուած, Հայրն մեր:

Մկրտութեամբ և սուրբ ընթրիքով միանգամայն հիմնուած էր տեսանելի եկեղեցին, մի ցոլացումն որով ամենասուրբը պատկերացել է երկրաւորի մէջ:

Եթէ յետոյ և այլ միւս ծէսք և արարողութիւնք, սպասուէլք և գործողութիւնք յաւելացան, միտ դնելով մարդերի և հանգամանքի փոփոխութեանը և պահանջողութեանը. սակայն այդ բոլորը ոչինչ այլ խորհուրդ չունին, քան թէ յաջողեցնելու սրտի սրբագործութիւնը Յիսուսով Քրիստոսով. դոքա բոլորեքեան իւրեանց խորին հնութեամբ դարձել են պատուելի և մեծարելի: Եթէ յետոյ ժամանակում և ուսուցիչների թիւը, նոցա անուանակոչութիւնքը, նոցա պաշտօնքը, նոցա իշխանութիւնը, նոյն իսկ առաւելութիւնը մինի միւսից, աստիճանով, բազմացան. բայց դա հարկաւորապէս պիտի լինէր, երբ որ քրիստոնէական հասարակութիւնների թիւը աւելի մեծացաւ. դա պիտի լինէր, ամեն մի մասնաւորի ծախքը, կարգը և կատարելութիւնը իւր գործի մէջ յառաջ տանելու: Քանի որ մի փոքրաթիւ գերդաստան ապրումէ միասին, հարկաւոր չէ նորա վերայ թագաւոր. տանուտէրը միայն կարող էր կառավարել ամենայն բան, որ պատկանումէր արտաքին սաստին և կարգին: Բայց երբ որ շատ գերդաստաններ, երբ ամբողջ ազգեր մտանումեն մօտ յարակցութիւն միմեանց հետ,

այնուհետև գործերի հետ միասին պիտի բազմանան և առաջնորդները և որոշ որոշ մեծաւորների վերայ — և որ դոքա ամենքեան հաւասար կերպով ընթանային և իւրեանց պարտականութիւնքը լցուցանէին — պիտի կարգուէին և՛ս աւելի բարձր առաջնորդներ։ Բայց թէ Առաջնորդներին, իբրև ոգւի վերայ եղած օրէնքի գործադրողներին, իբրև հասարակաց կամքի ծանուցարարներին պիտի ցուցանուէր պատիւ և մեծարանք — այդ դրած է իրերի բնական կարգի մէջ։ Վերջապէս որ մի աստիճանակարգ եկեղեցու զանազան պաշտօնեաների մէջ սահմանուած է, ինչպէս ազգերի աշխարհական կեանքի մէջ սովոր է լինել, այդ անհրաժարելի էր։ Թող այդ աւելի մի աշխարհական բան. բայց նոյն ինքն եկեղեցին է երկրաւոր կերպարանը կրօնի, և մանաւանդ մարդկային բնութեան երկրաւոր պիտոյքի, և այդպէս միայն նորա անմահ հոգու համար ներկայ է։

Թէպէտ և քրիստոնէական եկեղեցու աւելի յետագայ օրերում խոտորուած են առաջին ժամանակների պարզութենից. բայց մի՞թէ նոյն իսկ մարդիկ առհասարակ չեն կորուսել շատ բան իւրեանց առաջին պարզութենից։ Ո՞չ ապաքէն բազմացել են ամենայն պիտոյքը, կատարելագործած են և նոր ուղղութիւնք են ստացել բոլոր ճարտարութիւնքը, գիտերը և քաղաքական որպիսութիւնքը։ Արդեօք եկեղեցին, որ մարդու համար է, չպիտի՞ շատ կամ սակաւ ստանայ իւր ժամանակի կերպարանքը, որ ներգործէ մարդու վերայ, որ, իբրև գի, ամենայն հանգամանքի մէջ ազգակից և մերձաւոր մնայ նորան։ Թո՛ղ ճշմարիտ լինի, որ սեղանի սպասաւորքը շատ անգամ, այլանդակուած ու փայրենացած ժամանակներում, մոռացել են իւրեանց սեփական կոչումը և արժանաւորութիւնը. որ նոքա ծառայել են իւրեանց ախտերին, կամեցել են յագուրդ տալ իւրեանց չափազանց փառասիրութեանը, պատուասիրութեանը և գահասիրութեանը, ոյպէս և դէպ ի չարն են գործ դրել ժողովրդի պատիւ ու մեծարանքը. բայց ինչ որ ինքն ըստ ինքեան վատ ու դատապարտելի է, կարող չէր ոգւի վերայ մնալ. դա կործանուեցաւ բոլորովին կամ թէ ըստ մասին։ Ամենայն անարժան բան և յետոյ ոգւի վերայ մնալու չէ. դա և յետոյ կը կործանուի, երբ որ մարդերի մեծագոյն մասը կը զօրանայ մտքով և վերահասու կը լինի դորան, որ կարողանայ արհամարհել դորան։ Բայց ինչ որ մեղաւոր մարդիկ մեղանչել են, կարելի չէ եկեղեցու վերայ դնել։ Նորա խորհուրդը մնում է սուրբ և նորա

հնարները անմեղ: Ո՞չ ապաքէն հրէական եկեղեցին խոտորուած էր իւր սկզբնական պարզութենից և Երուսաղէմի տաճարը նորա սպասաւորների ձեռով շատ ու շատ պղծուած: Ընդ ամենայնիւ Քրիստոս իւր աշակերտներով յաճախում էր դէպ ի այդ տաճարը: Նա աղօթում էր այդ տեղ, նա ուսուցանում էր այդ տեղ: Նա տօնում էր տօնական օրերը միւսերի հետ, ինչպէս մովսիսական օրէնքը պատուիրել էր դորանց. նա չկամէր միանգամ ներս բերած եկեղեցական կարգերը շփոթուած անսանել և ոչ իսկ ինքը լուծանել դորանց: Նա գիտէր մարդերի առաւել մեծ մասը, գիտէր, որ դոքա նիւթականով միայն կարող էին առաջնորդուիլ դէպ ի իմանալին, արտաքին սաստով դէպ ի ներքին կարգը և եկեղեցու ձեռնածութեամբ դէպ ի կրօնասիրութիւն:

Բայց միւս կողմից երբէք հարկաւոր չէ անտես առնել այն մեծակշիռ տարբերութիւնը կրօնի և եկեղեցու մէջ. մեզ արժան չէ մոռանալ, որ Յիսուսի Քրիստոսի կրօնը գլխաւոր բանն է: Օրէնքը տուած է Մովսէսի ձեռով, բայց շնորհք և ճշմարտութիւն Յիսուսի Քրիստոսի ձեռով է եղած: Ինչ որ Յիսուսի և նորա աշակերտների ժամանակում Տիրոջ շատ խոստովանողների համար էր տակաւին մովսիսական օրէնքը. այդ բանը այս և այն մասով դարձել է մեր համար եկեղեցին: Եւ նա սահմանադրել է տօնի օրեր, զոհեր, հանդիսաւորութիւնք, սուրբ գործողութիւնք և աստուածպաշտական արարողութիւնք: Բայց սոցա մէջ չէ բովանդակուած նոյն ինքը կրօնը: Եւ սպանողք խաչակնքում էին իւրեանց երեսը, և պոռնիկներ երթում էին դէպ ի Տիրոջ սեղանը: Եւ գողեր դնում էին իւրեանց նուէրքը սեղանի վերայ, և խաբեբայ վաշխառուք ձգում էին իւրեանց լուման աղքատների գանձանակի մէջ: Եւ կեղծաւորներ երթում էին լսելու Աստուծոյ բանը, և ժամերգութիւնքը, և պատուամոլներ, ագահներ և կռուասէրներ խոնարհեցնում էին իւրեանց ծունկը աղօթելով տաճարի մէջ: Մի՞թէ դոքա, ըստ որում ճշդութեամբ լցուցանում էին բոլոր եկեղեցական հրամանները, աղօթքները անգիր գիտեն, յոյս ունին Քրիստոսի փրկագործութեան կամ թէ սուրբերի բարեխօսութեան վերայ, հաւատում են քաւարան, կամ թէ շնորհի ընտրութիւն, ուխտ են գնում, կամ թէ եկեղեցիներում իւրեանց համար աղօթել են տալիս — մի՞թէ դոքա իւրեանց բոլոր արարներով Յիսուսի Քրիստոսի հետևողք էին, կամ թէ Աստուծոյ արքայութեան

մանակիցք: — Ո՞վ կը համարձակուէր պնդել մի այդպիսի զարհուրելի բան:

Բոլոր պահեցողութիւնը եկեղեցական կարգերի և սուրբ արարողութիւնների, այն առ ի ցոյց բարեգործութիւնը, որ կարծումէ թէ աղօթքով, պահքով, եկեղեցական խորհուրդների լցուցմամբ և այդպիսի բաներով կարող էր աւարտել իւր քրիստոնէական պարտականութիւնքը, մի ունայն և անօգուտ բան է մեր երանութեան համար, եթէ դա չէ զարթուցանում մեր մէջ մի աստուածեղէն, մարդասիրական, դէպ ի ամենայն բարի և երանաւէտ բանիր ձըգտող հոգի և սիրտ: Վասն զի աստուածսիրութիւն և մարդասիրութիւն է հաւատի պտուղը: «Գործանով ամենայն մարդ կը ճանաչէ Ձեզ», ասել է Ինքը Յիսուսը, «որ Դուք իմ աշակերտ էք, եթէ Դուք կը սիրէք միմեանց: Բայց Դուք պիտի սիրէք Ձեր ընկերը իբրև Ձեր անձը: Ոչ նոքա, որ ասումեն, Տէր, Տէր, կը մտանեն իմ արքայութեան մէջ, այլ նոքա որ լցուցանումեն կամքը իմ հօրս երկնքում: Նոցա պտուղներից կը ճանաչէք նորանց: Հաւատը, որ չունի գործեր, մեռած է»: Ի՞նչ օգուտ, սիրելի եղբայրներ, եթէ մինը ասէր, թէ ունի հաւատք, բայց գործեր չունի: Միթէ հաւատը միայն կարող է ապրեցնել: (Յակով. 2, 14—17.)

Եւ եթէ ես մարդերի և հրեշտակների լեզուով խօսէի, բայց սէր չունէի, ապա լինելու էի մի պղինձ որ հնչումէ, մի ծնծղայ որ զնկզնկումէ: Եւ եթէ ունենայի մարգարէութեան շնորհ և ամենայն ծածուկ բաներին տեղեակ լինէի և ունենայի ամենայն հաւատ, այնպէս որ կարող էի սարեր իւրեանց տեղից փոխել, բայց սէր չունենայի, ապա ոչինչ եմ: Եւ եթէ իմ բոլոր գոյքը և ստացուածքը բաժանէի աղքատներին, և տայի իմ անձը այրելու, բայց չունենայի սէր, ապա անօգուտ էր ինձ այդ բոլորը (1. Կորնթ. 13. 11—3.): Ուրեմն թող և մեք ամենքեանքս ձգտէինք դէպ ի այս գեղեցիկ քրիստոնէական նպատակը:

Ս. Նազարեանց:

ՎԵՐՋԱՐԱՆ ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼԻ.

ԿԱՍԱՆԴՐԱ. 1)

(Շիլլերի փոքրիկ բանաստեղծութիւններից.)

Խնդութիւն էր Տրովադայի դահլիճներում,
Մինչ տակաւին բարձր բերդը խոնարհուած չէր.
Ուրախութեան տաղերգութիւնք են ձայնարկում,
Նուագարանի թրթռալով ոսկի լարեր։
Դադարում են և վաստակած ձեռք ամենայն
Այն մարդակեր պատերազմից արտասուելի,
Որովհետև քաջ Աքիլլէս Պելէոսեան
Հարսն է խնդրում սիրուն դուստրը Պրիամոսի։

Եւ զարդարուած սաղարթներով դափնի ծառի
Տօնախմբող հեղեղվում է բազմութիւնը
Նուիրական դէպ ի տաճարս աստուածների,
Դէպ ի Թիւմբրեան Ապողոնի սուրբ սեղանը։
Աղօտաձայն շառաչելով փողոցներում
Թաւալվում է խառնաշփոթ մի ցնծութիւն,
Եւ բաց ու թող այն տեղ արած իւր ցաւերում
Կար մի հատ սիրտ, խոր խոցերով լի և զեղուն։

Անմխիթար, ուրախութեան լիութենում,
Լուռ, միայնակ թափառում էր անօգնական,
Այդ Կասանդրա Ապողոնի դափնանտառում,
Ծառաստանի դէպ ի խորքը փախստական։
Եւ տեսանող այդ կնամարդ բարկանալով
Առաւ, ձգեց գլխի փաթեթ իւր քրմական,

---

1) Կասանդրա, այլև Ալէքսանդրա, էր տրովադեան թագաւոր Պրիամոսի և նորա կնոջ Հեկուբայի դուստրը։ Դա քրմուհի էր Ապողոնի տաճարում և մարգարէ կամ գուշակող (տեսանող) կնամարդ. բայց որովհետև չկամեցաւ Ապողոնի ցանկութեան կամքը կատարել, Ապողոնը անէծք դրեց նորա գուշակութիւնների վերայ, որ դոքա ոչինչ հաւատ չգտանեն ժողովրդի մէջ։ Տրովադայի տիրապետութեան միջոցին, Այաքս անուն յոյնը պղծեց նորան, և յետոյ վիճակուեցաւ նա Միւկենացոց թագաւոր Ագամեմնոնին իբրև գերի աղջիկ։ Բայց երբ որ նոքա հասած էին Միւկենէ, երկուքն ևս սպանուեցան Ագամեմնոնի անզգամ կնոջ, Կլիւտեմնեստրայի սիրողից, Այգիստոսի ձեռով։

Եւ իւր սրտի այրող ցաւեր դուրս թափելով
Հրատարակեց այսպիսի բանք խորհրդական.

«Ամէն սրտեր ուրախութեան ընդունակ են,
Ամէն սրտեր ուրախութեամբ բաղդաւորուած,
Եւ ծեր ծնողքս քաղցր յուսով յուսացած են,
Եւ իմ քոյրը շողշողում է հարսնազգեստուած։
Ես միայնակ պիտի սգամ արտասուելով.
Պատճառ, ինձ՚նից բաց է փախչում քաղցր պատրանք,
Եւ թև առած, մեր քաղաքին մօտենալով
Տեսանում եմ ահա կորուստ մի անփրկանք»։

«Այո՛ մի ջահ տեսանում եմ բորբոքուելով,
Բայց ոչ ձեռնում այն Հիմենեան պատանեկի.
Դորա ծուխը դէպ ի ամպեր վերանալով
Տեսանում եմ, բայց ոչ իբրև այրեացք զոհի։
Տեսանում եմ պատրաստուելով ուրախ տօներ,
Բայց գուշակող իմ հոգու մէջ լսում եմ ես
Այն աստուածոյ սպառնալից քայլափոխեր,
Որ այդ տօներ կործանում է աւաղապէս»։

«Եւ այդ մարդիկ հայհոյում են իմ ողբ ու լաց,
Արհամարհում ցաւ և կսկիծ ճնշուած սրտիս.
Դէպ անապատ պիտի տանեմ, առանձնացած,
Իմ տանջուած սիրտ, իմ վիրաւոր, անյոյս հոգիս.
Բաղդաւորից ես մերժուած եմ. խնդացողին
Դարձայ ես խաղ և նշաւակ ծիծաղելի.
Ծա՜նր վիճակ որոշեցիր Դու ինձ բաժին,
Ո՛վ դու Պիւթեան, դու չա՛ր աստուած, զարհուրելի»։

«Քո պատգամը քարոզելու, է՞ր ձգեցիր
Դու ինձ քաղաք այս յաւիտեա՛ն, մի՛շտ կոյրերի,
Իմ աչքը բաց, հոգիս արթուն և կամքս ժիր,
Մարդերի մէջ, անմտութեամբ ապրողների։
Է՞ր տուեցիր ինձ տեսութիւն ապագայի,
Որ չեմ կարող դարձուցանել ոչինչ կերպով.
Ճակատ՚գիրը այսօր էգուց պիտի լցուի,
Զարհուրելին մօտենում է շտապ քայլերով»։

«Ի՞նչ օգուտ է վերացնել քօղ թագնութեան,
Երբ մօտահաս է սոսկալի ձախորդութիւն.
Մարդուս կեանքը մոլորութիւն է լոկ, միայն,
Եւ մեռուցիչ մահ է նորան գիտակցութիւն։
Վե՛ր կալ, վե՛ր կալ պայծառութիւն այն տրտմական
Եւ իմ աչքից այն արիւնոտ, խիստ երևոյթ.

Մի ահաւոր պաշտօն է քո ճշմարտութեան
Մահկանացու և հողեղէն լինել անօթ»։

«Իմ կուրութիւն տուր ինձ դարձեալ, ով դու Պիւթեան,
Եւ դորա հետ իմ խնդամիտ մութլ հոգի.
Երբէք տաղեր չերգեցի ես ուրախութեան,
Քանի որ ես ձայն բարբառող եմ քո կամքի.
Դու ապագայք տուեցիր ինձ, գալոց օրեր,
Բայց խլեցիր դու ինձանից րոպէն ներկայ,
Դու խլեցիր կեանքի մին մին զուարճ ժամեր—
Քո սուտ պարգև, միայն ցաւեր, վե՛ր կալ ահա»։

«Ա՛րդ ու ծաղիկ, հարսնական զարդ կոյս հասակի,
Երբէք մազերս անուշահոտ չպսակեցին,
Քանի որ ես պաշտօնեայ եմ քո օրէնքի
Եւ ուխտաւոր այն տրտմական քո սեղանին։
Իմ մանկութիւնս արտասուք էր և լաց միայն,
Բաց ի ցաւից ես ոչինչ բան չգիտէի.
Իմ մերձաւոր ընկերների վիշտ ամենայն
Փափուկ սրտիս էր հանապազ խոց զգալի»։

«Իմ խաղընկերք տեսանումեմ զուարթերես,
Ամենայն բան չորս կողմումս կեանք ու սէր է,
Իւր մանկութիւն վայելելով երանապէս,
Միայն իմ սիրտ տրտմութենից պղտորուած է։
Ջո՛ւր, անօգուտ ծաղկումէ ինձ դալար գարուն,
Նորափետուր զարդարելով դաշտ ու ձորեր.
Զուարախացաւ կեանքի վերայ մահկանացուն
Որ սուր աչքով զննեց նորա ծածուկ խորքեր»։

«Երջանիկ եմ ես քարոզում Պօլիւքսենին 1)
Սիրող սրտի արբեցութեան ըղձալանքում,
Որովհետև Հելլենացոց քաջ տղամարդին
Նա յոյս ունի գրկել իւրեան հարսնարանում.
Նորա կուրծքը ճոխանումէ վեհ պարծանքով,
Իւր վայելքին հաւիւ տանել նա կարող է,
Եւ ոչ իսկ Ձեզ, երկնաւորներ, վերին փառքով,
Երազի մէջ Պօլիւքսենէ նախանձում չէ»։

«Երբ ես տեսայ այն տղամարդ հելլենական,
Որ ընտրումէ սիրտ ամենայն փափագելով,

---

1) Այս Պօլիւքսենէն էր Կասանդրայի քոյրը որ պիտի հարսնանար Աքիլլէսին. բայց Պարիս եղբայրը Կասանդրայի սպանում նորան Ապողոնի տաճարի մէջ, պսակման միջոցին։

Նորա սիրուն, կարօտ հայեացք աղերսական,
Հոգեզմայլուած վառուն սիրոյ քաղցր ախտով։
Յօժար էի ամուսնակցի հետ կցորդուած,
Դառնալ դէպ ի մեր ընտանի բնակարան,
Բայց մի տխուր ստուեր Ստիւքսեան գիշերամած
Ներս է մտ՚նում՝ նորա, իմ մէջ խտրոց, բաժանս։

«Իւր գունաթափ ուղարկումէ կերպարաններ
Ինձ ուղեկիցք, Պրոսերպինա տարտարոսեան.
Ուր և իմ՝ դէմք ես շրջումեմ, ուր իմ՝ քայլեր,
Տեսանումեմ ինձ այդ հոգիք դէմ՝ յանդիման։
Իմ՝ մանկական զուարճ խաղերի վայելչութիւն
Պղտորումէն տգեղ տեսիլք այդ գարշելի,
Մի դժոխային, զարհուրելի՝ խառնակութիւն»։

«Այս սպանութեան սուր պողպատը տեսանումեմ
Փայլփլելով, և սպանողի աչքը վառուած.
Ոչ դէպ ի աջ, ոչ դէպ ի ձախ ես կարող եմ
Շեղել, թեքել իմ՝ ահաւոր տխուր կատարած։
Չէ համարձակ դարձուցանել ինձ իմ՝ երես,
Եւ գիտութեամբ և նկատմամբ, անթարթ աչքով
Պիտի լինիմ՝ գլխիս անցքին ականատես,
Օտար երկրում՝ սրակոտոր վերջանալով»։

Մինչ տակաւին հնչումէն բանք Կասանդրայի, —
Մի խառնաշփոթ հասանումէ ձայն հեռուից,
Դրան ներսից Ապողոնեան սրբարանի,
Եւ մեծ զաւակ Թետիդայի 1) մեռ՚նումէ սրից։
Այնուհետև չար Էրիդա 2) ցնցումէ իւր տգեղ օձեր,
Բոլոր աստուածք ցիր են լինում և փախստեայ,
Եւ որոտուն հաւաքվումէն սև սև թուղպեր
Ցած կախուելով Իլիոնի գլխի վերայ։

1) Աքիլլէս, որդին Պեղէոսի և Թետիդայի։

2) Աստուածուհին երկպառակութեան։

Ս. Նազարեանց.

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Այս օրերումս Մոսկուայում տպագրութեամբ լոյս աշխարհ տեսաւ մի հաւաքածոյ բանաստեղծական գրուածների, մակագրութեամբս «Լեռնի վիշտը, ժամանակակից վէպ.ք, չորս գլուխ բաժանած և զանազան բանաստեղծութիւններ», գործ Սմբատ Շահազիզեանի: Հիւսիսափայլի պատուելի ընթերցողքը արդէն փոքր ի շատէ ծանօթ են պարոն Շահազիզեանի բանաստեղծական մուզային, այդ օրագրի մէջ զանազան ժամանակներում հըրատարակած հատուածներից: Այժմ հանդիսանումէ մեր առաջև մի ամբողջ շարք բանաստեղծական գրուածների որ, եթէ դուրս հանենք դոցա միջից զանազան փոքրիկ տաղաչափութիւնք Սիրոյ, Մանկութեան, Բնութեան գեղեցիկ տեսարանների և այլ փոքրիկ նիւթերի վերայ, բոլորը նուիրած են հայրենասիրական զգացմունքի, խորհրդածութիւնների և նկատողութիւնների: Ազնիւ հոգին Հայաստանի եւրոպական կրթութեան լուսով պայծառացած, հասկանալով և զգալով իւր մէջ մարդկային կեանքի ականաւոր բարիքը, բարոյական և մտաւոր կրթութիւն, լոյս և ճշմարտութիւն, իրաւունք և ազատութիւն — ազնիւ հոգին Հայաստանի կերպարանք առած և թանձրացած իբրև մի անձնաւորութիւն, մի ստոյգ հայկազն պատանի Լեռն անուն, ուղևորվումէ Մոսկուայից դէպ ի իւր հայրենի աշխարհը Հայաստան: Ճանապարհորդելով հիւսիսային սահմանից դէպ ի Կովկաս, հոգիացած մի ազնիւ և բորբոք հայրենասիրութեամբ, նա լսումէ և տեսանումէ այս տեղ ու այն տեղ իրողութիւններ, գտանումէ մի ազգային վիճակ, մի կարգ ուսման և դաստիարակութեան, որ վայրացնումեն նորա հոգին, դղրդումեն նորա սրտի հիմքը և խլումեն նորա բերանից երբեմն շանթարձակ խօսքեր մի արդար բարկութեան, իսկ երբեմն ցաւալից սրտի քնքուշ կարեկցութեան մեղմ ձայներ: Նա գտանումէ Հայաստանի հողի վերայ, իւր քաղցր սիրով սիրած հայրենիքում, աւերակներ աւերակների վերայ, տխուր յիշատակարանք անցած օրերի մեծութեան, հոյակապ տեսարաններ, բնութեան, գեղեցիկ ծաղկաւէտ դաշտեր ու ձորեր, կարկաչասահ ականակիտ աղբիւրներ ու վտակներ, բայց մարդկութիւնը ամենևին ցամաքած ու գօսացած, աղքատութեան, տգիտութեան և հոգեղէն ու մարմնաւոր թշուառութեան մէջ խորասոյզ եղած: Ի զուր է Լեռնը այդ բոլոր թշուառութիւնների պատճառքը ընծայում Հայոց Կղերին, որպէս թէ Դոքա էին միայնակ թշուառացուցիչքը ազգի, իսկ ազգը ամենևին անպարտ էր. Նա մոռանումէ որ մի տգէտ և վայրենացած ժողովրդի կղերքը կարող չեն այլապէս լինել, քան թէ դոյն իսկ ժողովուրդը, ուստի առանց որ և իցէ կըրթութեան և դաստիարակութեան ընտրվումեն հոգևորի պաշտօնեայքը:

Ամենևին ուղիղ և ճշմարիտ ձայն է տալիս Լևոնը, ուժգին բարձրացնելով իւր բարբառը, թէ միակ ճանապարհը փրկութեան է ուսումն, դպրոց, բանագէտ վարժապետք, խելացի կրօնուսոյցք, ոչ հնամոլ ուսուցիչք Հայոց ճարտասանութեան, այլ նոր ժամանակի հոգուն և պէտքերին քաջ ուշադիր մարդիկ, որով միայն կարելի էր դարման տանել ազգային ցաւերին և մեր ընդհանուր հայկական թշուառութեանը, բուն արմատից սկսանելով ցաւագարուած ազգի բժշկագործութիւնը։ Մեք առ ի սրտէ ձայնակից ենք Լևոնին և բանաստեղծի գեղեցիկ ու առողջամիտ գաղափարներին։ Բայց թէ կա՞յ մեր ազգի մէջ մի հասարակութիւն, ազգային հոգաբարձուք, որ կամէին ուշադիր լինել այդպիսի ձայների, միաբան խորհրդով ու գործով իւրեանց ուսերը դնել այն մեծ բարոյական բեռի տակ, որ էր ճարտարութեամբ ստեղծանել և արիական կամքով գործ դնել այդ փրկաւէտ հնարները — այդ մասին ոչինչ լսում չենք Լևոնի բերանից։ Եւ ասիական մարդը բնութեան առատ բարերարութեամբք ոչ թէ բաղդաւորուած, այլ միայն պատժուած ու պատուհասուած, մինչև օրս ցոյց չէ տուել ոչինչ ընկերական վերանորոգութեան հոգի. Նորա կեանքը եղել է միշտ մի կրաւորական կեանք. վայելել միայն Պանդորայի ամենևին պատրաստ առատութեան շնորհը, այլ մի շնորհ որ մարդիկը և ազգերը ինքեանք պիտի պատրաստէին իւրեանց ինքնաշխատ, արարիչ և ճարտարապետական զօրութեամբ, իբրև ճշմարիտ որդիք Պրոմէթէոսի — այդ օտար է Ասիային։ Ասիական աշխարհում դարերը գալիս են ու գնումեն, մարդիկ երևումեն և չքանումեն միմեանց քամակից, բայց կեանքը միշտ և հանապազ մնումէ մի և նոյն, մարդկութիւնը մի և նոյն, անշարժ և անփոփոխ իւր կացութեան մէջ։ Այդ տեղ թագաւորուած է անշարժութեան և մշտնջենաւոր տղայութեան օրէնքը։

Բանաստեղծը վառուած, ամենևին հոգիացած իւր գեղեցիկ, հայակալ ազգասիրական գաղափարներով, մտածելով և զգալով իւր ազգի ամենալաւ օգուտը, ամենայն մասամբ լրացրել է իւր պարտականութիւնը, շատ տեղ հրեղէն լեզուով դուրս թափելով կուրծքից իւր ջերաջերմ զգացմունքի յորձանքը, իւր սրտի սուրբ և սրբազան ուխտերին և փափագներին ճարտար բացայայտութիւնք տալով։ Դոցա գործադրութիւնը, ինչպէս միշտ, նոյնպէս և այսօր, մնումէ հայկական մարդերի կեանքի գործ և վաստակ։ Աստուած տայ, որ այդ սուրբ հոգեզմայլութեամբ յափշտակուած բանաստեղծի բարբառը չլինէր դարձեալ ձայն բարբառոյ յանապատի, ինչպէս հազարաւոր այդպիսի ձայներ մինչև օրս անլսելի ցնդուած են հայկական կեանքի տրտում և անմխիթար անապատի մէջ։

Բանաստեղծի իդէաների և զգացմունքի արտայայտութիւնը այնպիսի հայկական անօթի և ձևերի մէջ, որպէս դրած են մեր առաջև, կարող ենք միայն գովել և շնորհակալ լինել նորան իւր գեղեցիկ նոր հայախօսութեան համար։ Միայն տեղ տեղ հաւան չենք նորա այս և այն ռուսական խօսքի ոճին, թէպէտ շատ հեշտ կարող ենք մեզ բացայայտել աղբիւրը այդ ցաւի, որ շատ ընդհանուր է մեր Հայերի մէջ, որ իւրեանց կրթութիւնը ստանա-

լով Ռուսաց դպրոցներում ռուսական խօսքով, ուրեմն և բուն հայերէն մտածել կարող չեն. նոյն իսկ օտար կեանքը, որոյ մէջ ծնանում է, սնանում և դաստիարակվում է Հայը, ունի այդ բանի վերայ մեծ ազդեցութիւն, և այլապէս անկարելի էր. մարդս ամենայն տեղ հետևանք է իւր շրջապատող ազդեցութիւնների, և Հայը մի կաթիլ ջուր է օտարութեան ովկիանոսի մէջ։ — Թող այս, բանաստեղծ հեղինակի իդէաների, մինից դէպ ի միւսը փոխանցութեան մէջ գտանումենք տեղ տեղ ոստիւնք, այնպէս որ վերջին տողերը առաջինների հետ դժուար էր միմեանց հետ բնականապէս կապակցել։ Լինում են և յաճախ կրկնութիւնք մի և նոյն բառի, տաղաչափական ոտքի պատճառով, որից կարող էր փախչել հեղինակը, գործ դնելով աւելի ճարտարութիւն։ Մեր ծանօթութիւնքը ամենևին ընդհանուր լինելով, աւելորդ ենք համարում հաստատել մեր ասածքը օրինակներով։ Ամենայն հաճութեամբ ծայրէ ծայր կարդալով պարոն Շահազիզեանի պատուական գործը, կամինք միայն փոքր ի շատէ հրատարակել այն քաղցր տպաւորութիւնքը որ դա արել է մեր վերայ — այդ գործը որ ոչ մի առողջամիտ հայրենասէր ընթերցող ձեռքից ցած դնելու չէր, առանց սիրտը շարժուելու նոյնպիսի տաք հայրենասիրական զգացմամբք, որ սկզբից մինչև վերջը փչում են Շահազիզեանի բանաստեղծական գրուածի մէջ։ Արտաքին պարագայքը տպագրութեան ամենևին գեղեցիկ են. տիպը պատուական, թուղթը գերազանց, բայց բաւական բազմաթիւ սխալներ ներս են մտել տպագրութեան մէջ, որոց վերայ ցաւումենք, ըստ որում ցանկալի կը լինէր մեզ մի այդպիսի գործ տպած տեսանել աւելի զգուշաւոր հոգաբարձութեամբ։ Գինը այդ աշխատութեան, միտ դնելով տպի և թղթի վայելչութեանը, այլև, որ գլխաւորն է, գործի ներքին արժանաւորութեանը և 248 երկոտասան ծալքով երեսի բովանդակութեան, շատ չափաւոր է, 1. ման. 35 կոպ. Մոսկուայի մէջ։ Այդ աշխատութեան ցանկացողքը ունին իւրեանց խնդիրը հասուցանել Մոսկուա այսպիսի հասցէով. Сумбату Симеоновичу Шахъ-Азизу. Въ Москву. Въ Лазаревскій Институтъ Восточныхъ Языковъ.

Մ. Նալբանդեանց.